ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ-2 *

Միջազգային գիտաժողով

ԾՐԱԳԻՐ

ՀՈՒՆԻՍԻ 13-15, 2023Թ.,
ԵՐԵՎԱՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ 24



THE SOVIET EXPERIENCE IN ARMENIA AND ITS LEGACY-2 *

International conference

PROGRAM

JUNE 13-15, 2023,
24 BAGHRAMYAN AVE, YEREVAN

INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY NAS RA
DEARBORN ARMENIAN RESEARCH CENTER
HAZARASHEN Armenian Center for Ethnological Studies Hazarashen
CALOUSTE GULBENKIAN FOUNDATION

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
/
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY NAS RA

ՄԻՉԻԳԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԻՐԲՈՐՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
/
ARMENIAN RESEARCH CENTER AT
THE UNIVERSITY OF MICHIGAN-DEARBORN

«ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
/
ARMENIAN CENTER FOR ETHNOLOGICAL STUDIES “HAZARASHEN”

INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY NAS RA | DEARBORN ARMENIAN RESEARCH CENTER | HAZARASHEN Armenian Center for Ethnological Studies Hazarashen | CALOUSTE GULBENKIAN FOUNDATION

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում գործող գիտահետազոտական հաստատություն է, որտեղ հետազոտություններ են կատարվում հնագիտության, մշակութային մարդաբանության, վիմագրության, բանագիտության, էթնոսոցիոլոգիայի, ֆիզիկական մարդաբանության և հնակենսաբանության բնագավառներում։

Ինստիտուտը ստեղծվել է 1959 թ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հնագիտական բաժնի և ազգագրության խմբի հիման վրա։ 1961 թ. Գրականության ինստիտուտից այստեղ է տեղափոխվել բանահյուսության բաժինը։ Ինստիտուտի գիտական ստորաբաժանումների հիմնական կառուցվածքը ձևավորվել է 1960-ական թվականներին։ 2007 թ.-ից զուգահեռաբար սկսել են ձևավորվել առանձին գիտահետազոտական խմբեր՝ ըստ հրնթացս առաջացած խնդիրների և հրատապության։ Ինստիտուտի գիտական գործունեության ոլորտում առանձնահատուկ տեղ ունեն հնագիտական, ազգագրական և բանագիտական դաշտային հետազոտությունները, որոնք տարվում են անընդմեջ՝ Հայաստանի նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության, Հայաստանում ընթացող արդիական գործընթացների, հայոց պատմության, մշակույթի ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը ձևավորելու և հարստացնելու նպատակով։

Հրատարակվել են «Հնագիտական պեղումները Հայաստանում» (25 հատոր), «Հայաստանի հնագիտական հուշարձանները» (22 հատոր), «Դիվան հայ վիմագրության» (10 հատոր), «Հայ ժողովրդական հեքիաթներ» (18 հատոր), «Հայ ազգագրություն և բանահյուսություն» (26 հատոր), «Հին Հայաստանի մշակույթը» (14 հատոր), «Հայ ժողովրդական մշակույթ» (15 հատոր), «Ազգագրական և բանահյուսական ժառանգություն» (2 հատոր), «Գիտական ժառանգություն» (5 հատոր), «Հիշողության ազգաբանություն» (8 հատոր), «Հայաստանի և Սփյուռքի էթնոսոցիոլոգիական հետազոտություններ» (14 հատոր), «Հաբիտուս. մարդաբանական և հնագիտական ուսումնասիրություններ» (2 հատոր), «Հնագի-

տության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ» (4 հատոր) մատենաշարերը, բազմաթիվ մենագրություններ, հազարավոր հոդվածներ հայկական և միջազգային հեղինակավոր հանդեսներում:

Ինստիտուտի հնագիտական բաժինների ուժերով պեղվել, ամրակայվել և զբոսաշրջային զարգացման ծրագրերին են ներկայացվել մի շարք կարևոր հուշարձաններ (Արենի, Ագարակ, Դաշտադեմ): Վերականգնվել և թանգարանացման համար նախապատրաստվել են հազարավոր մեծարժեք պեղածո նմուշներ:

Ինստիտուտի նախաձեռնությամբ կամ մասնակցությամբ իրականացվել են Հայաստանի մշակութային ժառանգության հանրահռչակման մեծածավալ միջոցառումներ, որոնց թվում հիշատակելի է ԱՄՆ-ի Սմիթսոնյան հաստատության հետ համատեղ «Հայաստան. տուն արարելը» խորագրով ծրագիրը, որը ներկայացվել է Վաշինգտոնի ամենամյա Ժողովրդական կենցաղի փառատոնում (Smithsonian Folklife Festival) (2018 թ.): Արցախի բռնազավթված տարածքում մշակութային արժեքների մշտադիտարկում իրականացնելու նպատակով հայաստանյան և միջազգային գործընկերների հետ ստեղծվել է եռալեզու https://monumentwatch.org/ ակադեմիական հարթակը (2020 թ.):

Իրականացվել են տարատեսակ կիրառական հետազոտություններ, որոնց հիման վրա տրամադրվել է մասնագիտական խորհրդատվություն ՀՀ կառավարությանը՝ մշակութային ժառանգության պահպանման և հանրահռչակման, կրթական համակարգի բարելավման, սփյուռքի, միգրացիոն գործընթացների և այլ խնդիրների վերաբերյալ:

INSTITUTE OF ARCHEOLOGY AND ETHNOGRAPHY NAS RA

The Institute of Archeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia is a scientific-research institution operating within the system of the National Academy of Sciences of Armenia, where studies are conducted in the fields of archaeology, cultural anthropology, lithology, philology, ethnosociology, physical anthropology, and paleobiology.

The Institute was founded in 1959 on the basis of the RA NAS Archaeological Department and ethnographic group. In 1961, the Institute of Literature's Department of Folklore was moved here. The basic structure of the Institute's scientific divisions was formed in the 1960s. Beginning in 2007, separate scientific research groups began to be formed according to needs and issues that arose. Archaeological, ethnographic, and scientific field research has a special place within the scope of the Institute's scientific activities, which are continuously carried out in order to form and enrich the basis of scientific sources of the study of the tangible and intangible cultural heritage of Armenia, current processes in Armenia, and Armenian history and culture.

The Institute has published titles such as "Archaeological Excavations in Armenia" (25 volumes), "Archaeological Monuments of Armenia" (22 volumes), "Divan of Armenian Lithography" (10 volumes), "Armenian Folk Tales" (18 volumes), "Armenian Ethnography and Folklore" (26 volumes), "Culture of Ancient Armenia" (14 volumes), "Armenian Folk Culture" (15 volumes), "Ethnographic and Folklore Heritage" (2 volumes), "Scientific Heritage" (5 volumes), "Ethnology of Memory" (8 volumes), "Ethnosociological Studies of Armenia and the Diaspora" (14 volumes), "Habitus: Anthropological and Archaeological Studies" (2 volumes), the series "Works of the Institute of Archeology and Ethnography" (4 volumes), as well as numerous monographs and thousands of articles in reputable Armenian and international journals.

A number of important monuments (Areni, Agarak, Dashtadem) were excavated, fortified and presented to tourism development programs

by the efforts of the Institute's archaeological departments. Thousands of valuable fossil specimens were restored and prepared for museumization.

By the initiative and participation of the Institute, large-scale promotional events on the cultural heritage of Armenia were implemented, among which was notably the "Armenia: Making a Home" program, presented at the annual Smithsonian Folklife Festival in 2018 in Washington, DC. In 2020, in order to monitor cultural heritage in the occupied territory of Artsakh, a trilingual online academic platform was created by Armenian and international partners: https://monumentwatch.org/.

Various applied research was carried out, on the basis of which professional advice was provided to the RA government regarding the preservation and promotion of cultural heritage, improvement of the educational system, and issues related to the diaspora, migration processes and more.

ՄԻՉԻԳԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԻՐԲՈՐՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Միչիգանի համալսարանի Դիրբորնի մասնաճյուղի Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնը հիմնադրվել է 1985թ.-ին՝ հայոց պատմության ու մշակույթի փաստագրման, ուսումնասիրության ու տարածման, ինչպես նաև այդ բնագավառներում նոր հրատարակություններին նպաստելու նպատակով: Կենտրոնի հիմնական առաքելությունն է հայոց պատմության, հայ հասարակության ու մշակույթի տարբեր ոլորտների ուսումնասիրություններին ու դրանց նվիրված հրատարակություններին աջակցելու միջոցով օգտակար լինել ուսանողներին, գիտական համայնքին ու հանրությանը ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ ԱՄՆ սահմաններից դուրս:

Կենտրոնի հատուկ հավաքածուն ընդգրկում է հայկական և հայությանն առնչվող թեմաներին նվիրված գրքեր, պարբերականներ, առանձնատիպեր, չհրատարակված ատենախոսություններ, միկրոֆիլմեր ու միկրոֆիշեր, տեսա-ձայնային նյութեր, ինչպես նաև բանավոր պատմություններ՝ անգլերեն, հայերեն, ֆրանսերեն, ռուսերեն, թուրքերեն ու մի շարք այլ լեզուներով:

Կենտրոնը հրատարակում է ինչպես գիտական, այնպես էլ բարձրորակ հանրամատչելի գրականություն: 2020թ.-ին Միչիգանի նահանգային համալսարանի հրատարակչության հետ համատեղ սկիզբ առավ Texts and Studies in Armenian History, Society and Culture մատենաշարը, որի շրջանակներում առաջինը հրատարակվեց Խաչիկ Մուրադյանի՝ The Resistance Network: The Armenian Genocide and Humanitarianism in Ottoman Syria, 1915-1918 գիտական մենագրությունը:

Կենտրոնում կազմակերպվել են հայագիտական գիտաժողովներ և ցուցահանդեսներ: Գիտական, հանրային դասախոսություններ կազմակերպելու նպատակով այն պարբերաբար Միչիգան է հրավիրում առաջատար հայագետների՝ իրենց ուսումնասիրությունները ներկայացնելու ուսանողներին, տեղի գիտնականներին, ինչպես նաև համայնքին: Միաժամանակ, Կենտրոնը հյուրընկալել է հայագիտության ոլորտի մի շարք գիտնականների, որոնք

շարունակել են իրենց հետազոտական աշխատանքները՝ օգտվելով Կենտրոնի հավաքածուից: Այն օժանդակում է ուսանողներին ու գիտնականներին՝ հայերին ու հայագիտության առնչվող հարցերի շուրջ համապատասխան նյութերի ու խորհրդատվության տրամադրմամբ:

Գիտական ու մասնագիտական համայնքին ուղղված աշխատանքներին զուգահեռ, Կենտրոնը Հայաստանին ու հայերին առնչվող հարցերի շուրջ խորհրդատվություն և նյութեր է տրամադրում նաև լրատվամիջոցներին, քաղաքական գործիչներին, այլ շահագրգիռ անձանց ու կազմակերպություններին՝ օգնելով նրանց ավելի լավ հասկանալ Հայաստանում կամ ամերիկահայ կյանքում տեղի ունեցող իրադարձությունները:

Կենտրոնը կարևորում է տեղական համայնքի, հատկապես՝ Դետրոյթում և նրա շրջակայքում բնակվող ամերիկահայերի հետ ամուր, գործընկերային հարաբերությունների պահպանումը: Այն արձագանքում է համայնքի կարիքներին՝ կազմակերպելով դասախոսություններ և այլ միջոցառումներ, ինչպես նաև համայնքի անդամներին ապահովելով հայկականության ու հայության առնչվող հարցերի շուրջ տարբեր նյութերով ու խորհրդատվությամբ:

Կենտրոնը տարեկան երկու կրթաթոշակ է տրամադրում Միչիգանի համալսարանի Դիրբորնի մասնաճյուղի հայազգի ուսանողներին: Այն ֆինանսապես օժանդակում է հայոց լեզվի դասավանդմանը համալսարանում:

Ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս Կենտրոնը գործընկերային հարաբերություններ է պահպանում ԱՄՆ-ում ու ողջ աշխարհում գործող հայագիտական կենտրոնների հետ: Այն սերտ համագործակցային կապեր ունի նաև ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի, Հայաստանի Ազգային գրադարանի, ինչպես նաև աշխարհի այլ կարևոր հայկական գրադարանների և հատուկ հավաքածուներ ունեցող հաստատությունների հետ:

ARMENIAN RESEARCH CENTER
UNIVERSITY OF MICHIGAN-DEARBORN

The Armenian Research Center (ARC) at the University of Michigan-Dearborn was founded in 1985 for the documentation, research, dissemination of and publications in Armenian history and culture. Its primary mission is to serve students, the academic community and the public, both in the U.S. and worldwide, by facilitating research and publications on all aspects of Armenian history, society and culture.

The ARC special collection consists of books, periodical series and offprints, unpublished doctoral dissertations, microfilms and microfiche, audio-visual materials, and oral histories on Armenian and related topics. The special collection includes resources in English, Armenian, French, Russian, Turkish, and many other languages.

The ARC publishes quality, academic and other books. In 2020 it launched the Texts and Studies in Armenian History, Society and Culture series in partnership with Michigan State University Press. Khatchig Mouradian's The Resistance Network: The Armenian Genocide and Humanitarianism in Ottoman Syria, 1915-1918 was the first volume in this series.

The ARC frequently organizes academic conferences and exhibitions. It regularly puts together academic talks bringing in scholars to share their most recent research with students, scholars, and the local community. Moreover, it has a consistent record of inviting or hosting short-term visiting or longer-term resident scholars in Armenian Studies to help them continue their research by using its collection. It also assists students and academics with resources and advice on all things Armenian.

In addition to its activities geared towards academics and specialists, the ARC also provides resources and advice to media outlets, political leaders, and other interested individuals and organizations to help them gain a better understanding of developments in Armenia and the Armenian-American community.

The ARC is committed to building strong partnership and relationships with the local community, particularly Armenian-Americans in

the Metro Detroit area. It responds to this community's needs by organizing lectures and other events, as well as by providing community members with resources and advice on all things Armenian.

The ARC offers two scholarships each year to students with Armenian background attending the UM-Dearborn. The ARC also sponsors the teaching of Armenian language courses on the UM-Dearborn Campus.

The ARC has a long-established record of partnering with major Armenian Studies chairs, programs, centers and institutes across the U.S. and worldwide. It also maintains close cooperative links with the Library of Congress in Washington, DC, the National Library of Armenia, other major Armenian libraries, and institutions with special Armenian collections around the world.

ՕՐ 1, ԵՐԵՔՇԱԲԹԻ / DAY 1, TUESDAY | 13.06.2023

08:45-09:00 | ԳՐԱՆՑՈՒՄ / REGISTRATION

09:00-09:40 | ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ / WORDS OF WELCOME

Արսեն Բոբոխյան / Arsen Bobokhyan
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ տնօրեն / RA NAS IAE, Director
Յուրի Սուվարյան / Yuri Suvaryan
ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար / Academician-Secretary of the Department of Armenology and Social Sciences, NAS
Արմեն Զաքարյան / Armen Zakarian
Միչիգանի համալսարանի (Դիրբորն) հետազոտությունների գծով պրոռեկտոր / Vice Provost for Research, University of Michigan-Dearborn
Մարտին Ջ. Հերշոկ / Martin J. Hershock
Միչիգանի համալսարանի (Դիրբորն) Արվեստների, գիտությունների և գրականության քոլեջի դեկան / Dean, College of Arts, Sciences, and Letters, University of Michigan-Dearborn
Արա Սանջյան / Ara Sanjian
Միչիգանի համալսարանի (Դիրբորն) Հայագիտական հետազոտությունների կենտրոնի վարիչ / Director, Armenian Research Center, University of Michigan-Dearborn

09:40-10:30 | ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ / PLENARY SESSION

ՀԱՄԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՈՒՄԸ ԸՍՏ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԳԼԱԼԵԶՈՒ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԻԾԸ / THE PERIODIZATION OF SOVIET HISTORIOGRAPHY IN ENGLISH-LANGUAGE STUDIES PUBLISHED OUTSIDE THE USSR AND THE TRAJECTORY OF SOVIET ARMENIAN HISTORIOGRAPHY

Արա Սանջյան / Ara Sanjian

Գլխավոր զեկուցող, Միչիգանի համալսարանի Դիրբորնի մասնաճյուղի պատմության դասախոս և Հայագիտական հետազոտությունների կենտրոնի վարիչ / Keynote Speaker, Associate Professor of History; Director of Armenian Research Center, University of Michigan-Dearborn

1-ԻՆ ՆԻՍՏ | ՀԵՏ / ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԼԵԶՈՒՆ և ԽՈՍՔԸ
Նիստավար և քննարկող՝ Լիլիթ Ղազարյան

PANEL 1 | SOVIET LANGUAGE AND SPEECH
Panel Discussant: Lilit Ghazaryan

10:30-10:55 | Արմեն Պետրոսյան / Armen Petrosyan
Խորհրդային ղեկավարների կերպարները հայկական բանահյուսության մեջ / Images of Soviet Leaders in Armenian Folklore
10:55-11:20 | Նիկոլ Մարգարյան / Nikol Margaryan
«Գողական» ենթամշակույթի չգնահատված առաքելությունը / The Underappreciated Mission of the “Goghakan” Subculture
11:20-11:45 | Շուշան Կարապետյան / Shushan Karapetian, Սարգիս Թրիշա / Sarkis Tricha
Տեղափոխված արականություն. ժառանգած հայերենը Լոս Անջելեսում / Transplanted Masculinity: Heritage Armenian in Los Angeles

11:45-12:15 | ՔՆՆԱՐԿՈՒՄ / DISCUSSION

12:15-13:00 | ՍՈՒՐՃԻ ԸՆԴՄԻՋՈՒՄ / COFFEE BREAK

2-ՐԴ ՆԻՍՏ | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԼՈՒՄՈՒՏԸ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՓՅՈՒՌՔ
Նիստավար և քննարկող՝ Արա Սանջյան

PANEL 2 | IN AND OUT OF ARMENIA: SOVIET POLICIES AND DIASPORA
Panel Discussant: Ara Sanjian

13:00-13:25 | Վահե Սահակյան / Vahe Sahakyan
Խորհրդային Հայաստանի իշխանությունների պետականակենտրոն սփյուռքի քաղաքականությունների իրագործումը ԱՄՆ և Ֆրանսիայի հայկական համայնքներում 1920-1930-ական թթ. / The Implementation of Soviet Armenia's State-centered Diaspora Policies Among Armenians in the United States and France (1920s-1930s)

13:25-13:50 | Թալին Գրիգոր / Talinn Grigor
«Սովետական ինտուրիստ». իրանա-հայկական մամուլը և հայրենադարձության մասին վիզուալ տրամաբերությունը / "Soviet Intourist": Irano-Armenian Press, and the Visual Discourse on Repatriation

13:50-14:15 | Տիգրան Ղանալանյան / Tigran Ghanalanyan
Արտագաղթը Խորհրդային Հայաստանից 1956-1991 թթ.
/ Emigration from Soviet Armenia in 1956-1991

14:15-14:45 | ՔՆՆԱՐԿՈՒՄ / DISCUSSION

14:45-15:45 | ՃԱՇԻ ԸՆԴՄԻՋՈՒՄ / LUNCH BREAK

3-ՐԴ ՆԻՍՏ | ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ
Նիստավար և քննարկող՝ Հրանուշ Խառատյան

PANEL 3 | POST / THE ECHOES OF SOVIET POLICY
Panel Discussant:Hranush Kharatyan

15:45-16:10 | Գայանե Շագոյան / Gayane Shagoyan
Երկաթե վարագույրը ճեղքած երկրաշարժը. աղետը խորհրդային ռեժիմի պայմաններում
/ The Earthquake that Broke the Iron Curtain: Disaster Under the Soviet Regime

16:10-16:35 | Գոհար Ստեփանյան / Gohar Stepanyan
Ընտանեկան ժառանգություն-ճամպրուկը խորհրդային մշակութային, ազգային քաղաքականությունների և արդիականացման խաչմերուկում. պարի ազգագրական խմբերը
/ Family Heritage-Suitcase at the Crossroads of Soviet Cultural, National Policies and Modernization: Dance Ethnographic Groups

16:35-17:00 | Հայկուհի Մուրադյան / Haykuhi Muradyan, Նժդեհ Երանյան / Nzhdeh Yeranyan
Քաղաքի խորհրդային կերպարի կառուցումը 1960-ական թթ.-ին. քաղաքական և մշակութային ասպեկտները (Գորիս քաղաքի օրինակով) / Constructing the Soviet Image of the City in 1960s: Political and Cultural Aspects (the Case of Goris)

17:00-17:30 | ՔՆՆԱՐԿՈՒՄ / DISCUSSION

ՕՐ 2, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ / DAY 2, WEDNESDAY, 14.06.2023

4-ՐԴ ՆԻՍՏ | ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱ. ՍԱՏԱՐՈՂՆԵՐ և ԴԻՄԱԴՐՈՂՆԵՐ
Նիստավար և քննարկող՝ Համլետ Մելքումյան

PANEL 4 | SOVIET PROPAGANDA: ADVOCATES AND RESISTANTS
Panel Discussant: Hamlet Melkumyan

09:00-09:25 | Ալեքսանդր Ֆոկին / Aleksandr Fokin
«Ակնկալում ենք, որ բացահայտեք գյուղի բոռերին». օրինական բողոքը ղեկավարության դեմ ուշխորհրդային Հայաստանում / "We are Waiting for You to Identify the Gadfly of the Village": a Legal Protest Against Leadership in Late Soviet Armenia

09:25-09:50 | Աղասի Թադևոսյան / Aghasi Tadevosyan
Խորհրդահայ առօրեականության ապախորհրդայնացման պրակտիկաները 1970-80-ական թվականների Երևանում / The Practices of de-Sovietization of the Soviet-Armenian Daily Life in Yerevan in the 1970s-80s

09:50 -10:15 | Հանս Գութբրոդ / Hans Gutbrod
Երևանի Կասկադի հուշահամալիրը. ուշադրության վերադարձը դեպի բռնաճնշումների զոհերը / Yerevan's Cascade Memorial: Returning Attention to Victims of Repression

10:15-10:45 | ՔՆՆԱՐԿՈՒՄ / DISCUSSION

10:45-11:30 | ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԲՌՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԻ ԶՈՀԵՐԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ / VISIT TO THE MEMORIAL OF THE VICTIMS OF THE STALIN ERA REPRESSIONS

12:00-13:00 | ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ / PLENARY SESSION AT THE MEMORIAL

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԽՍՀՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ / THE FACTOR OF THE ARMENIAN GENOCIDE IN THE POLITICAL REPRESSIONS OF THE USSR

Հրանուշ Խառատյան / Hranush Kharatyan

Գլխավոր զեկուցող, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող / Keynote Speaker, Senior Researcher of the Institute of Archaeology and Ethnography of the NAS RA

13:30-14:30 | ՃԱՇԻ ԸՆԴՄԻՋՈՒՄ / LUNCH BREAK

5-ՐԴ ՆԻՍՏ | ՀԵՏ / ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴՊՐՈՑ
Նիստավար և քննարկող՝ Հուրիկ Ադդարյան

PANEL 5 | POST / SOVIET SCHOOLING
Panel Discussant: Hourig Attarian

14:30-14:55 | Նելլի Կարապետյան / Nelli Karapetyan
Ուսուցիչը գյուղում. ընկալումների փոխակերպումները Հայաստանի գյուղերում խորհրդայինից հետխորհրդային անցման շրջանում / A Village Teacher: Changing Perceptions in the Armenian Village from Soviet to Post-Soviet Periods

14:55-15:20 | Աշխեն Հակոբյան / Ashkhen Hakobyan
Ուսուցչի ինքնությունը և անկախության շրջանի հայաստանյան դպրոցների միջոցառումները / Teacher Identity and the Demonstrative Classes in Armenian Independent Era Schooling

15:20-15:45 | Լիլիթ Ղազարյան / Lilit Ghazaryan
Ընկե՞ր, թե՞ «ընկեր». կրթական համակարգում օգտագործվող դիմելաձևերը հետխորհրդային Հայաստանում / Friend or Comrade? The Address Forms in the Educational Context in Post-Soviet Armenia

15:45-16:15 | ՔՆՆԱՐԿՈՒՄ / DISCUSSION

16:15-16:45 | ՍՈՒՐՃԻ ԸՆԴՄԻՋՈՒՄ / COFFEE BREAK

6-ՐԴ ՆԻՍՏ | ԿՐՈՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏ/ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
Նիստավար և քննարկող՝ Ալեքսանդր Աղաջանյան

PANEL 6 | RELIGIOUS MINORITIES IN POST/SOVIET ARMENIA
Panel Discussant: Alexander Agadjanian

16:45-17:10 | Յուլիա Անտոնյան / Yulia Antonyan
Արդյո՞ք հնարավոր էր «պայմանավորվել» իշխանությունների հետ. կրոնական փոքրամասնությունների գոյատևման ձևերը Խորհրդային Հայաստանում (մոլոկանների, ասորիների ու հայ կաթոլիկների օրինակով)
/ Was it Possible to "Negotiate" with the Authorities? Forms of Survival and Adaptation of Religious Minorities in Soviet Armenia (Cases of Molokans, Assyrians and Catholic Armenians)

17:10-17:35 | Լիլիթ Գաբրիելյան / Lilit Gabrielyan
Հին հիսունականների բողոքի շարժումը 1960-ական թթ.
(Ֆիզմաթ դպրոցի սաների օրինակով)
/ Old Pentecostals' Protest Movement in the 1960s
(Case Study on the Students of the PhysMath School, Yerevan)

17:35-18:00 | Անատոլի Տոկմանցև / Anatolii Tokmantcev
Եհովայի վկաների համայնքը Հայաստանում՝ որպես վերականգնված խորհրդային իրականություն / Jehovah's Witnesses Community in Armenia as a Refuge of Soviet Reality

18:00-18:30 | ՔՆՆԱՐԿՈՒՄ / DISCUSSION

ՕՐ 3, ՀԻՆԳՇԱԲԹԻ / DAY 3, THURSDAY, 15.06.2023

7-ՐԴ ՆԻՍՏ | ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿԵՐՊԱՐԸ ԱՐՎԵՍՏՈՒՄ
Նիստավար և քննարկող՝ Հրաչ Բայադյան

PANEL 7 | THE IMAGE OF THE SOVIET CITY AND CITIZEN IN ART
Panel Discussant: Hrach Bayadyan

09:00-09:25 | Սոնա Մնացականյան / Sona Mnatsakanyan
Մարտահրավեր սոցիալիստական ռեալիզմի գեղագիտությանը. ոչ-մարդկային գործողների պատկերումը Մկրտիչ Արմենի «Երևան» վեպում (1931)
/ A Challenge to the Aesthetics of Socialist Realism: The Imagery of Non-human Actors in Mkrtich Armen's Novel "Yerevan" (1931)

09:50-10:15 | Քնար Աբրահամյան / Knar Abrahamyan
Անդրեյ Բիտովի «Հայաստանի դասերը»՝ որպես պաշտոնական խորհրդային Երևանի կոնտրտեքստ / Andrei Bitov's "Uroki Armenii" as a Countertext to the Official Soviet Yerevan

10:15-10:40 | Տիգրան Սիմյան / Tigran Simyan
Արտավազդ Փելեշյանի ֆիլմերը՝ որպես խորհրդային, ազգային և վերազգային ինքնության և հիշողության «կոնվերտորներ» / Artavazd Peleshyan's Films as Converters of Soviet, National (and Transnational) Identity and Memory

10:40-11:10 | ՔՆՆԱՐԿՈՒՄ / DISCUSSION

11:10-11:30 | ՍՈՒՐՃԻ ԸՆԴՄԻՋՈՒՄ / COFFEE BREAK

8-ՐԴ ՆԻՍՏ | ՀԵՏ/ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԵ/ՈՒՐԲԱՆԻԶԱՑՈՒՄ
Նիստավար և քննարկող՝ Գայանե Շագոյան

PANEL 8 | POST/SOVIET DE/URBANIZATION
Panel Discussant: Gayane Shagoyan

11:30-11:55 | Էվիյա Հովհաննիսյան / Eviya Hovhannisyan
«Իջևան-Դիլիջան բարեկամության կառույց». ուշխորհրդային շրջանի Հայաստանի երկաթգծային համակարգի մարդաբանական հետազոտություն / "Ijevan-Dilijan Friendship Construction": an Anthropological Research on the Armenian Railway System in the Late Soviet Period

11:55-12:20 | Մարիա Գունկո / Maria Gunko
Մթությունից ծնված դատարկություն. Հայաստանի «մութ ու ցուրտ տարիների» ենթակառուցվածքային ժառանգությունը / Emptiness Conceived in Darkness: Infrastructural Legacies of "Dark Years" in Armenia

12:20-12:45 | Լորի Խաչատուրյան / Lori Khatchadourian
Ապահամայնականության աղետը. անտեր սեփականությունը և չարաշահման իրավունքը / The Tragedy of the Uncommons: Ownerless Property and the Right of Abusus

12:45-13:15 | ՔՆՆԱՐԿՈՒՄ / DISCUSSION

13:15-14:15 | ՃԱՇԻ ԸՆԴՄԻՋՈՒՄ / LUNCH BREAK

9-ՐԴ ՆԻՍՏ | ՀԵՏ/ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Նիստավար և քննարկող՝ Ռուբեն Արևշատյան

PANEL 9 | POST/SOVIET ARCHITECTURE
Panel Discussant: Ruben Arevshatyan

14:15-14:40 | Լիլիթ Տեր-Մինասյան / Lilit Ter-Minasyan
Կոմմունա-տների կառուցման հայկական փորձը. սոցիալական էքսպերիմենտների և ճարտարապետության խաչմերուկում / The Armenian Experience of Commune-houses Building: at the Intersection of Social Experiments and Architecture

14:40-15:05 | Էջեմ Սարըչայըր / Ecem Saricayir
Անցումային ճարտարապետները. նոր հայկական ճարտարապետությունը վաղխորհրդային ժամանակաշրջանում / Architectures of Transition: The New Armenian Architecture in the Early Soviet Union

15:05-15:30 | ՔՆՆԱՐԿՈՒՄ / DISCUSSION

15:30-16:30 | ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆԱՐԿՈՒՄ / SUMMARY DISSCUSION

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՆՑՅԱԼԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՑՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ. Ի՞ՆՉ ԳԻՏԵՆՔ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՆՑՅԱԼԻՑ ԵՎ ԻՆՉՈՒ ԴԱ՛ ԳԻՏԵՆՔ / BYPASSED ISSUES OF SOVIET STUDIES: WHAT DO WE KNOW ABOUT SOVIET PAST AND WHY WE KNOW JUST THAT

Վարող՝ Հրանուշ Խառատյան / Moderator: Hranush Kharatyan

16:30-17:00 | ՍՈՒՐՃԻ ԸՆԴՄԻՋՈՒՄ / COFFEE BREAK

17:00-19:30 | ՔԱՂԱՔԱՅԻՆ ՉԲՈՍԱՆՔ / CITY TOUR

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՄՓՈՓԱԳՐԵՐԸ

(ըստ գիտաժողովի ծրագրի հերթականության)

CONFERENCE PARTICIPANTS' BIOGRAPHIES AND ABSTRACTS

(in order of appearance in the conference program)

Արա Սանջյան

Արա Սանջյանը Միչիգանի Համալսարանի Դիրբորնի մասնաճյուղի պատմության դասախոս է և տեղի Հայագիտական հետազոտությունների կենտրոնի վարիչը: Ավարտել է Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետը և Միջին Արևելքի ժամանակակից պատմության գծով դոկտորական աստիճան ստացել է Լոնդոնի Համալսարանի Արևելյան և Աֆրիկյան ուսումնասիրությունների դպրոցում: 1996-2005 թթ.. եղել է Բեյրութի Հայկազյան Համալսարանի Հայագիտության, պատմության ու քաղաքական գիտությունների ամբիոնի վարիչը, իսկ Միչիգանի Համալսարանի Դիրբորնի մասնաճյուղում դասավանդում է 2006 թվականից: Գիտական իր ուսումնասիրությունների կիզակետում են Հայաստանի, Թուրքիայի և Արևմտյան Ասիայի արաբական երկրների պատմությունը՝ Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Հեղինակել է «Թուրքիան և նրա արաբ հարևանները (1953-1958). ուսումնասիրություն Բաղդատի ուխտի սկզբնավորման և ձախողման վերաբերյալ» անգլերեն աշխատությունը (2001), երկու մենագրություն և մի շարք գիտական հոդվածներ ու ժողովածուներում գլուխներ՝ անգլերենով, հայերենով, ռուսերենով և ֆրանսերենով:

Ara Sanjian

Ara Sanjian is Associate Professor of History and the Director of the Armenian Research Center at the University of Michigan-Dearborn. He received his master's degree in history from Yerevan State University and his PhD in modern history of the Middle East from the School of Oriental and African Studies, University of London. From 1996 to 2005 he was the Chairman of the Department of Armenian Studies, History and Political Science at Haigazian University in Beirut and he joined the University of Michigan-Dearborn in 2006. His research interests focus on the post-World War I history of Armenia, Turkey, and the Arab states of Western Asia. He is the author of "Turkey and Her Arab Neighbors, 1953-1958: A Study in the Origins and Failure of the Baghdad Pact" (2001), as well as two monographs and a number of scholarly articles and book chapters published in English, Armenian, Russian and French.

Համախորհրդային պատմագրության պարբերացումն ըստ արտասահմանյան անգլիալեզու հետազոտությունների և խորհրդահայ պատմագրության հետագծի

Զեկուցման առաջին բաժնում ամփոփվում են 1920-ականներից առ այսօր կոմունիստական երկրներից դուրս գործած անգլիագիր մասնագետների ուսումնասիրություններում ներկայացված համախորհրդային պատմագրության պարբերացման տարբեր համակարգերը: Քանի որ առաջարկված այլազան համակարգերն ունեն որոշ տարբերություններ, նրանց համեմատական ուսումնասիրության հիման վրա պիտի ներկայացվի պատմական այն թվականների շարքը, որոնք շրջադարձային են համարվել այդ տարբեր համակարգերը կազմելու ժամանակ: Երկրորդ բաժնում քննարկվում են Խորհրդային Հայաստանի պատմագրությունը պարբերացնելու մինչև օրս՝ խորհրդային ու հետխորհրդային տարիների, կատարված փորձերը՝ Շմավոն Հարությունյանի, Նորայր Սարուխանյանի և Վլադիմիր Բարխուդարյանի աշխատություններում: Մինչև օրս առաջարկված համախորհրդային և խորհրդահայ պարբերացման համակարգերի կարճ համեմատություններից հետո, զեկուցման վերջին հատվածը պիտի կենտրոնանա համախորհրդային պատմագրության պարբերացման մասին անգլիալեզու ուսումնասիրություններում բարձրացված մեթոդական այն մոտեցումների, քննարկված դրվագների և լայն հավանություն ստացած եզրակացությունների վրա, որոնց կիրառումն ու համեմատությունը խորհրդահայ իրականության հետ կարող են նպաստել խորհրդահայ պատմագրության առանձնահատկությունների և նրա հետագծի ավելի ընդգրկուն ուսումնասիրությանը:

The Periodization of Soviet Historiography in English-Language Studies Published Outside the USSR and the Trajectory of Soviet Armenian Historiography

The first section of the presentation will summarize the different periodization schemes of Soviet historiography presented in the works of authors writing in English and living outside the Communist world, from the 1920s to the present. The various proposed schemes are at times different from one another. Therefore, based on their comparison, a list will be presented of the years which were deemed to be milestones in the evolution of Soviet historiography when these schemes were being developed. The second section will summarize the various attempts to periodize Soviet Armenian historiography, made during both the Soviet and post-Soviet eras, in the works of Shmavon Harutyunyan, Norayr Sarukhanyan and Vladimir Barkhudaryan. After a brief comparison of the Soviet and Soviet Armenian periodization schemes covered in this presentation, the last section of the presentation will focus on the methodological approaches pursued, the episodes discussed and the widely accepted conclusions in these English-language studies on the periodization of Soviet historiography. It will be argued that the implementation of these methodological approaches, as well as the comparison of these episodes and conclusions with the Soviet Armenian experience can contribute to the deepening of the study of the characteristics of Soviet Armenian historiography and a more detailed depiction of its trajectory.

Արմեն Պետրոսյան

Արմեն Պետրոսյանը ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող է։ Հեղինակ է շուրջ 340 գիտական և գիտամասսայական հրապարակումների, որոնք տպագրվել են ինչպես Հայաստանում, այնպես էլ եվրոպական ու ասիական մի շարք երկրներում։ Նրա մասնագիտական հետաքրքրությունների ծիրում են հետևյալ թեմաները՝ Հայաստանի նախապատմություն և վաղ շրջանի պատմություն, հայ ժողովրդի ծագում, Ուրարտու, Հայաստանի, հին Արևելքի և Կովկասի հին կրոններ, առասպելներ ու էպոսներ, համեմատական հնդեվրոպական առասպելաբանություն, բանահյուսություն և լեզվաբանություն։

Armen Petrosyan

Armen Petrosyan is a Principal Researcher at the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of Armenia. He is the author of over 300 scientific and popular scientific publications in Armenia, Europe and the United States. His main areas of work include the history and culture of Armenia and the Armenian people, ancient religions, myths and epics of Armenia, the Middle East and the Caucasus, and comparative Indo-European mythology, folklore, and linguistics.

Խորհրդային ղեկավարների կերպարները հայկական բանահյուսության մեջ

ԽՍՀՄ-ում ձևավորվել էր նոր տիպի՝ ավանդականից տարբերվող բանահյուսություն, որի աչքի ընկնող ժանրը խորհրդային ղեկավարների չափազանցված մեծարումն էր։ Ողջ Խորհրդային Միության մեջ ստեղծվում էին վիպական ասքեր, երգեր և բանաստեղծություններ այդ թեմայով։ Հայաստանում, ինչպես և մյուս հանրապետություններում, այդ ժանրը ստեղծվում և զարգանում էր տեղական ավանդույթի հիման վրա և դրա նմանությամբ։ Դրանք երբեմն բնութագրվել են որպես «կեղծ բանահյուսական» (անգլ. fakelore, ռուս. фальшлор), ինչը անհարկի պարզունակեցնում է խնդիրը։ Մինչդեռ ակնհայտ է, որ դրանց մեջ կան և՛ պատվերով ստեղծված կեղծ հորինվածքներ, և՛ իսկական բանահյուսական ստեղծագործություններ։ Ինչևէ, ստեղծվում էր լենին-ստալինյան մի նոր «էպոս», որն ավարտին չհասցվեց, քանի որ Ստալինի պաշտամունքի դատապարտումը և խրուշչովյան «ձնհալը» կասեցրեց այդ ընթացքը։ Առաջնորդների պաշտամունքը սրբազերծվեց, և հրատապ դարձավ մեկ այլ ժանր՝ քաղաքական անեկդոտը. առաջնորդների կերպարները, իրենց աստվածային դիրքերից իջեցվեցին անեկդոտի հերոսների կարգավիճակի։ 1960-ականներին դպրոցական և ուսանողական միջավայրերում շրջանառվում էր Լենինի և նրա զինակիցների մասին անեկդոտների մի առանձնահատուկ շարք՝ ստեղծված Հայկական ռադիոյի՝ լենինյան թեմաներով ռադիոբեմականացումների ազդեցությամբ և նմանությամբ։ Անեկդոտի հիմնական կառուցվածքը հետևյալն էր. Լենինը նստած աշխատում է Սմոլնիի իր առանձնասենյակում, երբ ներս է մտնում նրա զինակիցներից մեկը, սովորաբար Ձերժինսկին կամ Սվերդլովը, և մի բան ասում, որին հետևում է

Լենինի անսպասելի պատասխանը։ Դրանք պատմվում էին հույժ գրական հայերենով, երաժշտական մասերը երգելով և նմանակելով ռադիոներկայացման ժանրը։ Դա հայկական անեկդոտների մի առանձնահատուկ նոր տիպ էր, որը տարբերվում էր ռուսական և մյուս ժողովուրդների համանման անեկդոտներից։ Կային նաև քաղաքական աստառով կամ մարքսիզմի և ԽՍՀՄ հայրերի մասին այլ առանձնահատուկ հայկական անեկդոտներ։ Օրինակ՝ մի կատակ-անեկդոտում ներկայացվում են մարքսիզմ-լենինիզմի մեծերը, ցուցադրելով իրենց մազածածկույթը, իսկ Մարքսից, Էնգելսից և մյուսներից հետո ներկայացվում էր ՀԽՍՀ առաջնորդներից Սարկիսովը՝ իր հատուկ սանրվածքով։

Images of Soviet Leaders in Armenian Folklore

In the USSR, a new type of folklore was formed, the most prominent distinguishing feature of which was the exaggerated glorification of Soviet leaders. Epic sagas, songs and poems on this topic were created all over the country. In Armenia, as in other Soviet republics, this genre was developed on the basis of local tradition. These works have sometimes been characterized as “fakelore” which oversimplifies the problem. It is obvious that among them there were not only fake pieces (created by government order) but also genuine works of folklore. However, in the 1920s, a new Lenin-and-Stalin “epic” was created, although it was never completed – the exposure of Stalin’s “cult of personality” and Khrushchev’s “ottepel” (thaw)) stopped its creation. The cult of Soviet leaders was desacralized, and another genre – the political joke – became actual: the images of leaders from their divine positions were lowered to the status of heroes of jokes. In the 1960s, a specific series of jokes about Lenin and his associates, created as parodies of the Lenin plays of Armenian Radio, was popular in school and student circles in Armenia.

Նիկոլ Մարգարյան

Նիկոլ Մարգարյանը մշակութային, սոցիալական մարդաբան է: 1993-ից մինչ օրս աշխատում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում: Գիտաշխատող է, պատմ. գիտ. թեկնածու: Ունի 35 տարվա դաշտային ազգագրական հետազոտությունների փորձառություն, մասնակցել է շուրջ 60 տարբեր հետազոտական ծրագրերի: Դասախոսել է Գյումրիի Իմաստասեր Անանիա Շիրակացի (2000-2005) և Երևանի պետական համալսարաններում (2005-2018): ԵՊՀ-ի դոցենտ է: Մասնագիտական հետաքրքրության ոլորտներն են՝ անունների մարդաբանություն, ոչ վերբալ հաղորդակցություն, գենդերային մարդաբանություն, ենթա և հակամշակույթների ուսումնասիրություն և գլոբալացման մշակութային առումներ:

Nikol Margaryan

Nikol Margaryan is a Cultural/Social Anthropologist, Researcher, and Doctor of Philosophy (Candidate of Historical Sciences) at the Republic of Armenia National Academy of Sciences. He has 35 years of experience in the field of ethnographic research, and has participated in dozens of research programs. He was a Lecturer at Gyumri Anastasia Anastasia Shirakatsi University from 2000-2005 and an Associate Professor at Yerevan State University from 2005-2018. His areas of professional interest include anthropology of names (Onomastics), non-verbal communication, gender anthropology, subculture studies, and globalization studies.

Գողական ենթամշակույթի չգնահատված առաքելությունը

1960-ական թթ.. ԽՍՀՄ կազմի մեջ մտնող մի շարք հանրապետությունների հասարակություններում նկատելի դարձան պրակտիկաներ և լեզվական ռեպրեզենտացիաներ, որոնք փորձագետները վերագրում են քրեական, մասնավորապես գողական ենթամշակույթին: Գողական ենթամշակույթի հետ նույնականացվող հատկանիշերը հատկապես լայն տարածում ունեին արդյունաբերական բանվորության միջավայրում, որն այդ ժամանակահատվածում կազմում էր ՀԽՍՀ ամբողջ բնակչության 60 տոկոսից ավելին, իսկ քաղաքային բնակչության մոտ 80 տոկոսը: Այսինքն՝ կարելի է ասել՝ գողական արժեքների և նորմերի գործառնության շրջանակը հատել էր ենթամշակույթի նեղ սոցիալական սահմանները և հավակնում էր դառնալու հիմնահոսային: Ուշագրավն այն է, որ գողական ենթամշակույթի ծավալումը իրականանում էր այնպիսի պայմաններում, երբ խորհրդային իշխանությունների պաշտոնական խոսույթում նկատվում էր հռչակված գաղափարների ֆորմալիզացման, ստանդարտացման և քարոզչության ուժգնացման միտում: Խոսքը հատկապես վերաբերում էր հռչակված այնպիսի առանցքային թեզերին, որպիսիք էին հավասարությունը, սոցիալիստական արդար աշխատանքը, կուսակցության և պետության վարած քաղաքական գծին աշխատավորական զանգվածների նվիրվածությունը: Սրանք այն թեզերն են, որոնց գողական ենթամշակույթը իրականում հակադիր վերաբերմունք ուներ և սկզբունքորեն մերժում էր: Ինչպե՞ս էր հնարավոր վերոհիշյալ հակոտնյա հղացք-

ների համագոյակցությունը: Ամերիկացի սոցիոլոգ Ա. Յուրչակը, հիմնվելով Ջ. Օստինի «խոսքային ակտերի» տեսության վրա, խոսքի և իրականության միջև խզվածքը բացատրում է խոսքի (արտահայտության) փերֆորմատիվ բնույթով, որն անկախ է արտաբերողի իրական մտադրություններից և պայմանավորված է այն սոցիալական կոնվենցիաներով, որոնց համատեքստում արտաբերվում է: Ըստ Յուրչակի՝ 1960-ական թթ.. խորհրդային իշխանությունների ավտարիտետային խոսույթում փերֆորմատիվ բաղադրիչը գնալով ավելի է կարևորվում, իսկ հաստատող բաղադրիչի կարևորությունը ընդհակառակը՝ նվազում և դառնում է անորոշ, ինչի հետևանքով հնարավորություն է բացվում նոր, նախկինում անհնար թվացող մեկնաբանությունների (գործունեությունների - ՆՄ) հայտնվելու համար: Ա. Յուրչակի առաջարկած մոտեցումն, ըստ էության, փորձ է բացատրելու, թե ինչպես են ստեղծվում որոշակի տարածքներ ազատ մեկնաբանությունների և գործունեությունների համար, սակայն բավարար չէ հասկանալու, թե ինչու՞ այդ տարածքը զբաղեցնողներից մեկը կարող էր լինել հենց գողական մեկնաբանությունը: Սրա պատճառը, ի թիվս այլ գործոնների, դիալեկտիկական այն օրինաչափությունն է, որ հասարակական կյանքի որևէ ասպարեզում մեկնաբանության և իրականության խզվածքը անհրաժեշտաբար ձևավորում է նախադրյալներ՝ իրականությունը հաստատող նոր մեկնաբանությունների իհայտ գալու համար: Կարելի է ասել, որ այսպես կոչված «փերֆորմատիվ տեղաշարժի» տարիներին, գողական ենթամշակույթի աննախադեպ ծավալումը զգալի չափով պայմանավորված էր հենց այդ անհրաժեշտությամբ:

The Underappreciated Mission of the “Goghakan” Subculture

During the 1960s, in the societies of a number of USSR republics, practices and linguistic representations which experts attribute to the criminal became noticeable, particularly in Goghakan subculture. Characteristics identified with the Goghakan subculture were especially common among the industrial working class, which at that time made up more than 60% of the entire population of the ArmSSR and about 80% of the urban population. In other words, we can say that the scope of Goghakan values and norms went beyond the narrow social framework of the subculture and claimed to become the mainstream. It is noteworthy that the development of the Goghakan subculture was carried out in such conditions, when in the official speech of the Soviet authorities there was a tendency to formalize the declared ideas, standardize them and strengthen propaganda. This was especially true of the declared key theses, such as equality, socialist honest labor, and the commitment of the working masses to the political line pursued by the party and the state. These are the theses to which the Ggoghakan subculture actually had the opposite attitude and fundamentally rejected. How was the combination of the aforementioned antipodes possible? American sociologist A. Yurchak, based on the theory of “speech acts” by J. Austin, explains the gap between speech and reality by the performative nature of speech (expression), which does not depend on the real intentions of the speaker and is conditioned by social conventions in the context of which it is pronounced. According to Yurchak, in the 1960s in the authoritative speech of the Soviet authorities, the performative component was

gaining more and more importance, while the value of the affirmative component, on the contrary, decreased and became indefinite, as a result of which the possibility of new interpretations (activities-NM) that previously seemed impossible, opened up. The approach proposed by A. Yurchak is, in fact, an attempt to explain how certain spaces for free comments and actions are created. But this is not enough to understand why one of the inhabitants of this space may be the Goghakan comment itself. The reason for this, among other factors, is the dialectical regularity, according to which the gap between interpretation and reality in any sphere of public life necessarily creates the prerequisites for the emergence of new interpretations that confirm reality. We can say that during the years of the so-called “performative movement” the unprecedented development of the Goghakan subculture was largely spread due to this need.

Շուշան Կարապետյան

Շուշան Կարապետյանը Հարավային Կալիֆոռնիայի Համալսարանի Հայագիտության ինստիտուտի տնօրենն է։ Նա հետազոտում, դասավանդում և գրում է հայկական փորձի, մասնավորապես այն մրցակցող գաղափարախոսությունների մասին, որ հայտնվել են մի կողմից լեզվի ու մյուս կողմից՝ անդրազգային ինքնության կառուցման խաչմերուկում։ 2014 թվականին նա ստացել է հայագիտության դոկտորի աստիճան Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի Մերձավոր Արևելքի լեզուների և մշակույթների բաժնում, որտեղ ավելի քան մեկ տասնամյակ վարել է հայագիտության դասընթացներ։ 2015 թվականին նրա՝ «Ինչպե՞ս կարող եմ իմ երեխաներին սովորեցնել իմ կոտրված հայերենը. Լոս Անջելեսում արևելահայերեն խոսողների ուսումնասիրություն» ատենախոսությունն արժանացել է Հայագիտական ուսմանց ընկերության «Վաստակավոր ատենախոսության» մրցանակին։ 2018 թվականին նա արժանացել է Russ Campbell Young Scholar Award-ին՝ ի նշան գնահատանքի ժառանգած լեզուն լավագույնս հետազոտելու համար։

Shushan Karapetian

Dr. Shushan Karapetian is director of the USC Dornsife Institute of Armenian Studies. She researches, teaches, and writes about the Armenian experience, particularly focusing on competing ideologies at the intersection of language and the construction of transnational identity. She received a PhD in Armenian Studies from the UCLA Department of Near Eastern Languages and Cultures in 2014, where she taught Armenian Studies courses for over ten years. Her dissertation, "'How Do I Teach My Kids My Broken Armenian?': A Study of Eastern Armenian Heritage Language Speakers in Los Angeles," received the Society for Armenian Studies Distinguished Dissertation Award in 2015. In 2018, she was the recipient of the Russ Campbell Young Scholar Award in recognition of outstanding scholarship in heritage language research.

Սարգիս Թրիչա

Սարգիս Թրիչան նախկինում աշխատել է ճանաչողական հոգեբանության և լեզվաբանական վերլուծության հետազոտությունների վրա՝ արհեստական բանականության ծրագրերի մշակումն ապահովելու համար։ Հարավային Կալիֆոռնիայի Համալսարանի բակալավրիատում ուսումնառության տարիներին գլխավորապես հետազոտել է ճանաչողական գիտությունների հոգեբանական և լեզվական ոլորտները։ Այժմ սովորում է Փարիզի Քենթի համալսարանի արվեստի և մշակույթի դպրոցի ասպիրանտուրայում՝ ուսումնասիրելով ստեղծագրություն առարկան։

Sarkis Tricha

Mr. Tricha has previously worked on research in cognitive psychology and linguistic analysis for artificial intelligence software development. He focused on the psychological and linguistic domains of cognitive science in his undergraduate studies at USC, and is now a graduate student at the University of Kent Paris School for Arts and Culture studying creative writing.

Տեղափոխված արականություն. ժառանգած լեզու Լոս Անջելեսում

Այս զեկույցում քննարկվում է Հայաստանի Հանրապետությունից Լոս Անջելես ներգաղթած հայ տղամարդկանց հասունացման ընթացքի սոցիալ-մշակութային և սոցիո-լեզվաբանական առանձնահատկությունները բուռն տասնամյակներին՝ Խորհրդային Միության փլուզումից առաջ, ընթացքում և հետո (1980-2000)։ Բանավոր պատմության մեթոդաբանությամբ ուսումնասիրում ենք արականության մասին նրանց կառուցարկումներն ու պատկերացումները՝ սկսած հայաստանյան մանկությունից մինչև մարտահրավերներով լի նոր բնակավայր։ Արականության նրանց դրսևորումները դիտարկում ենք տարբեր կոդերի ազդեցության և ժամանակի ու տարածության մեջ դրանց զարգացման միջոցով։ Այն ներառում է խորհրդային շրջանի «օրենքով գողի» կարգավիճակի գովերգումը, ռոմանտիզացումն ու ընդունումը՝ սկսած գուլագներից և բանտերից, մինչև դրա հարմարեցումը (խորհրդային և հետխորհրդային) հայկական համատեքստին, և վերջապես դրա արտահանումն ու հարմարեցումը Լոս Անջելեսի քաղաքային գանգստերային ենթամշակույթին։

Մեր հետազոտությամբ բացահայտում ենք 80-ականների վերջի և 90-ականների սկզբի (հետ)խորհրդային Հայաստանում ապրող (հատկապես «մութ ու ցուրտ» տարիներին) հայրերի արականության դրսևորումները. հայրեր, որոնց համար փլուզվող սոցիալիստական և նոր հետսոցիալիստական պետությունում գոյատևելը առաջնահերթ խնդիր էր։ Պետական կառույցների անկարողության և ձախողման գիտակցումը առաջացրեց դրանք շրջանցելու անհրաժեշտություն։ Հայաստանյան այս մոդելը համադրվում է մեր մասնակիցների բազմաբևեռ փորձառությունների հետ։ Նրանք այդ կոդերը ժառանգել են իրենց հայրերից, բայց, հետագայում հասունանալով Միացյալ Նահանգներում, բախվել են շատ տարբեր մարտահրավերների և սոցիալ-մշակութային ուժերի՝ պայմանավորված էթնիկ, լեզվական և սոցիալ-տնտեսական կարգավիճակով։

Այս սերնդի համար արականության վերաբերյալ ժառանգած գաղափարներն ու նորմերը մրցակցում և հաճախ հակասում են ամերիկյան կենսափորձին, ինչն էլ իր հերթին հանգեցնում է ընդգծված պայքարի դրանք հաշտեցնելու գործում։ Հայերենի՝ որպես իշխող լեզվական ձևի բացառիկ օգտագործումը, ֆունկցիոնալությունը, կարգավիճակը և նույնիսկ գերակայությունը, որի միջոցով արականությունը հայեցակարգվում, նախագծվում և իրականացվում է, հատկապես

սփյուռքի համատեքստում, խաթարում և ապակայունացնում է ԱՄՆ-ում ժառան-գական լեզուների հաստատված համակարգը, որն ապահովում է լեզվի արագ և կանխատեսելի անցում (language shift) գրեթե բոլոր ոլորտներում:

Transplanted Masculinity: Heritage Armenian in Los Angeles

This study explores the sociocultural and sociolinguistic landscapes of the coming-of-age trajectory of Armenian men who immigrated to Los Angeles from the Republic of Armenia during the tumultuous decades before, during, and after the collapse of the Soviet Union (1980s-2000). Through a series of in depth life-history interviews, we investigate their constructions and projections of masculinity, starting with their childhoods in Armenia and following in an immigrant context, replete with challenges. We trace their performance of masculinity through the influences of various codes and their evolution over time and space. These include the glorification, romanticization, and adoption of the Soviet-era code of the "thieves in law," from its origins in gulags and prisons, to its adoption into the (Soviet and post-Soviet) Armenian context, and finally, its exportation and adaptation into the urban Los Angeles gang subculture. We unpack a form of post-Soviet masculinity of fathers in Armenia in the late 80s/early 90s, for which survival in a failing socialist and new post-socialist state was a paramount concern. The recognition of the impotence and failure of institutions necessitated their subversion. This model is juxtaposed to the multipolar experiences of our participants, who inherited their fathers' codes but subsequently came of age in the United States, where they were faced with very different challenges and sociocultural forces due to ethnic, linguistic, and socioeconomic status. For this generation, culturally inherited notions of masculinity compete and often conflict with those learned in America, leading to pronounced struggles in their reconciliation. The exclusive utilization, functionality, status, and indeed dominance of the Armenian language as the linguistic form through which masculinity is conceptualized, projected, and performed, particularly in a diasporic context, subverts and challenges the established landscape of heritage languages in the U.S., which espouse quick and predictable language shift in almost all domains.

Վահե Սահակյան

Վահե Սահակյանը Միչիգանի համալսարանի Դիրբորնի մասնաճյուղի Հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող-հետազոտող է: 2002թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի բաժնի ասպիրանտուրան՝ ստանալով սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 2015թ.-ին՝ Միչիգանի համալսարանի (Էնն Արբոր) Մերձավոր Արևելքի ուսումնասիրությունների ֆակուլտետի դոկտորանտորան՝ ստանալով Մերձավոր Արևելքի ուսումնասիրությունների դոկտորի գիտական աստիճան: 2001-2008 թվականներին դասավանդել է Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ամբիոնում, իսկ 2010-2017 թվականներին՝ Միչիգանի համալսարանի Մերձավոր Արևելքի ուսումնասիրությունների ֆակուլտետում: Նրա հետազոտական հետաքրքրություններն ընդգրկում են առհասարակ բնակչության տեղաշարժերի, անդրազգայնության ու սփյուռքի տեսական ու համեմատական ուսումնասիրությունները, և հայկական սփյուռքը՝ մասնավորապես: Նա կազմել ու խմբագրել է «Սփյուռքագիտություն. քննական անթոլոգիա» ժողովածուն, որն առաջին անգամ ընթերցողին է ներկայացնում սփյուռքագիտության միջգիտակարգային բնագավառում արևմտյան գիտնականների 19 հիմնարար աշխատությունների հայերեն թարգմանություններ: Ժողովածուն հրատարակվել է Երևանի պետական համալսարանի հրատարակչության կողմից 2022թ.-ին:

Vahe Sahakyan

Vahe Sahakyan is an interdisciplinary scholar affiliated with the University of Michigan-Dearborn Armenian Research Center. He holds a Candidate of Sciences degree in Sociology from Yerevan State University and a Ph.D. in Near Eastern Studies from the University of Michigan, Ann Arbor. He taught at the Department of Sociology at Yerevan State University from 2001 to 2008, and at the Department of Near Eastern Studies at the University of Michigan, Ann Arbor, between 2010 and 2017. He is broadly interested in the studies of population movements, transnationalism, and diasporas from both theoretical and comparative perspectives with a particular focus on the Armenian diaspora. He compiled and edited Spyurkagitutyun: Knnakan antologia [Diaspora Studies: A Critical Anthology], a volume bringing together Armenian-language translations of 19 fundamental articles and book chapters in Diaspora Studies by renowned Western scholars, which was published by Yerevan State University Press in 2022.

Խորհրդային Հայաստանի իշխանությունների պետականակենտրոն սփյուռքի քաղաքականությունների իրագործումը ԱՄՆ-ի և Ֆրանսիայի հայկական համայնքներում 1920-1930-ական թթ.

Սույն զեկուցումն անդրադառնալու է Խորհրդային Հայաստանի վաղ շրջանի իշխանությունների անդրազգային կառավարման ջանքերին՝ ուղղված Խորհրդային Հայաստանին աջակցելու ծրագրերի շուրջ սփյուռքի համախմբմանը: ԱՄՆ-ում ու Ֆրանսիայում այս քաղաքականությունների հետևանքների համեմատական վերլուծության միջոցով զեկուցման մեջ ներկայացվելու է, թե ինչպես էին պետակա-

նակենտրոն, աշխատավոր դասակարգին կողմնորոշված ու բացառողական այդ քաղաքականություններն ուղղակիորեն ազդում սփյուռքի տարբեր համայնքների վրա՝ հրահրելով առճակատումներ ու հակամարտություններ իրենց աջակիցների ու ընդդիմադիրների միջև: ԱՄՆ-ի և Ֆրանսիայի հայկական համայնքներում այս քաղաքականություններն իրագործվում էին Հայաստանի օգնության կոմիտեի ընդլայնվող մասնաճյուղերի միջոցով, Խորհրդային Հայաստանի իշխանության և Հայաստանի նախկին հանրապետության իշխանությունների ու վերջիններիս քաղաքական կուսակցության՝ Հայաստանի հեղափոխական դաշնակցության միջև հեռակա պայքարների համատեքստում: Զեկուցման հիմնական պնդումն այն պիտի լինի, որ իրենց պետականակենտրոն, բացառողական քաղաքականություններում Խորհրդային Հայաստանի իշխանությունները, ինչպես նաև ՀՅԴ ղեկավարությունը, օգտագործում էին նույնանման ռազմավարություններ, որոնք ներառում էին՝ ա) հայկական պետության ու հայրենիքի ընկալումների շուրջ համահայկական նպատակների դիսկուրսիվ կառուցակցումը (Խորհրդային Հայաստան, թե ազատ, անկախ Հայաստան), բ) սոցիալականացման տարածությունների ստեղծումը, որոնցում հայ բնակչության խմբերն ու նրանց սփյուռքածին սերունդները կանոնավոր կերպով հաղորդակից կդառնային այդ փոխբացառող դիսկուրսներին, և գ) ազդեցության գոտիների ընդլայնումը հայկական այլ հաստատված կամ հաստատվող համայնքների, կազմակերպությունների ու հաստատությունների վրա, ինչն ի վերջո այս պայքարների մեջ ներքաշեց նաև ԱՄՆ-ում հայկական եկեղեցու թեմը:

The Implementation of Soviet Armenia's State-Centered Diaspora Policies Among Armenians in the United States and France (1920s-1930s)

This paper will examine the transnational governmental efforts of the early Soviet Armenian leaders in the 1920s and 1930s as they aspired to mobilize the diaspora around the exclusive cause of supporting Soviet Armenia. The state-centered, working-class-oriented and exclusivist policies made a tangible impact on various diasporic communities, triggering conflicts and confrontations between their supporters and opponents, as I will demonstrate by comparatively analyzing the effects of those policies in France and the U.S. in particular. These policies were implemented through the chapters of expanding Committee to Aid Armenia (Hayastani Ognutyan Komite) in various Armenian settlements in France and the U.S. in the context of the long-distance rivalry between the Soviet Armenian authorities and the leadership of the former Republic of Armenia and the party they represented—the Armenian Revolutionary Federation. I will contend in this paper that in their pursuit of state-centered exclusivist policies the Soviet leadership in Armenia, and the ARF leadership likewise, used similar strategies, which included: a) the discursive construction of Armenian collective needs centered around the perceptions of the Armenian state and homeland (Soviet Armenia or the Free and Independent Armenia), b) the creation of spaces of socialization, in which Armenian populations and their diaspora-born descendants would be exposed to these discourses on a regular bases, and c) the expansion of their respective governmental domains over the establishing and established Armenian spaces in the diaspora, which eventually involved in these rivalries the Diocese of the Armenian Church in the United States.

Թալին Գրիգոր

Թալին Գրիգորը Կալիֆոռնիայի Դևիսի համալսարանի Արվեստի և արվեստի պատմության ամբիոնում արվեստի պատմության պրոֆեսոր է։ Նրա հետազոտությունների առանցքում 19-րդ և 20-րդ դարերի Իրանի, Հայկական Իրանի և Ֆարսի Հնդկաստանի արվեստի և ճարտարապետության պատմությունն է՝ դիտված հետգաղութային և քննադատական տեսությունների անկյան տակ։ Նրա հեղինակած գործերի շարքում են «Պարսկական վերածնունդ. պատճենի իմպերիալիզմը իրանական և ֆարսի ճարտարապետության մեջ» գիրքը (2021 թ.), որն արժանացել է Սաիդի-Սիրջանի անվան գրքի մրցանակին, «Իրանական ժամանակակից արվեստ. փողոցից դեպի ստուդիա» (2014) և «Կառուցելով Իրանը. մոդեռնիզմը, ճարտարապետությունը և ազգային ժառանգությունը Փահլավի միապետների օրոք» գրքերը (2009)։

Talinn Grigor

Talinn Grigor is a professor of art history in the Department of Art and Art History at the University of California, Davis. Her research focuses on 19th- and 20th-century art and architectural histories through postcolonial and critical theories grounded in Iran, Armeno-Iran, and Parsi India. Her books include the winner of the Saidi-Sirjani Book Award, The Persian Revival: The Imperialism of the Copy in Iranian and Parsi Architecture (2021); Contemporary Iranian Art: From the Street to the Studio (2014); and Building Iran: Modernism, Architecture, and National Heritage under the Pahlavi Monarchs (2009).

«Սովետական ինտուրիստ». իրանա-հայկական մամուլը և հայրենադարձության մասին վիզուալ տրամաբերությունը

Հիմնվելով եվրոպական, հայկական և իրանական մամուլի ուսումնասիրությունների վրա՝ այս աշխատությունը ներկայացնում է Խորհրդային Հայաստանի մասին 1925-1958 թվականներին մի կողմից՝ «Սովետական ինտուրիստ»-ի և մյուս կողմից՝ իրանական հայալեզու թերթերի շարադրված վիզուալ տրամաբերությունները։ Դասեր քաղելով քարոզչական արվեստի պատմության էջերից՝ երկու պատումներն էլ անխնա պատկերում էին Խորհրդային Հայաստանը վիզուալ վառ լեզվով, որպես խաղաղասեր և խոստացված հավասարության երկիր, այսպես կոչված՝ սոցիալիստական ուտոպիա։ Երևանում և Թեհրանում ժամանակակից քաղաքաշինության և միջազգային ոճի ճարտարապետության լուսանկարները, ինչպես նաև ականավոր ճարտարապետների և արվեստագետների, այդ թվում՝ Ալեքսանդր Թամանյանի հոդվածները, նպատակ ունեին համոզել սփյուռքի հանրությանը այն իդեալում, որը ստալինյան սոցիալիզմն էր։ Թավրիզի «Արևելք»-ը (1943-45) և Թեհրանի «Վերածնունդ»-ը (1930-53) լավագույնս յուրացրել էին Ինտուրիստի՝ հայրենադարձության կոչ-արշավների քարոզչական պաստառների պատկերները։ «Արևելք»-ի առաջին էջի «Ներգաղթ» վերնագրով սյունակում պատկերված էր գնացքի նկար, որը թուջե կամրջով շարժվում էր դեպի Արարատ լեռը, որն էլ իր հերթին համարվում էր գործարանների և դպրոցների արդյունաբերական «հայրենիք»։ Հայկ Գարագաշը՝ «Վերածնունդ և Բոբոխ»-ի (1920-42) աղմկա-

հարույց խմբագիրը, էջեր է գրել «տուն վերադառնալու» վեհության մասին: Լինելով Ռեզա Շահի արագացված բարեփոխումների հավատարիմ պաշտպան, նա նաև Թեհրանի հայրենադարձության կոմիտեի հեղինակավոր անդամ էր։ «Վերածնունդ»-ի 1946 թվականի հունիսի համարի առաջին էջում հայտնվեց «Իրանի հայերի հայրենադարձությունը»՝ Երևանի համայնապատկերային լուսանկարով, որն ի ցույց է դնում Թամանյանի օպերային թատրոնի վեհությունը։ Ես պնդում եմ, որ այս տեսողական ռազմավարությունները կարևոր դեր են ունեցել Իրանի հայրենադարձության նախագծի համար հենց այն պատճառով, որ, ի տարբերություն Արևմուտքի և Լևանտի, Իրանում հայրենադարձության դիսկուրսը ուղղված էր ամենաաղքատ հայ գյուղացիական համայնքներին, որոնց մեծ մասը կրթված չէր կամ դպրոց չէր գնացել։ Տպագիր մամուլի էջերում ժամանակակից կառույցների և քաղաքային տեսարանների պատկերները հաստատում էին հայրենադարձության պատումի ճշմարտացիությունը, սակայն 23,489 իրանահայերը, որոնց մեծ մասը Սպահանի և Ադրբեջան նահանգի գյուղացիներ էին, ժամանելուն պես հանդիպեցին միանգամայն այլ, ոչ այնքան կատարյալ հայրենիքի։

Soviet Intourist, Irano-Armenian Press, and the Visual Discourse on Repatriation

Based on research in European, Armenian, and Iranian collections, this paper traces the visual discourses mounted about Soviet Armenia from 1925 to 1958 by the Soviet Intourist, on the one hand, and the Armenian-language Iranian newspapers, on the other. Taking lessons from the history pages of propaganda art, both narratives relentlessly portrayed, in striking visual terms, Soviet Armenia as a peace-loving and egalitarian promised land—a Socialist utopia. Photographs of modern urban planning and International Style architecture in Yerevan and Tehran, along with articles on eminent architects and artists, including notably Alexander Tamanian, aimed to persuade the diasporan public of the ideal that was Stalin's socialism. Tabriz's Arevelk (1943-45) and Tehran's Veratsnund (1930-53) appropriated the imagery of Intourist's propaganda posters in repatriation campaigns. A front-page column in Arevelk, entitled "Nergaght," was headlined by a drawing of a train headed towards Mount Ararat over a cast-iron bridge, destined for an industrialized "motherland" of factories and schools. Hayk Garagash, the vociferous editor of Veratsnund and Bobokh (1920-42), printed page after page on the nobility of a "return home." A staunch defender of Reza Shah's accelerated reforms, he was also a prominent member of the Repatriation Committee in Tehran. Veratsnund's June 1946 front page launched "the repatriation of Iran's Armenians" with a panoramic photograph of Yerevan, showcasing the majesty of Tamanian's Opera House. I argue that these visual strategies were instrumental to Iran's repatriation project precisely because, unlike the West and the Levant, the repatriation discourse in Iran was aimed at the poorest Armenian peasant communities, most of whom were uneducated or unschooled. On these pages, images of modern structures and cityscapes confirmed the veracity of the repatriation narrative, yet the 23,489 Irano-Armenians, most of them villagers from Isfahan and Azerbaijan provinces, encountered a different and not-so-perfect homeland upon arrival.

Տիգրան Ղանալանյան

Տիգրան Ղանալանյանը 2013 թ. ավարտել է ԵՊՀ Պատմության ֆակուլտետի մագիստրատուրան (Հայոց պատմության նոր և նորագույն շրջան), իսկ 2016 թ. ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտուրան՝ պաշտպանելով թեկնածուական աշխատանք «Սփյուռքի ներքին տեղաշարժերը 1988 թվականներին» թեմայով: 2008-2016 թթ.. եղել է «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հայագիտական կենտրոնի փորձագետ, իսկ 2021-2022 թթ..՝ Հայաստանի պատմության թանգարանի նոր և նորագույն պատմության բաժնի ավագ գիտաշխատող: 2014 թվականից դասավանդում է ԵՊՀ հայոց պատմության ամբիոնում (2022 թվականից դոցենտ): 2022 թվականից ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի սփյուռքագիտական հետազոտությունների բաժնի գիտաշխատող է: Հեղինակել է հայկական սփյուռքի պատմությանը վերաբերող գիտական աշխատանքներ: Գիտական հետաքրքրություններն ընդգրկում են հայկական սփյուռքի պատմությունն ու առհասարակ սփյուռքագիտությունը:

Tigran Ghanalanyan

Tigran Ghanalanyan was born in Yerevan in 1990. In 2013 he graduated with a master's degree in history from the Department of History of Yerevan State University, with an emphasis on modern Armenian history. In 2016 he completed the postgraduate course of the Armenian History Chair of Yerevan State University, defending his PhD thesis on "Internal Movements of Armenian Diaspora from 1945 to 1988." From 2008 to 2016, he worked as an expert in the Center of Armenian Studies of the Noravank Scientific and Educational Foundation, and from 2021 to 2022, he was a senior researcher in the Department of New and Modern History at the History Museum of Armenia. Since 2014, he has been lecturing as the Chair of Armenian History at Yerevan State University (Associate Professor since 2022). Since 2022, he has been a researcher in the Department of Diaspora Studies at the Yerevan State University Institute of Armenian Studies. The scope of his academic interests includes the history of the Armenian diaspora and diaspora studies in general, about which he has authored several scientific papers.

Արտագաղթը Խորհրդային Հայաստանից 1956-1991 թթ.

Զեկուցումը նվիրված է պատմագիտության ուշադրությանը գրեթե չարժանացած, սակայն հետպատերազմյան (հատկապես 1970-1980-ական թթ..) խորհրդահայ իրականության կարևոր մի իրողության՝ արտագաղթի ուսումնասիրությանը: Փորձ է արվելու ներկայացնել 1956-1991 թթ.. Խորհրդային Հայաստանից տեղի ունեցած արտագաղթի ընդհանուր պատկերը՝ վերլուծելով Հայաստանի ազգային արխիվի և ԱՄՆ ազգային արխիվի փաստաթղթերը, ինչպես նաև սփյուռքահայ և ամերիկյան մամուլը: Պատմագիտական այս հետազոտությունում արտագաղթը քննարկվելու է նաև սփյուռքագիտության ու միգրացիայի

ուսումնասիրությունների տեսությունների համատեքստում: Խնդիր է դրվում բացահայտել 1956-1991 թթ.. Խորհրդային Հայաստանից տեղի ունեցած արտագաղթի պատճառները, ծավալները, ընթացքը, դերակատար կազմակերպությունների շրջանակը, ինչպես նաև ՀԽՍՀ-ի, ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի դիրքորոշումներն այս հարցում: Արտագաղթը քննարկվելու է առհասարակ տվյալ ժամանակաշրջանում ԽՍՀՄ-ից տեղի ունեցած արտագաղթի համատեքստում՝ զուգահեռներ տանելով հրեաների ու գերմանացիների գաղթի հետ: Հայերի արտագաղթը այս ժամանակաշրջանում գերազանցապես ուղղված էր ԱՄՆ, ինչպես նաև Ֆրանսիա, Լիբանան և որոշ այլ երկրներ: Գաղթողների գերակշիռ մասը հայրենադարձներն էին (հատկապես 1946-1949 թթ.. ներգաղթած): Նրանց բացարձակ մեծամասնությունը Խորհրդային Հայաստան էր տեղափոխվել Միջին Արևելքի ու Բալկանյան երկրներից, սակայն արտագաղթելիս նախընտրում էր փոխադրվել ԱՄՆ: Ուշադրություն է դարձվելու նոր երկրներում արտագաղթածների համարկման հարցերին (թե՛ ներհայկական իմաստով, թե՛ ընդհանրապես): Քննարկվելու է Սառը պատերազմի (և դրա փուլերի) ազդեցությունը գործընթացի վրա: Ոչ պակաս, նույնիսկ ավելի էական է խորհրդային պետությունում տիրող ներքին զարգացումների ազդեցությունը գործընթացի վրա: Ամենևին պատահական չէ, որ չնայած ավելի վաղ ցանկության առկայությանը, հայրենադարձները (թե՛ ամերիկահայերը, թե՛ ֆրանսահայերը) գործնական քայլերի դիմեցին հենց 1956 թ.-ին: Ներկայացվելու է նաև սփյուռքահայ կառույցների դիրքորոշումը Խորհրդային Հայաստանից արտագաղթի վերաբերյալ՝ այն դիտարկելով ընդհանրապես սփյուռքահայ հասարակական խոսույթի շրջանակներում: Չնայած նշյալ ժամանակաշրջանում եղել է նաև ՀԽՍՀ–ից արտագաղթ ԽՍՀՄ այլ հանրապետություններ (առաջին հերթին Խորհրդային Ռուսաստան), սակայն դրա ներկայացումը չի հանդիսանալու սույն զեկուցման հիմնական խնդիրներից, ինչպես և ազգային փոքրամասնությունների (գլխավորապես ադրբեջանցիների) արտագաղթը:

Emigration from Soviet Armenia from 1956 to 1991

The presentation is devoted to the study of emigration, an important reality of post-war Soviet Armenian life (especially the 1970-1980s), which has been largely disregarded by historiography. An attempt will be made to paint a general picture of emigration from Soviet Armenia between 1956 and 1991 through the analysis of documents from the National Archives of Armenia, the National Archives of the United States, as well as diaspora Armenian and American press. In this scientific study, emigration will be also discussed in the context of the theories of Diaspora Studies and Migration Studies. The problem lies in identifying the causes, scale, process, scope of the acting organizations, and the positions of the Armenian Soviet Socialist Republic, the USSR, and the USA regarding the 1956-1991 emigration from Soviet Armenia. Emigration from Soviet Armenia will be explored through the lens of emigration from the USSR during the given period, drawing parallels with that of Jews and Germans. In this period, Armenians mainly emigrated to the United States, as well as to France, Lebanon and other countries. The vast majority of the emigrants were repatriates (especially those who

immigrated in 1946-1949). This majority had moved to Soviet Armenia from countries of the Middle East and the Balkans, yet when emigrating, they preferred to settle in the United States. Issues of emigrant integration in their new countries (both in the intra-Armenian sense and in general) will be discussed. The impact of the Cold War (and its stages) on the process will be addressed. Equally as important is the impact of the internal developments of the Soviet state on the process. It is no coincidence that despite their earlier desire to emigrate, the repatriates (both American Armenians and French Armenians) took practical steps in 1956 only. In addition, the position of diaspora Armenian organizations regarding the emigration from Soviet Armenia will be presented, placing it in the framework of diaspora Armenian public discourse in general. Despite the emigration from Soviet Armenia to the other republics of the USSR (primarily Soviet Russia) during the given period of time, its presentation, as well as the emigration of national minorities (mainly Azerbaijanis) will not be one of the main issues of this report.

Գայանե Շագոյան

Գայանե Շագոյանը ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի առաջատար գիտաշխատող է: Սովորել է ԵՊՀ-ում (մագիստրոս, 1995 թ., Պատմության ֆակուլտետ, Ազգագրության ամբիոն) և 2010 թ.-ին Հնագիտության և ազգագրության ինստիտուտում ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Գիտական հետաքրքրությունների դաշտում են հայկական ավանդական և ժամանակակից առօրյան, քաղաքի և հիշողության մարդաբանությունները: Հեղինակ է շուրջ 100 հրապարակումների, այդ թվում՝ «Յոթ օր և յոթ գիշեր. հայոց հարսանիքի համայնապատկեր», 2011, Երևան. «Գիտություն», 618 էջ, "The Camcorder Operator As a New Character in the Armenian Wedding" (Anthropology & Archaeology of Eurasia, 2000, 38 (4): 9-29), և «Երկրաշարժի մեմորիալիզացիան Գյումրիում» (Antrpopologicheskii Forum, 2009, 11: 328-369 և այլն):

Gayane Shagoyan

Gayane Shagoyan is a leading researcher at the Department of Cultural Anthropology of the Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences of Armenia. She was educated at Yerevan State University (MA, 1995, Department of History, Chair of Ethnography) and received her PhD in Anthropology at the Institute of Archaeology and Ethnography in 2010. Her areas of research include Armenian traditional and contemporary daily life, urban studies, and anthropology of memory. She is the author of dozens of publications including "Seven Days and Seven Nights: Panorama of the Armenian Wedding," 2011, Yerevan, "Gitutyun," 618 p., "The Camcorder Operator As a New Character in the Armenian Wedding" (Anthropology & Archaeology of Eurasia, 2000, 38 (4): 9-29) and "The Memorialization of the Earthquake in Gyumri" (Antrpopologicheskii Forum, 2009, 11: 328-369, etc.).

Երկաթե վարագույրը ճեղքած երկրաշարժը. աղետը խորհրդային ռեժիմի պայմաններում

Խորհրդային կարգերի փլուզման մեկնարկը Հայաստանի տարբեր շրջաններում հաշվում են տարբեր իրադարձություններից: Եթե երևանցիների համար այն ավելի շատ «ղարաբաղյան շարժումն» էր, որը վերջ դրեց բազմազգ կայսրությանը, ապա Հայաստանի հյուսիսում բնակվողների համար դա 1988 թ. ավերիչ երկրաշարժն էր: Սակայն, բացի խորհրդային ներկայությունը ֆիզիկապես ջնջելուց, ավաղ, հազարավոր մարդկային զոհերով հանդերձ, երկրաշարժը անսպասելիորեն տարածք բացեց նաև մի շարք նոր երևույթների համար, որոնք բավականին խորթ էին խորհրդային պետությանը. դրանց թվում են մամուլի նոր լեզուն (Մարտիրոսյան 2012, Շագոյան 2014), նոր նյութականությունը (վերաբերմունքը սեփական ունեցվածքին և հումանիտար օգնության միջոցով ձեռք բերված անսովոր արտադրանքին), նոր քաղաքացիական կառույցները (միջազգային կառույցների հետ հասանելի շփում), նոր հաստատությունները (Հայաստանի Ամերիկյան համալսարան) և այլն: Երկրաշարժի սոցիալական, մշակութային և քաղաքական հետևանքները դեռևս կարոտ են առանձին ուսումնասիրությունների ու վերլու-

ծությունների, թեև համարվում է, որ այս երկրաշարժն առավել լավ ուսումնասիրված աղետներից է՝ համեմատ այլ աղետների միջազգային փորձի (Նազարեթյան 2023)։ Սույն զեկուցմանը համեմատելու եմ ԽՍՀՄ-ի արձագանքը երեք ավերիչ երկրաշարժերին, որ տեղի ունեցան այդ երկրի տարածքում (Ալմա-Աթայի՝ 1948 թ., Տաշքենդի 1966 թ., և Սպիտակի 1988 թ.)՝ խնդիրը դիտարկելով համապատասխան քաղաքական համատեքստերում (հմմտ. Ստալինի, Բրեժնևի և Գորբաչովի դիրքավորումները աղետների հանդեպ)։ Համադրվելու են մամուլի արձագանքն ու այն որակական փոփոխությունները, որ տեղի ունեցան կամ անտեսվեցին օրվա իշխանությունների և հասարակությունների կողմից՝ բերելով տարբեր հետևանքների թե՛ շինարարական նորմերի առումով, թե՛ քաղաքացիական շարժումների, թե՛ խոսքի ազատության և թե՛ կրոնական շարժումների հանդեպ։ Սպիտակի երկրաշարժի աննախադեպ լուսաբանումը, որը տեղի էր ունենում «Գլասնոստի» պայմաններում, կարող էր թերևս կապվել միայն խոսքի ազատության քաղաքականության հետ։ Սակայն մինչ այդ՝ նույն հայտարարված քաղաքականության պայմաններում տեղի էր ունեցել Չերնոբիլի աղետը, որը բավականին երկար ժամանակ փորձում էին կոծկել։ Ուստի՝ քննարկման առարկաներից է լինելու, թե որքանով նման լուսաբանման վրա ազդել էր «ղարաբաղյան շարժումը» և/կամ նույն Չերնոբիլի աղետի հետևանքներին առերեսվելու փորձառությունը։

The Earthquake that Broke the Iron Curtain: Disaster Under the Soviet Regime

The starting point of the collapse of the Soviet regime is marked by different events in different regions of Armenia. If, for the population in Yerevan, the “Karabakh movement” ended the multinational empire, then for the people living in the north of Armenia it was the devastating earthquake of 1988. However, in addition to physically erasing the Soviet presence along with thousands of human victims, the earthquake also opened up an unexpected space for a number of new phenomena quite alien to the Soviet state, including the new language of the press (Martirosyan, 2012, Shagoyan, 2014), new materiality (the attitude of one’s ownership of property and unusual products obtained through humanitarian aid), new civic structures (accessible contact with international structures), new institutions (American University of Armenia), and so on. The social, cultural, and political consequences of the earthquake still need special study, although this earthquake is considered a more well-studied disaster compared to other catastrophes (Nazaretyan, 2023). In my presentation, I will compare the response of the USSR to the three devastating earthquakes that occurred within its territory (Alma-Ata in 1948, Tashkent in 1966, and Spitak in 1988), considering the problem in their corresponding political contexts (cf. Stalin, Brezhnev and Gorbachev’s positioning on disasters). The reaction of the press and the qualitative changes that took place or were ignored by the authorities and societies will be compared among the three earthquakes, mentioning different consequences in terms of constructive norms, civic movements, freedom of speech, and religious movements. The unprecedented coverage of the Spitak earthquake, which took place under the “Glasnost,” could perhaps be connected only with the new policy of free speech. However, before that, under the same conditions of the free speech policy, the Chernobyl disaster happened, which was attempted to be covered up for quite a long time. I will discuss how much the “Karabakh movement” and/or the experience of facing the aftermath of the same Chernobyl disaster influenced the larger coverage of the Spitak earthquake.

Գոհար Ստեփանյան

Գոհար Ստեփանյանը մշակութային մարդաբան է, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է տոնի և ծեսի մարդաբանությունը, ժողովրդական քրիստոնեությունը, ժամանցային խնդիրները, ինչպես նաև խորհրդային քաղաքական բռնություններն ու խորհրդային և հետխորհրդային առօրեականությունը: Հեղինակ է «Նոր տարուց Վերջին զանգ. տոնական պրակտիկաներ, հիշողություն և վերակազմում» մենագրության (Երևան, ՀԱԻ հրատ., 2020, 432 էջ) և ավելի քան երկու տասնյակ գիտական հոդվածների և հրապարակումների:

Gohar Stepanyan

Gohar Stepanyan, Ph.D., is a Senior Researcher at the Department of Cultural Anthropology of the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of Armenia. Her research interests include the anthropology of fest and ritual, folk Christianity, leisure issues, as well as Soviet political violence and Soviet and post-Soviet everyday life. She is the author of the monograph From New Year to the Last Ring: Festive Practices, Memory and Reconstruction (Yerevan, HAI ed., 2020, 432 pages) and more than two dozen scientific articles and publications, which are mainly related to holiday culture, modern religious and leisure practices, New Day rituals, and Soviet political violence.

Ընտանեկան ժառանգություն-ճամպրուկը խորհրդային մշակութային, ազգային քաղաքականությունների և արդիականացման խաչմերուկում. պարի ազգագրական խմբերը

Հանրային և հաճախ նաև հետազոտական տրամաբերություններում, երբ անդրադարձ է արվում խորհրդային երկրում մշակութային ինքնագործունեությանը, մասնավորապես, ազգային/ազգագրական պարի խմբերին, որպես կանոն, խոսքը սկսվում է Ձնհալի ժամանակաշրջանից: Համարվում է, որ հենց այս տարիներից է, որ, հետևելով մինչ այդ «լռեցված» ցեղասպանության և Արևմտյան Հայաստանի թեմաների բարձրաձայնմանը, որոշակի դաշտ ստեղծվեց և ազգային ինքնության այլ ցուցիչների և, դրանց շարքում թերևս առաջնային տեղ զբաղեցնող երգերի ու պարերի հրապարակ դուրս գալու համար: Հիմնական հարթակը մշակույթի տներն էին՝ ձևավորված կուլտուր-լուսավորական վաղ շրջանի հիմնարկների՝ խրճիթ-ընթերցարանների և ակումբների հիմքի վրա: Եթե վերջիններիս գործունեության մեջ շեշտադրված էին կրթական/լուսավորական և ագիտացիոն/պրոպագանդիստական բաղադրիչները, ապա մշակույթի տներում որոշիչ դարձավ ժողովրդական ինքնագործունեությունը, մասնավորապես՝ ազգագրական պարի խմբերի դերը: Այն մի զգալի չափով սնունդ էր առնում ընտանիքի ծածկի տակ պահվող մշակութային ժառանգության ճամպրուկից՝ ազգային պարերով, երգերով ու տարազով: Խորհրդային տարիներին

ճամպրուկը բացողների շարքում հայտնվեց և պետությունը՝ մշակութային շինարարության կառույցների՝ մշակույթի տների միջոցով, որի աշխատակիցները վերածվեցին յուրօրինակ բանահավաքների: Արդյոք ժառանգություն-ճամպրուկը պինդ փակված էր մինչ այդ, կամ եթե բացվել էր, ապա ինչպես և ինչ չափով: Գեղարքունիքի մարզի Մարտունու շրջանի մշակույթի տների խորհրդային անցյալի և դրանց ժառանգության հետխորհրդային վերաիմաստավորման հնարավորությունների հարցերի շուրջ մեր հետազոտությունը վկայում է ժառանգություն-ճամպրուկի որոշակիորեն բացվելու մասին դեռ 1930-ականներին՝ դպրոցներում ազգային պարերի ուսուցման մասին բանասացների հիշողություններով: Նրանցից որոշներն անգամ կարևորում են այդ տարիներին պարային ժառանգության ուսուցումը՝ 1960-ականներին այս տարածաշրջանում մշակույթի տների գործունեության լոկոմոտիվը դարձած պարի ինքնագործ խմբերի ստեղծման մեջ: Դաշտից եկող այս նյութը հաստատվում է պարային քաղաքականությունը քննարկող կոնկրետ հետազոտություններով, որոնք անդրադառնում են 1930-ականների կեսերից խորհրդային կառավարության հետաքրքրության կիզակետում ժողովրդական պարի հայտնվելու խնդրին` ցույց տալու համար Խորհրդային Միության բազմէթնիկությունն ու խաղաղ եղբայրական գոյակցությունը (Shay 2002): Ահա այս հարցերն ենք մտադիր շոշափել ներկա հաղորդման մեջ՝ ինչպե՞ս էր տեղավորվում ժառանգության ճամպրուկը խորհրդային ազգային քաղաքականության միաժամանակ երկու՝ ազգաշինության և ինտերնացիոնալիզմի զուգահեռ ծրագրերում, հատկապես նկատի ունենալով հետազոտության օբյեկտ տարածաշրջանի բնակչության արևմտահայկական արմատները (Ալաշկերտ, Մուշ), ի՞նչ կերպ կազմակերպվեցին նշված խմբերը, ի՞նչ դեր ունեցավ ընտանիքը դրանց ձևավորման գործում, ինչպե՞ս անդրադարձավ դրանց գործունեությունը ընտանեկան փոխհարաբերությունների և խորհրդային գյուղի արդիականացման վրա:

Family Heritage-Suitcase at the Crossroads of Soviet Cultural, National Policies and Modernization: Dance Ethnographic Groups

In public and research discourse, when reference is made to cultural self-activity in the Soviet Union, in particular to national/ethnographic dance groups, as a rule, the discussion usually begins with the Dznhal period. It is believed that it is from this period that, following the raising of the (until then) “silent” Genocide and Western Armenian topics, a certain field was created for the emergence of other indicators of national identity and, perhaps taking a primary place among them, song and dance. The main platform was the House of Culture, formed on the basis of early cultural-enlightenment institutions, hut-reading rooms and clubs. If the educational/enlightenment and agitation/propagandist components were emphasized in the activities of the latter, then in the Houses of Culture, popular self-activity, in particular the role of ethnographic dance groups, became decisive. It took food, to a considerable extent, from the suitcase of cultural heritage kept under the family cover, with national dances, songs and costumes. During the Soviet years, the state appeared among those who opened the suitcase, through the structures of cultural construction, the Houses of Culture, whose employees turned into unique collectors. Was the inheritance-suitcase tightly closed before that, and, if it was opened, how and to what extent? Our research on the issues

of the Soviet past of the Houses of Culture in the Martun region of Gegharkunik marz and the possibilities of post-Soviet reinterpretation of their heritage testifies to a certain opening of the heritage-suitcase back in the 1930s, with the memories of linguists on teaching national dances in schools. Some of them even emphasize the teaching of dance heritage in those years, in the creation of self-made dance groups, which became the locomotive of the activities of the Houses of Culture in this region in the 1960s. This material from the field is corroborated by specific research on dance policy, which addresses the emergence of folk dance as a focus of interest for the Soviet government from the mid-1930s to demonstrate the multi-ethnicity and peaceful fraternal coexistence of the Soviet Union (Shay 2002). How was the suitcase of heritage placed in two parallel programs of the Soviet national policy: nation-building and internationalism, especially considering the Western Armenian roots of the population of the region (Alashkert, Mush)? How were the mentioned groups organized, and what role did the family play in their formation? How did their activities affect family relationships and the modernization of the Soviet village? I intend to touch upon these questions in my presentation.

Հայկուհի Մուրադյան

Հայկուհի Մուրադյանը պատմական գիտությունների թեկնածու է: Նրա հետազոտական հետաքրքրությունները ներառում են են մշակութային մարդաբանության, կիրառական մարդաբանության, մշակութային քաղաքականության և ժառանգության ոլորտները: Նա դասախոսում է ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Մշակութաբանության ամբիոնում: Դասավանդվող առարկաներն են Մշակութաբանության ներածություն, Մշակութային քաղաքականություն և Նոր ժամանակների և ժամանակակից հայ մշակույթ: Հայկուհի Մուրադյանը դասավանդում է նաև ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտում Մշակութային ցեղասպանության հիմունքներ դասընթացը: Ունի շուրջ երկու տասնյակ հրատարակված հոդվածներ, որոնցից կարևոր է առանձնացնել «Արցախի մշակութային ժառանգությունը հարձակումների թիրախում» հոդվածը Համլետ Պետրոսյանի հետ համահեղինակությամբ, որը լույս է տեսել 2022 թ.-ին:

Haykuhi Muradyan

Haykuhi Muradyan is a Candidate of Historical Sciences. Her research interests focus on cultural anthropology, applied anthropology, anthropology of politics and heritage management. She currently lectures in the Department of Cultural Studies at Yerevan State University, teaching courses on Introduction to Cultural Studies, Cultural Policy, and Armenian Culture of the Modern Period. She also teaches a course on Theories of Cultural Genocide at the Department of Genocide Studies at the Institute of Armenian Studies at Yerevan State University. One of her most important publications is “The Cultural Heritage of Artsakh at the Cross-Hairs of Attacks” with co-author Hamlet Petrosyan, published in 2022.

Նժդեհ Երանյան

Նժդեհ Երանյանը մշակութաբան-հնագետ է: Նրա հետազոտությունները վերաբերում են ինչպես Հայաստանի հնագիտությանը, այնպես և Հայաստանում խորհրդային և հետխորհրդային տարիներին մշակութային ժառանգության պահպանության տարբեր խնդիրներին: Նա աշխատում է Հայաստանի պատմության թանգարանում՝ որպես գիտական գծով փոխտնօրեն, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում որպես գիտաշխատող:

Nzhdeh Yeranyan

Nzhdeh Yeranyan, Ph.D., studies the archeology of the South Caucasus, particularly the Bronze-Iron Age landscape and the culture of anthropomorphic stele. He is the co-author of more than a dozen articles on these topics and a book on the monument culture of Artsakh (Petrosyan H., Yeranyan N., The Monumental Culture in Artsakh, Yerevan, 2022). He works in the History Museum of Armenia as the Deputy Scientific Director and in the Institute of Archaeology and Ethnography of the Republic of Armenia National Academy of Sciences.

Քաղաքի խորհրդային կերպարի կառուցումը 1960-ական թ..-ին. քաղաքական և մշակութային ասպեկտները (Գորիս քաղաքի օրինակով)

Խորհրդային 60-ական թթ.. բնորոշվում են քաղաքական և հատկապես մշակութային ազատականացմամբ ու խորհրդային մշակույթի նոր «բանաձևի» ստեղծմամբ, որը պայմանավորված էր նախևառաջ ստալինյան քաղաքականության քննադատության, խորհրդային «հին» համակարգի մերժման և խրուշչովյան նոր, ավելի ազատ քաղաքականության ներմուծմամբ: Դա հատկապես վերաբերում էր ստալինյան բռնաճնշումներին ենթարկվածների արդարացմանն ու ուղեկցվում նրանց գործած «մեղքերից» մաքրման քաղաքականությամբ: Այս քաղաքականության համատեքստում խորհրդային քաղաքների մշակութային կերպարը հաճախ սկսում է ձևավորվել սովետական այն մտավորականների կերպարի շուրջ, ովքեր ենթարկվել են ստալինյան ռեպրեսիաներին: Այս զեկույցը նվիրված է «բակունցյան Գորիսի» մշակութային կերպարի ձևավորմանը 1960-ական թթ..-ին: Գորիսը քաղաքի կարգավիճակ է ստացել 1870 թվականին և կարող ենք փաստել, որ 19-րդ դարի երկրորդ կեսին Սյունիքի լեռներում ձևավորվում է մի քաղաքային բնակավայր: Հիմնադրվող Գորիսը միանգամից քաղաք չդարձավ, այն սկզբում պարզապես հիմնվեց որպես վարչաառևտրական կենտրոն, որի ընդարձակման տեմպերը պայմանավորված էին լեռնային պայմանների ընձեռած սուղ հնարավորություններով և երկաթուղու բացակայությամբ: Հայաստանի խորհրդայնացումից հետո քաղաքի կառուցման աշխատանքները ավելի լայն թափով շարունակվեցին, ստեղծվեցին խորհրդային քաղաքային ենթակառուցվածքները: Զեկույցը մանրմասն անդրադառնում է հատկապես 1960-70-ական թթ.. «բակունցյան Գորիսի» մշակութային կերպարի ձևավորմանը, թանգարանի, մշակույթի կենտրոնների և քաղաքի հուշարձանացման գործընթացին և այդ կերպարի հետխորհրդային փոխակերպումներին: Հետազոտությունը հիմնված է դաշտային աշխատանքների վրա, որոնք անց են կացվել ՀՀ գիտպետկոմի կողմից ֆինանսավորվող «Համայնքը և հանրային մշակութային տարածքի փոխակերպումները հետխորհրդային Հայաստանում սահմանամերձ բնակավայրերի օրինակով» ծրագրի շրջանակներում:

Constructing the Soviet Image of the City in the 1960s: Political and Cultural Aspects (the Case of Goris)

The Soviet 1960s are characterized by political and especially cultural liberalization, the creation of a new “formula” of Soviet culture, which was primarily due to the criticism of Stalin’s policy, the rejection of the “old” Soviet system and the introduction of a new policy by Khrushchev. This was particularly related to the policy of acquitting those subjected to Stalin’s confiscations and “cleansing” them of their “sins.” In the context of this policy, the cultural image of Soviet cities was often created around the image of Soviet intellectuals who were subjected to Stalinist repressions. This report is dedicated to the formation of the cultural image of “Bakuntsyan Goris” in the 1960s. Goris received the status of a city in 1870, and we can conclude that in the second half of the 19th century, an urban settlement was formed in the mountainous Syunik. The newly founded Goris did not immediately become a city, it was simply established as an ad-

ministrative and commercial center, the pace of expansion of which was determined by the limited opportunities provided by the mountainous conditions and the absence of a railway. After the Sovietization of Armenia, the construction of the city continued with wider momentum, and the Soviet urban infrastructures were created. This report deals in detail with the formation of the cultural image of Goris in the 1960s-70s, the commemoration process of the museum, cultural centers and the city, and the post-Soviet transformations of that image. The research is based on fieldwork, which was carried out within the framework of the project "Community and transformations of public cultural space in post-Soviet Armenia on the example of border settlements," funded by the Republic of Armenia State Scientific Committee.

Ալեքսանդր Ֆոկին

Ալեքսանդր Ֆոկինը պատմական գիտությունների թեկնածու է և Ռուսաստանի Տյումենի պետական համալսարանի Պատմության ամբիոնի ասիստենտ: Նա 2013 և 2017 թվականներին կրթաթոշակ է ստացել Մոսկվայում Գերմանական պատմական ինստիտուտից, իսկ 2020 թվականին՝ Վիշեգրադի Բաց հասարակության արխիվից: Նրա հրապարակումների թվում են «Կոմունիզմը սարերի հետևում չէ. 1950-1960 թթ.. իշխանության և ԽՍՀՄ բնակչության ապագայի պատկերացումները» (Մոսկվա, 2017 թ.), ինչպես նաև հեղինակել է գրքերի հետևյալ գլուխները. «Kulturangelegenheiten auf den KPdSU-Parteitagen der 1960er und 1970er Jahre / Hochkultur für das Volk? Literatur, Kunst und Musik in der Sowjetunion aus kulturgeschichtlicher Perspektive» (Մյունխեն, 2018 թ. էջ 117-136) և «Կանայք և նրանց «շողշողուն ապագան». ԽՍՀՄ-ում կոմունիզմի կառուցումը կանանց՝ կառավարության ուղղված նամակներում» (960): («Կոմունիզմի պատմությունը Եվրոպայում. կոմունիզմի մյուս կեսը. կանանց աշխարհայացքը», 2017 թ. № 8. էջ 285-299):

Aleksandr Fokin

Aleksandr Fokin is a Candidate of Sciences in History, and Assistant Professor in the Department of History of the Russia Tyumen State University. He is a 2013 and 2017 scholarship recipient from the German Historical Institute in Moscow, and a 2020 recipient of the Visegrad Scholarship at the Open Society Archives. His publications include “Communism is Not Far Off: Images of the Future in Power and the Population of the USSR 1950-1960” (Moscow, 2017), as well as the following book chapters: “Kulturangelegenheiten auf den KPdSU-Parteitagen der 1960er und 1970er Jahre / Hochkultur für das Volk? Literatur, Kunst und Musik in der Sowjetunion aus kulturgeschichtlicher Perspektive” (Munich, 2018. pp. 117-136), and “Women and Their ‘Radiant Future:’ Construction of Communism in the USSR in Women’s Letters to the Government (1960s)” (History of Communism in Europe: The Other Half of Communism: Women’s Outlook. 2017. № 8. pp. 285-299).

«Ակնկալում ենք, որ բացահայտեք գյուղի բոռերին». օրինական բողոքը ղեկավարության դեմ ուշխորհրդային Հայաստանում

Կարծրատիպ կա, որ խորհրդային քաղաքացիները պասիվ փղշտացիների «գորշ զանգված» էին, որոնք ընտրում էին հարմարվելու և փոխզիջումների մարտավարություն: Այս տեսակետը առավել հստակորեն արտահայտված է հոմոսովետիկուսի հայեցակարգում: Աշխատելով արխիվների հետ, որոնցում պահվում էին կուսակցական իշխանության փաստաթղթերը և հասարակ մարդկանց նամակները, կարելի է տեսնել բազմաթիվ օրինակներ, որտեղ քաղաքացիները ոչ թե պասիվ, այլ ակտիվորեն արտահայտում էին իրենց բողոքը տարբեր մակարդակների ղեկավարների դեմ: Դրա վառ օրինակներն էին խորհրդային ընտրություններն ու նամակներն իշխանություններին: Չնայած նրան, որ խորհրդա-

յին ընտրությունները այլընտրանք չէին տալիս, և մարդիկ քվեարկում էին մեկ թեկնածուի օգտին, բայց կարող էին իրենց դժգոհությունն արտահայտել դեմ քվեարկելով։ Երբ մարդը պատգամավոր չէր ընտրվում, դա ոչ թե ընկալվում էր որպես բնակչության հակասովետական պահվածք, այլ կուսակցական ֆունկցիոներների ձախողում, ովքեր ընտրել էին խորհրդային քաղաքացիներին դուր չեկած թեկնածուի։ Բացի այդ, մարդիկ կարող էին հրաժարվել քվեարկությունից՝ ի նշան բողոքի կամ իրենց քվեաթերթիկների վրա բացասական բովանդակությամբ գրություններ թողնել։ Բողոքի օրինականացված ձևերից մեկը խորհրդային տարբեր իշխանություններին ուղղված նամակներն էին։ Կուսակցական իշխանությունները պարտավոր էին քննարկել խորհրդային քաղաքացիների բողոքները, որոնք հաճախ անանուն էին, և հաշվետվություններ գրել ստացված տեղեկատվության ստուգման վերաբերյալ։ Հաճախ նման նամակները տեղային խնդիրների լուծման միջոց էին և թույլ էին տալիս բացահայտել տեղական հակամարտությունները։ Հիմնվելով Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերի վրա՝ կներկայացնեմ 1960-1970-ական թվականներին Հայաստանում տեղի ունեցած նման հակամարտությունների մի քանի դեպքերի վերլուծություն և դրանք կտեղադրեմ ԽՍՀՄ ուշ շրջանում խորհրդային համակարգի գործունեության ավելի լայն համատեքստում։

“We are Waiting for You to Identify the Gadfly of the Village:” A Legal Protest Against Leadership in Late Soviet Armenia

There is a stereotype that Soviet citizens were a “grey mass” of passive philistines who chose tactics of accommodation and compromise. This view is most clearly articulated in the concept of Homo Sovieticus. Working with archives, in which documents of the party authorities and letters from ordinary people were deposited, one can see many examples where citizens not passively, but rather actively, expressed their protest against leaders at various levels. Clear examples of this were the Soviet elections and letters to the authorities. Despite the fact that the Soviet elections did not provide alternatives and people voted for one candidate, they could show their discontent by voting against them. When a person was not elected a deputy, it was perceived not as anti-Soviet behavior by the population, but as a failure by the party functionaries who had chosen a candidate that the Soviet citizens did not like. In addition, people could refuse to vote in protest or leave negative inscriptions on their ballots. Another form of legalized protest was letters to various Soviet authorities. The party authorities were obliged to consider complaints from Soviet citizens, which were often anonymous, and to write reports on the verification of the information received. Often such letters were a way of dealing with local problems and enabled local conflicts to be revealed. Based on my work with documents from the National Archives of Armenia, I will present an analysis of several cases of such conflicts that took place in Armenia in the 1960s and 1970s and place them within the wider context of the functioning of the Soviet system in the late USSR.

Աղասի Թադևոսյան

Աղասի Թադևոսյանը մշակութային մարդաբան է, ազգագրագետ: Աշխատում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում որպես առաջատար գիտաշխատող: Ունի հրատարակած 18 մենագրություն և շուրջ 100 գիտական հոդված ինչպես հայկական ժողովրդական մշակութային ժառանգության, այնպես էլ ժամանակակից հասարակական-մշակութային գործընթացների վերաբերյալ: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է անցումային գործընթացների և քաղաքային առօրեականության մարդաբանություն, աղքատության և միգրացիոն հետազոտություններ, մշակութային տուրիզմ ու ավանդական և ժամանակակից արհեստներ: 2012-2013 թթ.. ակադեմիական տարում որպես հետազոտող և Ֆուլբրայթի կրթաթոշակառու հրավիրվել է աշխատելու Կալիֆոռնիայի Բերքլիի համալսարանում:

Aghasi Tadevosyan

Aghasi Tadevosyan holds a PhD in Cultural Anthropology, certified by the Supreme Certifying Committee of the Republic of Armenia in 1995. He graduated from the Department of History of Yerevan State University in 1991. His main research interests include cultural transition and value transformation, modernization, anthropology of city and space, anthropology of social changes and poverty, civil movements and migration processes of post Soviet Armenia. He has authored and co-authored 18 monographs and more than 70 scientific articles published in Armenian, English and Russian. From 2001, he has been a lecturer in the Department of Cultural Studies, Archaeology and Ethnography at Yerevan State University. He is also Senior Scientist at the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia and was a Fulbright Visiting Scholar at the University of California, Berkeley for the 2012-2013 academic year.

Խորհրդահայ առօրեականության ապախորհրդայնացման պրակտիկաները 1970-80-ական թվականների Երևանում

Ներկայացվող զեկույցը հիմնված է ուշխորհրդային շրջանին վերաբերող իմ գրանցած բանավոր պատմությունների վրա: Դրանցում 1970-1980-ական թվականները հաճախ բնութագրվում են որպես Հայաստանի Խորհրդային շրջանի առավել բարեկեցիկ և համեմատաբար «ազատ» տարիներ: Այդ ազատության գլխավոր բնութագրիչներից մեկը համարվում է ապասովետական դիսկուրսների ու պրակտիկաների տարածումը առօրյա կյանքում: Ապասովետականացումը շատ հետաքրքիր մի երևույթ էր, որ Խորհրդային Միության տարածքում սկիզբ առավ 1960-ականներին, սակայն առավել տարածում ստացավ հենց 1970-80-ականներին: Դրա առանձնահատկությունն այն էր, որ չուներ բացեիբաց հակասովետական բնույթ: Այն պարզապես չէր տիրաժավորում խորհրդային ֆորմալ-պաշտոնական դիսկուրսներն ու պրակտիկաները: Առաջին հայացքից հակասովետական բնույթ չունեցող, թվացյալ չեզոքության շնորհիվ այդ պրակտիկաները անտեսվում էին խորհրդային վերահսկողական կառույցների

կողմից և աստիճանաբար տարածվում առօրյա կյանքի նորանոր ոլորտներում: Այս զեկույցում նշված երևույթը կներկայացվի քաղաքային մոդայի և ժամանցի պրակտիկաների օրինակով: Ցույց կտրվի, թե ինչպես այդ պրակտիկաներում խորհրդային մարդու համար «վերևից» նախատեսված ֆորմալ-պաշտոնական ոճականությունը մերժվում էր անհատական մակարդակում ապասովետականացվելու ճանապարհով: Օրինակ՝ մոդայի ոլորտում մարդիկ հրաժարվում էին միօրինակ և շաբլոն, այսպես կոչված՝ «ֆաբրիչնի» հագուստից՝ գերադասելով «իմպորտնին» կամ մասնավոր դերձակների կողմից կարվածը: Ժամանցի ոլորտում նույնպես կային բազմաթիվ պրակտիկաներ, երբ երիտասարդները սովետական միջոցառումների փոխարեն նախընտրում էին արտասահմանյան երաժշտության ներքո մասնավոր հավաքները: Զեկույցի գլխավոր նպատակն է ցույց տալ, թե ինչպես քաղաքային միջավայրում առօրյա պրակտիկաների ապասովետականացումը խորացրեց անջրպետը պաշտոնապես քարոզվող գաղափարախոսության և իրական կյանքի միջև՝ դառնալով խորհրդային համակարգի ծայրաստիճան ֆորմալացման և բովանդակազրկման կարևոր գործոն:

The Practices of De-Sovietization of the Soviet-Armenian Daily Life in Yerevan in the 1970s-80s

This presentation is based on the oral histories I recorded about the late Soviet period. Among them, the 1970-1980s are often characterized as the most prosperous and comparatively “free” years of the Soviet period in Armenia. One of the main characteristics of that “freedom” is the spread of de-Soviet discourses and practices in everyday life. Their peculiarity was that they did not have an openly anti-Soviet character. They simply did not circulate Soviet official discourses and practices. Due to their seeming neutrality, which was not anti-Soviet at first glance, these practices were ignored by the Soviet state control structures and gradually spread into new areas of everyday life. In this report, this phenomenon will be presented through the example of urban fashion and leisure practices. It will be shown how in those practices, the formal-official style intended for the Soviet man “from above” was rejected at the individual level by way of its de-Sovietization. For example, in the field of fashion, people rejected so-called “fabrichniy” (factory) clothes preferring “importni,” or those made by private tailors. There were also many practices in the field of leisure, when young people preferred private gatherings with foreign music instead of Soviet-style events. The main purpose of the report is to show how the de-Sovietization of everyday practices in the urban environment deepened the gap between officially propagated ideology and daily-life practices, becoming a factor in the extreme formalization and deprivation of content of the Soviet system.

Հանս Գուտբրոդ

Հանս Գուտբրոդը Թբիլիսիի Իլիայի պետական համալսարանի դոցենտ է և Սեթոն Հոլ համալսարանի Խաղաղության և հակամարտությունների ուսումնասիրությունների կենտրոնի ավագ գիտաշխատող։ 1999 թվականից աշխատում է Կովկասում, իսկ 2006-2012 թվականներին եղել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի տնօրենը։ Նա պարբերաբար համագործակցում է աշխարհի տարբեր ծայրերում գտնվող վերլուծական կենտրոնների հետ։ Նա գրել է Վրաստանում (Ստալինի թանգարան) և այլ տարածաշրջաններում հիշողության մասին։ Այժմ աշխատում է հունիսի 14-ի և Կասկադի հուշահամալիրի մասին հոդվածի վրա։ Շուտով հրատարակելու է «Քաղաքական հուշայնացման էթիկա»-ի վերաբերյալ իր աշխատությունը։

Hans Gutbrod

Hans Gutbrod is Associate Professor at Ilia State University, Tbilisi, and Senior Fellow at the Center for Peace and Conflict Studies, Seton Hall University. He has worked in the Caucasus since 1999 and as Director of the Caucasus Research Resource Centers from 2006 to 2012. He regularly works with think tanks around the world. He has written on remembrance in Georgia (Stalin Museum) and other locations, and has a forthcoming article on June 14 and the Cascade Memorial, and is publishing a book on the Ethics of Political Commemoration.

Կասկադի հուշահամալիրը Երևանում. վերադարձնելով ուշադրությունը բռնաճնշումների զոհերին

Հայաստանում բոլորին է հայտնի Կասկադի հուշահամալիրը. այն խորհրդանշական սանդուղք է, որը կապում է Երևանի կենտրոնը Հաղթանակի զբոսայգուն։ Սակայն Երևանում քչերը գիտեն (բացառությամբ պատմությամբ հետաքրքրվողների), որ Կասկադի ամենավերին հարթակում կա նաև բռնաճնշումների զոհերին նվիրված մի մեծ հուշարձան։ Ինչպես խորհրդային ռեպրեսիաների պատմությունն ինքնին, այնպես էլ այս Հուշահամալիրը մնում է որոշ չափով անտեսված՝ չնայած մի փոքր խումբ հայերի գործադրած ջանքերի՝ վերականգնելու ու «ամոքելու» բռնաճնշումների մասին հիշողությունը։ Այս հոդվածն ամփոփում է Երևանի Կասկադի հուշահամալիրի շուրջ արված հետազոտության արդյունքները։ Այն քննում է հունիսի 14-ի հիշատակի օրը՝ դիտարկելով հետազոտության մասնակիցների տեսանկյունը և հիշելու այս գործողությունը տեղակայելով Երևանի խարիզմատիկ ճարտարապետության համատեքստում։ Հետազոտությամբ փորձ է արվում նաև այս հատուկ հիշատակումը դիտարկել անցյալի հետ ավելի ներգրավված լինելու պահանջների շարքում՝ ընդգծելով, թե որքան մասնատված են խորհրդային ռեպրեսիաների և Կասկադի հուշահամալիրի ստեղծման մասին գիտելիքները։ Զեկույցում քաղաքական հուշայնացման էթիկայի կիրառմամբ վերանայելու եմ եղած պրակտիկաները և առաջարկելու ճշգրտումներ կատարել՝ մարգինալացումը հաղթահարելու նպատակով։ Հոդվածում եզրակացություններ կկատարեմ որոշ պետական կառույցների և համալսարանների վերաբերյալ և հուշայնացումը կկապեմ ժամանակակից բանավեճերի հետ։

Yerevan’s Cascade Memorial: Returning Attention to Victims of Repression

Everyone in Armenia knows the Cascade complex — a landmark stairway that connects Yerevan’s downtown center with Victory Park above the city. Yet aside from those interested in history, few in Yerevan know that at its very top terrace the Cascade also contains a major memorial to the victims of repression. Like the history of the Soviet repressions itself, this Cascade Memorial remains somewhat neglected – even if a small group of Armenians are now trying to restore and recover the memory of the repressions.

This paper summarizes research in and around Yerevan’s Cascade Memorial; looks at the June 14 commemoration from the perspective of participant observation and puts this remembrance into the context of Yerevan’s charismatic architecture; situates this particular commemoration amidst the calls for wider engagement with the past; highlights how fragmented knowledge around the Soviet repressions and the creation of the Cascade Memorial is; applies an Ethics of Political Commemoration to review the practices and suggest tweaks to overcome marginalization; draws out implications for some state institutions and universities; and also connects the commemoration to contemporary debates.

Հրանուշ Խառատյան

Հրանուշ Խառատյանը պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող է: 1980-ականներից զբաղվում է գիտական աշխատանքով: Վերջին տարիներին վերլուծում է ազգային քաղաքականությունը ԽՍՀՄ-ում և Թուրքիայում, ինչպես նաև էթնիկական և քաղաքացիական ինքնությունների ձևավորումները 20-րդ դարում: Հրատարակել է 10 մենագրություն, կազմել և խմբագրել է գիտաժողովների և թեմատիկ հոդվածների 7 ժողովածու, գիտական պարբերականներում և ժողովածուներում հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն, լեհերեն լեզուներով հրատարակել է 115 հոդված, տասնյակ հանրամատչելի հոդվածների հեղինակ է:

Hranush Kharatyan

Hranush Kharatyan, Ph.D., is a leading researcher of the Institute of Archeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia. She has been engaged in scientific work since the 1980s. In recent years, she has been analyzing national politics in the USSR and Turkey, and the formation of ethnic and civic identities in the 20th century. She has published 10 monographs, compiled and edited 7 collections of scientific conferences and thematic articles, published 115 articles in scientific periodicals and collections in Armenian, Russian, English, Turkish, and Polish, and is the author of dozens of publicly available articles.

Հայոց ցեղասպանության գործոնը ԽՍՀՄ քաղաքական բռնություններում

Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի Հանրապետության առանձնահատուկ բարեկամական հարաբերությունները պայմանավորել են Հայոց ցեղասպանությունից փրկված և Կովկասում, մասնավորապես Խորհրդային Հայաստանում ապաստանած հարյուր հազարավոր մարդկանց և նրանց ժառանգների նկատմամբ որոշակի վերաբերմունք, որը հստակ դրսևորվել է նաև ԽՍՀՄ քաղաքական բռնություններում: Խորհրդային Ռուսաստանը 1921 թ. Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի 8-րդ, և Խորհրդային Հայաստանը նույն թվականի Կարսի պայմանագրի 10-րդ հոդվածներով պարտավորություն էր ստանձել թույլ չտալ իրենց տարածքում, կամ դրա մի մասում մյուս երկրի [Թուրքիայի] նկատմամբ պայքարելու նպատակ ունեցող խմբերի ձևավորում կամ առկայություն: Ակնհայտ է, որ Թուրքիայի դեմ պայքարելու նպատակ ունեցող մարդկանց խումբ կարող էին դիտվել Թուրքիայում իրականացված հայոց ցեղասպանությունից փրկված և Արևելյան/Խորհրդային Հայաստանում հաստատվածները: Նրանց մեծ մասը իրենց կացությունը Հայաստանում ժամանակավոր էին համարում և սպասում էին հայրենիք վերադառնալու նպաստավոր պայմանների: 1921 թ. փետրվարին, երբ նախապատրաստվում էր ռուս-թուրքական Մոսկվայի պայմանագիրը, խորհրդայնացված Հայաստանում տեղի ունեցավ ապստամբություն խորհրդային իշխանության «կարմիր տեռորի» դեմ: Այն սկսվեց փետրվարի 13-ին Արագած սարի

ստորոտում՝ Թալինի շրջանում հաստատված սասունցիների կողմից, բայց շատ արագ համալրվեց Հայաստանի հնաբնակներով։ «Սասունցիների կողմից սկսվելը» առիթ տվեց այդ ապստամբությունը «գաղթականական» անվանելու։ Գաղթականները՝ Արևմտյան Հայաստանում ցեղասպանությունից փրկված և Արևելյան Հայաստանում հաստատվածները, բոլշևիկների կողմից ներկայացվեցին որպես «հակա...»-ներ [հակահեղափոխական, հակախորհրդային, հակաբոլշևիկյան, հակասոցիալիստական...]։ Այնուհետև ընդհուպ մինչև 1953 թ. գաղթականները որպես «հակա»-ներ մնացին ԽՍՀՄ քաղաքական բռնությունների կարևոր թիրախներից մեկը։ 1924 թ.-ի հոկտեմբերին Անդրֆեդերացիայի «Տնտեսական լրաբեր» ռուսալեզու պարբերականում Հայաստանի Կենտգործկոմի նախագահի տեղակալ Արտաշես Կարինյանը հրատարակեց «Պետք է վերջ տալ հայության հավաքմանը Հայաստանում և 300.000 արևմտահայ գաղթականությանը ցրել Ռուսաստանում» հոդվածը։ Սրա իմաստը Թուրքիայի հետ սահմանակից տարածքները Թուրքիային վտանգ ներկայացնող հայերից մաքրելն էր։ Թուրքիան այդպիսի պահանջ ներկայացնում էր իրեն սահմանակից բոլոր երկրներին։ 1937-ի մարտի 19-ի ՀԿ(բ)Կ Կենտկոմի՝ Ստալինին ուղարկված Խորհրդային Հայաստանում «Ժողովրդի թշնամիների առկայության պատճառների» մասին զեկուցագրում նշվում է 300 հազարից ավելի «Թուրքիայից վերաբնակների» գոյությունը։ 1949 թ. Կովկասից հայերի դեպորտացիայի որոշումների փաստաթղթերում «հայ» բառը չկա, փոխարենը կա «նախկին թուրքահպատակներ» ձևակերպումը։ 1949 թ. հունիսի 14-ին Հայաստանից և Վրաստանից աքսորված բազմաթիվ հայերի գործերում աքսորի հիմք է հանդիսացել «նախկին թուրքահպատակությունը»։ Քաղաքական բռնության մեկ այլ ձև էր ԽՍՀՄ-ում Հայոց ցեղասպանության թեմայի տաբուացումը։

The Armenian Genocide Factor in the Political Violence of the USSR

The special friendly relations between Soviet Russia and the Kemalist Turkish Republic ingrained a certain attitude towards the hundreds of thousands of people who survived the Armenian Genocide and took refuge in the Caucasus, particularly in Soviet Armenia, and their descendants, which was also clearly demonstrated in the political violence of the USSR. Article 8 of Soviet Russia's 1921 Russian-Turkish Treaty of Moscow, and Article 10 of Soviet Armenia's Treaty of Kars of the same year aimed to prevent the formation or existence of groups aiming to fight against the other country (Turkey) on their territory or any part of it. Obviously, those who survived the Armenian Genocide in Turkey and settled in Eastern/Soviet Armenia could be seen as a group of people aiming to fight against Turkey. Most of them considered their stay in Armenia temporary and were waiting for favorable conditions to return to their homeland. In February 1921, when the Russo-Turkish Moscow Treaty was being prepared, an uprising took place in Sovietized Armenia against the "red terror" of the Soviet government. It began on February 13 at the foot of Mount Aragats by the Sassoun people who had settled in the Talin region, but was quickly joined by the local Armenian inhabitants. As it was "initiated by the Sassoon people" it gave reason to label the rebellion as "migratory." The immigrants, survivors of the genocide in Western Armenia who had settled in Eastern Armenia, were painted by the Bolsheviks as "anti" (anti-revolutionary, anti-Soviet, anti-Bolshevik, anti-socialist...). From then until 1953, "immigrants as anti" remained one of the im-

portant targets of political violence in the USSR. In October 1924, Artashes Karinyan, the deputy chairman of the Central Executive Committee of Armenia, published the article “It is Necessary to Put an End to the Gathering of Armenians in Armenia and Disperse the 300,000 Western Armenian Emigrants to Russia” in the Inter-Federation’s Russian-language periodical “Economic News.” The meaning behind this was to clear the territories bordering Turkey of Armenians who posed a threat to Turkey. Turkey made similar demands to all its neighboring countries. In a March 19, 1937 report sent to Stalin by the Central Committee of the Communist (Bolshevik) Party of Armenia about the “reasons for the existence of enemies of the people” in Soviet Armenia, the existence of more than 300,000 “settlers from Turkey” is mentioned. There is no mention of the word “Armenian” in the arguments for the deportation of Armenians from the Caucasus, rather there is a reference to “former Turkish subjects.” In the case of the many Armenians exiled from Armenia and Georgia on June 14, 1949, the basis of exile is stated as “former Turkish subjugation.” Another form of political violence was making the topic of the Armenian Genocide taboo in the USSR.

Նելլի Կարապետյան

Նելլի Կարապետյանը սովորել է ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Մշակութաբանության բաժնում՝ ստանալով բակալավրի, ապա մագիստրոսի գիտական աստիճան: 2020թ.-ից ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ասպիրանտ է: Աշխատում է որպես գիտաշխատող-ֆոնդապահ Հայաստանի պատմության թանգարանի Ազգագրության բաժնում: Նա ուսումնասիրում է կրթության սոցիալ-մշակութային ասպեկտները Հայաստանի գյուղական համայնքներում: Մասնագիտական հետաքրքրությունների շրջանակում են նաև հիշողության և վիզուալ մարդաբանությունը, մասնավորապես 19-20-րդ դարերի ազգագրական լուսանկարները: 2021-2022թթ.. Գիտության կոմիտեից ստացած ասպիրանտական դրամաշնորհի շրջանակներում իրականացրել է «Դպրոցը ժամանակակից Հայաստանի սոցիալ-մշակութային տարածությունում» հետազոտությունը:

Nelli Karapetyan

Nelli Karapetyan earned her bachelor’s degree in Cultural Studies in 2018 and her master’s degree in Cultural Anthropology in 2020 from Yerevan State University. She is currently a PhD student at the Republic of Armenia National Academy of Sciences Institute of Archaeology and Ethnography. Karapetyan has worked as a research fellow at the History Museum of Armenia’s Department of Ethnography. From 2021-2022 she participated in the research program “School in the socio-cultural space of modern Armenia.” Her current research deals with the cultural and social aspects of rural education in Armenia. Additionally, her research interests refer to the anthropology of memory and cultural and visual anthropology, especially 19-20th century ethnographic photographs.

Ուսուցիչը գյուղում. ընկալումների փոխակերպումները Հայաստանի գյուղերում խորհրդայինից հետխորհրդային անցման շրջանում

Կրթության մարդաբանությունը ավանդաբար մեծ ուշադրություն դարձնելով մանկավարժական մշակույթների ուսումնասիրությանը (ուսումնական պլաններ, ուսուցողական և գաղափարական պրակտիկաներ) (Jewett, Schultz 2011)՝ չի անդրադառնում նրան, թե ինչպես են ուսուցիչների հանդեպ ընկալումները ձևավորվում և փոխակերպվում ավանդական, արդիականացված և անցումային միջավայրերում: Մինչդեռ փոքր համայնքներում ուսուցչի կերպարը հսկայական սոցիալական և մշակութային նշանակություն ունի, և դրա դրսևորումները կախված են բազմաթիվ սոցիալական, քաղաքական և մշակութային գործոններից: Իմ հետազոտության նպատակն է հասկանալ, թե ինչպես են խորհրդայինից հետխորհրդային անցման գործընթացները ազդել հայաստանի գյուղական համայնքներում ուսուցչի կերպարի ընկալումների ձևավորման և փոփոխության վրա: Թեմայի ուսումնասիրության հիմնական դրդապատճառը ուսուցչի նկատմամբ վերաբերմունքի, նրա սոցիալական դերերի ու նշանակության փոփոխության դիսկուրսն էր խորհրդային ժամանակների հետ համեմատ, երբ ուսուցիչն ընկալվում էր որպես մտավորական և հասարակական հեղինակություն: Հիմնա-

կան հարցադրումն էր՝ արդյոք դա համապատասխանում էր իրականությանը, թե՞ պարզապես երևակայական կոնստրուկտ էր, և եթե այդպես էր, ապա ինչպես և ինչու է այն փոխակերպվել: Տեսական շրջանակը հիմնված է մասնագիտությունների և առօրեկանության մարդաբանության վրա: Ուսուցչի կողմից իրականացվող սոցիալական և մշակութային դերերն ու գործառույթները ուսումնասիրվել են Է. Գոֆմանի շրջանակային վերլուծության մոտեցման միջոցով: Դիտարկվել է ուսուցչի կերպարը բեմական տարածքում (դպրոց) և ետնաբեմում (դպրոցից դուրս) և դրանց փոխակերպումները խորհրդայինից հետխորհրդային անցման համատեքստում: Հետազոտության նախնական արդյունքները ցույց են տալիս ուսուցչի սոցիալական կերպարի ձևավորման տարբեր մակարդակներ՝ պետական-գաղափարախոսական և համայնքային-կարգավիճակային, ինչպես նաև այս երկու մակարդակների միջև փոխազդեցությունն ու փոխկախվածությունը: Հետազոտությունը հիմնված է որակական հետազոտության մեթոդների վրա՝ հարցազրույցներ Հայաստանի Հանրապետության 20 գյուղերի ուսուցիչների, աշակերտների և ծնողների հետ, ԶԼՄ-ների և արխիվային աղբյուրների ուսումնասիրություն և անձնական դիտարկումներ:

The Village Teacher: Changing Perceptions in the Armenian Village from the Soviet to Post-Soviet Period

While paying close attention to pedagogy cultures, i.e., instructional, ideological and curricular practices (Jewett, Schultz 2011), the anthropology of education has not focused much on how the perceptions of teachers are being shaped and transformed in traditional, modernized and transitory environments. At the same time, the figure of the teacher in small communities is of huge social and cultural importance and its manifestations depend on multiple social, political, and cultural factors. My research seeks to understand how the transitory processes from Soviet to post-Soviet social, political and cultural environments influenced the perceptions of school teachers in Armenian village communities. The main trigger was the discourse on the changing attitudes to school teachers, and their changing social roles and significance in comparison to Soviet times, when the teacher was imagined to be an outstanding social and intellectual authority. The question I pose asks whether this corresponded to reality or was just an imaginative narrative construct, and, if it was the reality, how and why was it transformed? The theoretical framework is based on the anthropology of professions and everyday life. The social and cultural roles and functions performed by the teacher were explored using E. Goffman's frame analysis approach. The front and backstage of the teacher's frame were examined. Furthermore, the transformations of the teacher frame were analyzed in the context of the transition from the Soviet to post-Soviet years. My preliminary findings reveal different levels of shaping the social figure of the teacher, that of the state and ideology and that of community and status, and the characters of interactions and interdependence between these two levels. This research is based on qualitative research methods including interviews with teachers, pupils and parents from 20 villages of the Republic of Armenia, media and archive source surveys, and personal observations.

Աշխեն Հակոբյան

Աշխեն Հակոբյանը Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ասպիրանտ է, Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտերի Ազգագրության բաժնի մագիստրոս: Հարավային Կալիֆորնիայի համալսարանի հայագիտության ինստիտուտի Թագորի կենտրոնում դասավանդում է որակական հետազոտության մեթոդներ: Ակադեմիական հետաքրքրությունների շրջանակում են ինքնության ուսումնասիրությունները, կրթական քաղաքականությունները, խորհրդային և հետխորհրդային հասարակությունները:

Ashkhen Hakobyan

Ashkhen Hakobyan is a Ph.D student in the Institute of Archaeology and Ethnography at the National Academy of Sciences, Republic of Armenia. She earned her master's degree from Yerevan State University, Faculty of History and Ethnography. She teaches research methodology in the Tacori center of the Institute of Armenian Studies of the University of Southern California. The areas of academic interest include identity studies, education policies, and Soviet and post-Soviet societies.

Ուսուցչի ինքնությունը և անկախության շրջանի հայաստանյան դպրոցների միջոցառումները

Խորհրդային միության շրջանում ուսուցչի ինքնությունը համեմատաբար կայուն էր. դա շարունակվեց մինչև խորհրդային կարգերի փլուզումը, որից հետո հսկայական փոփոխություններ տեղի ունեցան երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում: Դրա հետևանքով ուսուցիչների համար ստեղծվեց բարդ իրավիճակ, որում իրենք պետք է հարմարվեին անվերջ փոփոխվող պահանջներին: Կրթության համակարգի ռադիկալ փոփոխություններն ու ռեֆորմները ավելացրին պարտավորություններն ու ճնշումները մասնագիտական հանրության նկատմամբ, որն առանց այդ էլ հասարակության ուշադրության և հսկողության կենտրոնում էր: Դպրոցական միջոցառումները կազմակերպվում են ուսուցիչների և դպրոցի վարչական անձնակազմի կողմից, այդ պատճառով էլ դրանց ուսումնասիրությունը ուսուցչի ինքնությունը դիտարկելու հետաքրքիր դաշտ է բացում: Միջոցառումներն իրենց բնույթով հանրային են, հետևաբար և ավելի խոսուն են ուսուցչի ինքնության և դրա հանրային ընկալումների տեսանկյունից: Տվյալ հետազոտությունը նպատակ ունի քննարկել խորհրդային փորձառության ներկայիս դրսևորումները և ուսուցչի ինքնության ժամանակակից դինամիկան: Ուսուցիչների ինքնությունը և հանրային ակնկալիքների վերաբերյալ նրանց ընկալումը հասկանալու համար օգտագործված տեսական հիմքը և պրիզման ընտրվել է հոգեբան Հուբերտ Հերմանսի առաջարկած ինքնության երկխոսային տեսությունը, որը հնարավորություն է տալիս հետևել հանրային ազդեցություններին և հետագծել ինքնության բազմազանության առկա դինամիկան:

Teacher Identity and Demonstrative/Open Classes in Armenian Independent-Era Schooling

The experience of being a teacher remained relatively stable during the Soviet era, before the abrupt and unforeseen changes in politics, economics, and culture. Consequently, it has been challenging for teachers to keep up with the changing demands placed upon them. The radical changes and reforms implemented in the education system have further increased the responsibilities and pressures on the professional community, which was already under public scrutiny and observation. The study of demonstrative classes, which are organized by teachers and the school administrative staff, provides important insights into the fragments of teacher professional identity, the public image of school and how it interacts with society. The selection of these specific events reflects their public and demonstrative nature. My research aims at examining the remnants of the Soviet experience and the ongoing dynamics of teacher identity and image. School events are an important part of communication between school and society in general. By following the role and purpose of school events I strive for a better understanding of teacher perceptions about public expectations from schools and teachers.

The general theoretical lenses of the research are the ideas of dialogical self-theory proposed by psychologist Hubert Hermans. It is a sufficient tool to see the way teacher identity is shaped by social and cultural factors, as well as to identify the precise factors in the present-day dynamics.

Լիլիթ Ղազարյան

Լիլիթ Ղազարյանը Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի Համալսարանի (UCLA) Մարդաբանության ֆակուլտետի ասպիրանտ է: Նա այժմ աշխատում է իր ատենախոսության վրա, որի թեման է լեզվական կանոններն ու դրանց գործածությունը Երևանի մանկապարտեզներում: Նրա հետազոտությունն անդրադառնում է գոյություն ունեցող լեզվական գաղափարաբանություններին, և մանկապարտեզները ներկայացնում որպես տվյալ գաղափարաբանությունների սոցիալիզացման դաշտ: Նրա աշխատանքը նպատակ ունի համեմատել պետական և մասնավոր մանկապարտեզները՝ անդրադառնալով Հայաստանում նախապատերազմական և հետպատերազմական իրականությանը և դրա հետևանքով մանկապարտեզներում ի հայտ եկած լեզվական փոփոխություններին:

Lilit Ghazaryan

Lilit Ghazaryan is a PhD candidate in the Anthropology Department at the University of California, Los Angeles. She is currently working on her dissertation on language policies and practices in kindergartens in Armenia, addressing the existing ideologies about the language and how kindergartens are sites of socialization of those ideologies. Her work aims to draw comparison between private and public kindergartens, as well as reflect on the pre- and post-war realities in Armenia and the influences those changes had on the language practices in kindergartens.

Ընկե՞ր, թե՞ «ընկեր». հետխորհրդային Հայաստանի կրթական համակարգում օգտագործվող դիմելաձևերը

Հայաստանի կրթական ոլորտի համատեքստում ամենատարածված դիմելաձևը, որով դիմում են ուսուցչին կամ հեղինակություն ունեցողներին, «ընկեր»-ն է: Չնայած որպես տերմին այն Հայաստան մուտք է գործել սովետական իշխանության օրոք, բառն, իհարկե, գոյություն է ունեցել շատ ավելի վաղուց՝ մինչև այս իմաստն ու գործածությունը ստանալը: Իմ նպատակն է պարզել, թե ինչպես և ինչու է այս տերմինը շարունակել գործածվել Հայաստանի՝ Խորհրդային Միությունից անկախանալուց հետո, և ինչպես է այն անտեսվել հակառուսականացման ալիքի կողմից, որի միջով անցել և դեռ անցնում են գրեթե բոլոր հետխորհրդային երկրները (Friedman, 2010; Pavlenko, 2006, 2008): Տերմինի գործածությունը, իմաստը և մարդկանց ասոցիացիաներն ավելի լավ հասկանալու համար ես անցկացրել եմ հարցազրույցներ տարբեր տարիքի, փորձառության և մասնագիտության տեր մարդկանց հետ: Ես նաև հիմնվում եմ պետական և մասնավոր մանկապարտեզներում իմ արած դաշտային աշխատանքների ժամանակ տեսաձայնագրությունների և դիտումների միջոցով հավաքած նյութերի վրա: Հետազոտության շրջանակում դիմելաձևերը դիտարկվում են որպես սոցիալական հեռավորության, հիերարխիայի և հարգանքի ցուցիչ (Firth, 1972; Goffman, 1967; Holtgraves, 1992): «Ընկեր»-ը քննարկում եմ որպես դիմելաձև, որը պարունակում է ուժ (Brown and Gilman, 1960) և սոլիդարություն (Bayertz, 1999; May, 1996; Laiten and Pessi, 2015): Նաև հիմնվում եմ լեզվական սոցիալիզացիայի տեսության վրա, որի միջոցով

հաստատվում է սոլիդարությունը (Gleason, 1980; Burdelski and Howard, 2020; Duff and Hornberg, 2008): Քանի որ աշխատանքը դեռ ընթացքի մեջ է, իմ նպատակն է շարունակել հարցազրույցներ և դիտումներ անցկացնել՝ ավելի հստակ հասկանալու «ընկեր» դիմելաձևի գործածությունն ու ասոցիացաները և պարզելու այն փոփոխությունները, որ դրանք կրում են ժամանակի ընթացքում, ինչպես նաև բացահայտելու, թե ինչպես են ժամանակակից երեխաները սովորում օգտագործել այս դիմելաձևերը:

Friend or Comrade? The Address Forms in the Educational Context in Post-Soviet Armenia

In the majority of the educational settings in Armenia, the dominant address form towards the teachers or those in authoritative power is the term ‘uhnker’ (ընկեր) which is comparable to ‘comrade’. While this term as an address form became utilized in Armenia as a result of the Soviet rule, the word itself has existed far longer than this new acclaimed use and meaning. My goal is to find out why and how the term had survived the independence of the Republic of Armenia from the Soviet Union and was ignored by the reforms that came right after as a wave of de-Russification efforts that almost all post-Soviet countries were and are still going through (Friedman, 2010; Pavlenko, 2006, 2008). To better understand the use of the term, its connotations, and the association people have towards it, I have conducted interviews with people from diverse backgrounds, ages and experiences. I also rely on my field work in public and private kindergartens through participant observations and video recordings. My research is informed by the theoretical concepts of address terms as indicators of social distance, hierarchy, and respect (Firth, 1972; Goffman, 1967; Holtgraves, 1992). I discuss ‘uhnker’ as an example of a non-reciprocal address which contains the awareness of power (Brown and Gilman, 1960) and solidarity (Bayertz, 1999; May, 1996; Laiten and Pessi, 2015). I also rely on the theory of language socialization as a process through which solidarity is realized (Gleason, 1980; Burdelski and Howard, 2020; Duff and Hornberg, 2008). As this is a work in progress, my goal is to continue conducting interviews and observations to better understand the use of the address term ‘uhnker’, its implications and associations, and how those have changed over time, as well as how children nowadays are socialized into using the address term.

Յուլիա Անտոնյան

Յուլիա Անտոնյանը ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Մշակութաբանության ամբիոնի դոցենտ է: Նա դասավանդում է Կրոնի մարդաբանություն, Սոցիալական կառույցների մարդաբանություն, Մշակութային մարդաբանություն, Վերածննդի և Նոր դարի Եվրոպայի մշակույթ առարկաները: Անտոնյանի մասնագիտական հետաքրքրությունները վերաբերում են կրոնի մարդաբանությանը, սոցիալական կառույցների մարդաբանությանը Խորհրդային ու Հետ-խորհրդային շրջանների շեշտադրությամբ: Անտոնյանը մասնակցել է մի շարք անհատական և խմբային, ռեգիոնալ ու միջազգային ծրագրերի և դրանցից առնվազն հինգը ղեկավարել: Նա խմբագրել ու կազմել է երկու ծողովածու, հեղինակել է 50-ին մոտ հոդվածներ հայերեն, ռուսերեն և անգլերեն:

Yulia Antonyan

Since 2008, Yulia Antonyan has been an Associate Professor in the Department of Cultural Studies, Faculty of History, at Yerevan State University, where she teaches courses on Anthropology of Religion, Anthropology of Social Structures, Introduction to Cultural Anthropology and Cultural History of European Renaissance and Modernity. Her professional interests lie in anthropology of religion and anthropology of social structures with a special focus on Soviet and post-Soviet periods. She has led and been part of numerous individual and joint, local, regional and international projects on different problems of post-Soviet religion and social developments. Additionally, she edited a volume on the anthropology of post-Soviet elites in Armenia and Georgia (2016). Her fieldwork took place mainly in Armenia (including Artsakh) and Armenian communities of Georgia, Syria and Lebanon. Antonyan has been an invited lecturer or short-time research fellow at the universities of Berkeley (USA), Fribourg (Switzerland), Ilia State University (Tbilisi, Georgia), Iena (Germany), Salzburg (Austria), Complutense Madrid (Spain), and Paris Cite (France), and participated in many local and international conferences. She speaks fluent Armenian, Russian, English and French. Antonyan has published approximately 45 articles in English, Armenian and Russian in reputed journals and publishing houses. Her major writings can be found at https://yerevan.academia.edu/YuliaAntonyan.

Արդյո՞ք հնարավոր էր «պայմանավորվել» իշխանությունների հետ. կրոնական փոքրամասնությունների գոյատման ձևերը Խորհրդային Հայաստանում (մոլոկանների, ասորիների ու հայ կաթոլիկների օրինակով)

Խորհրդային իշխանությունները ճնշում էին ինստիտուցիոնալ կրոնի ցանկացած դրսևորում: Դա հատկապես խնդրահարույց էր այն կրոնական փոքրամասնությունների դեպքում, որոնց համար կրոնի պահպանումը ինքնության կարևորագույն հարց էր: Արևելյան Հայաստանի տարածքը Ռուսական կայսրությանը միացնելուց հետո, այն ապաստան դարձավ այստեղ ներգաղթած կրոնական խմբերի համար: Նրանց ներգաղթումը տարբեր պատճառներով էր, հիմնականում գոյատևման վտանգների հետ կապված, սակայն լիովին համապատաս-

խանում էր կայսերական ծրագրի նպատակներին: Ռուսական կայսրությունում կրոնական համայնքների բաժանումը վարչական համակարգի մաս էր, որը հատկապես կարևոր էր կայսերական ծայրամասերի ու սահմանագծային տարածքների համար: Նույն տարածքում կողք կողքի ապրելով՝ տարբեր կրոնական համայնքները, այնուամենայնիվ, իրարից անկախ էին, սակայն ուղղահայց կախվածության մեջ էին գտնվում կենտրոնական իշխանություններից: Հորիզոնական կտրվածքով այդ համայնքները գրեթե չեն հաղորդակցվել միմյանց հետ՝ չհաշվելով ժամանակ առ ժամանակ իրականացվող տնտեսական կամ սոցիալական շփումները: Մշակութային մեկուսացման այս ձևը թույլ էր տալիս նրանց պահպանել իրենց ինքնությունն ու կրոնական կյանքի առանձնահատկությունները: Խորհրդայնացումից հետո կրոնի ինստիտուցիոնալ ձևերի դեմ կատաղի պայքարը, կոլխոզների ստեղծումը, բռնագաղթը, ուրբանացումն, «արմատացման» քաղաքականությունն ու այլ գործոնները բերեցին ծխական համայնքների ֆորմալ քանդմանը, կրոնական պրակտիկայի եկեղեցական ձևերի անհետացմանը, ինքնության կառուցվածքից կրոնական բաղադրամասի ֆորմալ վերացմանը, ինչի փոխարեն ավելի է շեշտադրվել ազգայինը: Միաժամանակ, կրոնական փոքրամասնությունները չեն կորցրել իրենց կրոնական «այլության» զգացումներն ու սահմանները՝ դրանք պահպանելով տարբեր աստիճանի: Զեկույցը կենտրոնացած կլինի Խորհրդային Հայաստանում բնակվող երեք կրոնական խմբերի՝ մոլոկանների, ասորիների և հայ կաթոլիկների /«ֆրանկերի»/ վրա: Կդիտարկվի, թե ինչպես է կրոնական ու կրոնա-համայնքային ինստիտուտների բացակայության պայմաններում այդ խմբերին հաջողվել պահպանել իրենց մշակութային ու կրոնական առանձնահատկությունները, որոնք նրանց տարբերում էին այլ խմբերից: Մի կողմից նշված խմբերը ակտիվորեն օգտվում էին այլ սոցիոմշակութային մեխանիզմներից, ինչպիսինն էին ամուսնական պրակտիկաները, օրինակ, պահպանելով կրոնական ներամուսնությունները, «բարոյական» տնտեսաձևերը, ակտիվ կամ պասիվ դիմադրության ձևերը, «փոխարինող» ինքնությունները, վերնակուլյար կրոնականությունը և այլն: Մյուս կողմից նրանց գոյատևումը կարող է կապված լինել որոշ փոքրամասնությունների պահպանման հատուկ ռեժիմի հետ, երբ խորհրդային իշխանությունները կարծես թե չէին նկատում նրանց ինքնության կրոնական ֆորմատը: Կարելի՞ է դա արդյոք համարել իշխանությունների հետ չբարձրաձայնվող յուրահատուկ «պայմանավորվածություն»: Ի՞նչ կարող էին այդ փորքմասնությունները առաջարկել հակակրոնական ճնշումների թուլացման ու կրոնական պրակտիկայի «անտեսման» դիմաց: Զեկույցը փորձելու է պատասխանել այս հարցերին:

Was it Possible to “Negotiate” with the Authorities? Forms of Survival and Adaptation of Religious Minorities in Soviet Armenia (Cases of Molokans, Assyrians and Catholic Armenians)

Soviet rule suppressed any form of institutional religion. This became problematic for religious minorities, for whom the preservation of their religion was primarily a matter of identity. Historically, the territory of Eastern Armenia, after its annexation to the Russian Empire, became a haven for different religious groups that migrated there for various reasons, but all within the framework of an imperial project. In the Russian Empire, the division into religious communities was organic for the system of

government, especially in the imperial periphery and the imperial frontiers. Living side by side on the same territory, different religious communities were nevertheless independent of each other, being instead vertically dependent on the central authorities. Horizontally, religious communities almost never came into close contact with each other, not to mention sporadic economic or social contact. Such a level of religious and cultural autonomy allowed them to maintain their identity and specifics of religious life. However, after Sovietization, an active fight against the institutional forms of religion, the creation of collective farms, forced mass migrations, urbanization, the policy of indigenization, and other factors led to the formal destruction of parochial communities, disappearance of clerical forms of religious practice, and the formal removal of the religious component from the identity structure of religious minorities, stressing instead the ethnic and national ones. Nevertheless, religious minorities did not completely lose the feelings and boundaries of their religious "otherness," but retained them to a different extent. The presentation focuses on three religious minorities in Soviet Armenia: Molokans, Assyrians and Catholic Armenians ("Franks"). It will discuss how, despite the absence of formal religious and religious-communal institutions, these groups tried to keep their cultural and religious identities that distinguished them from other religious groups. On the one hand, groups actively resorted to different social and cultural mechanisms, such as matrimonial practices, in particular, religious endogamy, moral economies, forms of passive/active resistance, "substitute" identities, vernacular religion practices, etc. On the other hand, their survival might also be associated with a specific regime of subsistence of some minorities, where the Soviet authorities would disregard (to a greater or lesser extent) the religious formats of their identities. Can we call this an unspoken "agreement" with the late Soviet authorities? What could those minorities offer in return for dwindling anti-religious pressure and turning a blind eye to practicing their religions? The presentation is an attempt to answer these questions, based on field research done in 2021-2022, as well as printed materials from the Soviet period.

Լիլիթ Գաբրիելյան

Լիլիթ Գաբրիելյանը Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի Մշակութաբանության ամբիոնի ասպիրանտ է: Ուսանել է նույն ամբիոնի բակալավրում և մագիստրատուրայում: 2022 թ. Էրազմուս+ փոխանակման ծրագրով ուսանել է Ավստրիայի Զալցբուրգ քաղաքի Փարիզ Լոդրոն համալսարանում: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է մշակութային և սոցիալական մարդաբանության, կրոնի մարդաբանության ոլորտները: Հետաքրքրվում է նոր ու նորագույն շրջանի հայկական սոցիալ-մշակութային իրողություններով, մասնավորապես գլոբալացման, քաղաքացիական շարժումների, կրոն-պետություն փոխհարաբերությունների, կրոնական փոքրամասնությունների վերաբերյալ թեմաներով: Նրա թեկնածուական ատենախոսության թեման է՝ «Ժամանակակից Հայաստանի բողոքական համայնքների մշակույթի սոցիալ-տնտեսական ասպեկտները»:

Lilit Gabrielyan

Lilit Gabrielyan is a PhD student at the Department of Cultural Studies in the Faculty of History at Yerevan State University. In 2022, she studied at the University of Paris Lodron in Austria under the Erasmus+ exchange program. Her research interests include the fields of cultural and social anthropology and anthropology of religion. Lilit is interested in the Armenian socio-cultural realities of the new and modern period, in particular topics related to globalization, civil movements, religion-state relations, and religious minorities. Her Ph.D. thesis focuses on тhe socio-economic aspects of the culture of Protestant communities of modern Armenia.

Հին հիսունականների բողոքի շարժումը 1960-ական թթ.. (Ֆիզմաթ դպրոցի սաների օրինակով)

1950-ականների վերջին և 1960-ականներին խորհրդային իշխանությունների վարած քաղաքականությունը կրոնի և եկեղեցու նկատմամբ կարելի է բնորոշել որպես կրոնի դեմ արշավի խրուշչովյան փուլ: Այս տարիներին խրուշչովյան վարչակարգը, որը որդեգրել էր «կոմունիստական հասարակության կառուցման» և խորհրդային նոր մարդու ստեղծման ուղին, (որում կրոնը դիտվում էր որպես կոմունիզմի կառուցման ճանապարհին խանգարող գործոն), իրականացնում էր հակակրոնական արշավ կրոնական մարդկանց նկատմամբ՝ օգտագործելով վարչական, գաղափարային ներգործման և ուժային կառույցների ճնշման տարբեր գործիքներ (Fletcher W., 1971; Anderson J., 1994; Dobson M., 2018): Այնուամենայնիվ, 1960-ական թվականների սկզբին տեղի ունեցող քաղաքացիական բողոքի շարժումներն ու այլախոհության աճը նպաստեցին նաև հիսունական կրոնական ուղղության նոր արթնությանն ու ակտիվացած կրոնական շարժումների տարածմանը: Սույն զեկույցի նպատակն է ներկայացնել, թե ինչպես 1960-ականներին Երևանի պետական համալսարանին առընթեր գործող Ֆիզիկամաթեմատիկական դպրոցում սկսվեց կրոնական պենտեկոստեական շարժում դպրոցի սաների շրջանում և թե ինչպիսի գործիքակազմ էին կիրառում խորհրդային հատուկ ծա-

ռայությունները շարժումը ճնշելու համար: Հետազոտությունը հիմնված է շարժման մասնակիցների հետ իրականացված հարցազրույցների, արխիվային նյութերի, խորհրդային թերթերի և գիտական գրականության վրա: 1960-ականներին ԵՊՀ Ֆիզմաթ դպրոցում սկսված կրոնական հիսունական շարժումը տարածվեց դպրոցի 30 սաների և ուսուցիչների շրջանում: Այն ընդհատակյա գործող շարժում էր, որը հետագայում բացահայտվեց խորհրդային ԿԳԲ-ի կողմից: Սակայն ոչ իրականացված ձերբակալությունները, ոչ էլ գաղափարական ներգործությունն ու սաներին խորհրդային արժեքներով «վերադաստիարակելու» փորձերը չհասան իրենց նպատակին: Այս տարիներին շարժման ակտիվ դերակատարները դարձան հայ հասարակության տարբեր շերտերում տարածվող հիսունական կրոնական ուղղության քարոզիչներ, միսիոներներ, իսկ ՀՀ անկախացումից հետո ստեղծվող հիսունական տարբեր եկեղեցիների հիմնադիրներ և ավագ հովիվներ: Հետաքրքրականն այն է, որ բռնաճնշված լինելու հանգամանքը ոչ միայն չխանգարեց այս անձանց իրականացնել կրոնական քարոզչություն և հիմնել նոր եկեղեցիներ, այլ նաև հանդիսացավ այս եկեղեցիների ամենագործուն և ամենաշատ «պատմվող» առասպելներից մեկը:

Old Pentecostals' Protest Movement in the 1960s (Case Study of the Students of the PhysMath School, Yerevan)

The Soviet policy towards religion and the church of the late 1950s and 1960s can be described as an anti-religious phase of the Khrushchev era. In these years, when the Khrushchev leadership had set itself the goal of building a communist society and creating the "new man," in which religion was seen as a disturbing factor, the Soviet leadership carried out an anti-religious campaign against religious followers, using political and ideological tools and the security apparatus. Nevertheless, political protest movements occurred in the early 1960s, which also led to the awakening of Pentecostalism and the spread of other religious movements. The aim of this paper is to answer the question of how the Pentecostal movement was founded in the 1960s among the students of the PhysMath school, which worked within the framework of Yerevan State University, and what tools the Soviet secret police, or KGB, used to suppress the movement. The analysis is based on interviews conducted with members of the movements, archival materials, Soviet newspapers and academic literature. The Pentecostal movement began in the 1960s in the YSU PhysMath school and spread among 30 students and teachers. It was an underground religious movement that was discovered over time by the KGB. Nevertheless, neither the arrests, the ideological interventions nor the "political re-education" achieved its real goal. The active members of the movement of that time later became preachers and missionaries of the Pentecostal movements which spread throughout different strata of society, and after the independence of Armenia they became the founding members and pastors of the newly established churches. It is interesting to note that not only did the repressions not prevent the movement from realizing religious evangelization and founding new churches - the repressions also became the most important and most often reclaimed "legends" of these new churches.

Անատոլի Տոկմանցև

Անատոլի Տոկմանցևը հայագիտության դոկտորի կոչում է ստացել Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանում (UCLA)։ Ի թիվս այլ թեմաների՝ իր հետազոտությունների առանցքում են հետխորհրդային Հայաստանի կրոնական բազմազանությունը, կրոնական ազգայնականությունը և պետություն-եկեղեցի հարաբերությունները։ Իր դոկտորական ատենախոսության մեջ նա ուսումնասիրում է հետխորհրդային Հայաստանում Եհովայի վկաների նկատմամբ անհանդուրժողականության պատճառները և պարզում, թե ինչու մարդիկ, չնայած սոցիալական թշնամությանը, միացան համայնքին։ Նա մշակութային մարդաբանության մագիստրոսի կոչում է ստացել Սանկտ Պետերբուրգի Եվրոպական համալսարանից (Ռուսաստան) և պատմության բակալավրի աստիճան Սիբիրի դաշնային համալսարանից։

/

Anatolii Tokmantcev

Anatolii Tokmantcev holds a PhD in Armenian Studies from the University of California Los Angeles. In his research, he focuses on religious diversity in post-Soviet Armenia, religious nationalism, and state-church relationships, among others. In his doctoral dissertation, he addresses the reasons for intolerance towards Jehovah’s Witnesses in post-Soviet Armenia and explores why people joined the community despite social animosity. He received his MA in Cultural Anthropology from the European University at Saint Petersburg, Russia, and BA in History from the Siberian Federal University.

Եհովայի վկաների համայնքը որպես վերականգնված խորհրդային իրականություն

Խորհրդային գաղափարախոսական և քաղաքական համակարգի փլուզումից հետո Հայաստանում ապրող ռուսախոս մարդիկ, այդ թվում՝ Ադրբեջանից եկած փախստականները, հայտնվեցին անսովոր վիճակում, քանի որ ռուսերենը, որպես տիրապետող խորհրդային լեզու, կորցրել էր իր երբեմնի կարգավիճակը։ 1990-ականների ընթացքում հայերենի տիրապետումը սերտ կապված էր հայկականության ու ազգայնականության հետ, մինչդեռ ռուսերենը համարվում էր որպես գաղութային լծի նշան։ Ռուսերենը բարձր արժեք ունեցող լեզվից դարձել էր բացասական մի խարանադրոշմ։ Բազմաթիվ ռուսախոս մարդիկ ստիպված էին լքել իրենց աշխատավայրերը։ Ըստ նոր ազգայնական գաղափարախոսության՝ հայ լինելը ու հայերեն խոսելը դարձել էին խորհրդանշանային կապիտալի հիմնական աղբյուր, որից ռուսախոս մարդիկ զրկված էին։ Այլ խոսքով՝ ռուսախոս մարդիկ նոր հայակենտրոն աշխարհում կորցրել են իրենց տեղը հանրային դասակարգման մեջ։ Հիասթափված նոր ազգայնական ու հայակենտրոն աշխարհից՝ ռուսախոս մարդկանցից շատերը ապաստանեցին Եհովայի վկաների համայնքում, որտեղ ռուսները կազմում են երկրորդ ամենամեծ խումբը հայերից հետո։ Այս կրոնական համայնքում ռուսերենի տիրապետումը բարձր է գնահատվում, որը ռուսախոս մարդկանց համար վերականգնում է լեզվական ու հանրային «նորմալությունը»։ Ռուսախոս Եհովայի վկաները քարոզում են ռու-

սախոս մարդկանց, որը կարևորության ու անփոխարինելիության զգացում է ստեղծում նրանց մոտ, քանի որ առանց այս քարոզչության Հայաստանի ռուսախոս բնակիչների ու զբոսաշրջիկների մեծ մասը չէր ծանոթանա «Բարի լուր»-ին: Եհովայի վկաները հավատում են, որ Նոր աշխարհ (Դրախտ) կհաստատվի, երբ «այս բարի լուրը քարոզվի ամբողջ երկրով մեկ՝ բոլոր ազգերին» (Մատթեոսի 24:14): Հետևաբար, համայնքի մեջ նրանց առաքելությունը շատ բարձր է գնահատվում, որը վերականգնում է ինքնագնահատականը ու միաժամանակ հանդիսանում հանրային ու խորհրդանշանային կապիտալի աղբյուր: Կարելի է ասել, որ Եհովայի վկաների համայնքը վերականգնում է ռուսերենի կարևորությունն ու կարգավիճակը ու վերահաստատում հարգանքը ռուսաց լեզվի նկատմամբ: Այսպիսով, այս կրոնական խումբը դարձել է Խորհրդային համակարգի փլուզումից հետո ստեղծված հանրային-գաղափարախոսական ու տնտեսական քաոսից խուսափելու հնարավորություններից մեկը: Չնայած կրոնական ու խորհրդային գաղափարախոսությունները անհամատեղելի են, Եհովայի վկաների համայնքի գործունեությունն ու որոշ սկզբունքներ ստեղծել են այնպիսի պայմաններ, որոնք որոշ առումով նման էին խորհրդային համակարգին:

Jehovah's Witnesses Community in Armenia as a Refuge of Soviet Reality

Following the collapse of the Soviet ideological and political system, Russian-speaking people in Armenia, including refugees from Azerbaijan, faced a new social reality. Russian lost its status as the dominant and prestigious language. Armenian was considered of paramount importance in the new ideological settings, while Russian was often viewed as the "language of the colonizers." Russian-speaking people lost their social standing that was buttressed by their proficiency in Russian. Not only did they often lose their employment, but they lost the source of symbolic capital associated with speaking Russian because in the new Armenian-centered world, only Armenian language and being Armenian were considered a legitimate source of symbolic capital. Disappointed with the new socio-political and ideological system, many Russian-speaking people found refuge in the community of Jehovah's Witnesses, with its numerous Russian congregations. The Russian congregation offers meetings and Bible studies in Russian and generally attaches value to one's ability to speak Russian, which restores a sense of linguistic and social normalcy. Importantly, the members of the Russian congregation proselytize to the Russian-speaking population. This engenders a sense of importance and irreplaceability because every congregation has its linguistic niche in public ministry – without Russian-speaking Jehovah's Witnesses a significant portion of the Armenian population and tourists would remain without the Good News. Therefore, the community of Jehovah's Witnesses revalidates the importance of Russian as a valuable cultural tool and restores the social respect associated with it. As such, for many Russian-speaking people, the community of Jehovah's Witnesses serves as a conservation area for the Soviet social world where they regain their social standing and self-esteem based on their proficiency in Russian.

Սոնա Մնացականյան

Սոնա Մնացականյանը դոկտորանտ-ուսանող է Հումբոլդտի համալսարանի Սլավոնական լեզուների և գրականությունների ֆակուլտետում, ինչպես նաև Բեռլինի ազատ համալսարանի Ֆրիդրիխ Շլեգելի անվան գրականագիտության բարձրագույն դպրոցում: Նա հետազոտում է Երևան քաղաքը որպես ազգային հիշողության բազմաշերտ տարածք, որտեղ նշանակալի ներկայություն ու ազդեցությունն ունի խորհրդային ժամանակաշրջանում ձևավորված հայ գրականության կանոնը: Սոնա Մնացականյանի ուսումնասիրությունը մաս է կազմում (Հետ)Խորհրդային գրական կոսմոպոլիս հետազոտական նախագծի, որը ֆինանսավորվում է Գերազանցության կլաստեր 2020 - Ժամանակավոր համայնքներ. գրականությունը գլոբալ դիտանկյունից ծրագրի կողմից: Նա սովորել է նաև ԵՊՀ-ի Հայ բանասիրության բակալավրիատում և մագիստրատուրայում:

/

Sona Mnatsakanyan

Sona Mnatsakanyan is a doctoral candidate at the Department of Slavonic Languages and Literatures (Humboldt University, Berlin), supervised by Professor Susanne Frank. As a Ph.D. candidate, she is a member of the Friedrich Schlegel Graduate School of Literary Studies, doing research at the Cluster of Excellence Temporal Communities for the project (Post-)Soviet Literary Cosmopolis. Her research examines the city of Yerevan as a palimpsest of national memory, with a particular focus on the literary canon that was largely shaped during the Soviet era. Sona Mnatsakanyan got both her bachelor's and master's degrees in Armenian Studies from the State University of Armenia in Yerevan.

Մարտահրավեր սոցիալիստական ռեալիզմի գեղագիտությանը. ոչ-մարդկային գործորդների պատկերումը Մկրտիչ Արմենի «Երևան» վեպում (1931)

Մկրտիչ Արմենը սովետահայ այն գրողներից է, որ ենթարկվել է ստալինյան բռնաճնշումների և ութ տարի անցկացրել սիբիրյան աքսորում: Նրա՝ 1931-ին հրատարակած «Երևան» վեպը առաջիններից մեկն էր, որ հայտնվեց արգելված գրքերի շարքում: «Երևան» վեպը գրվել է այսպես կոչված «կառուցումի վեպերի» համատեքստում, որոնք խնդիր ունեին ներկայացնելու հին աշխարհի տրանսֆորմացիան ու նոր սոցիալիստական աշխարհի կառուցումը սովետական աշխատավորների ու մտավորականության ջանքերի շնորհիվ: Մկրտիչ Արմենի վեպը ներկայացնում է Երևանի կառուցումը, դրա վերափոխումը նախամոդեռնից մոդեռն սովետական քաղաքի: Վեպի բովանդակության հիմնական առանցքը երկու ճարտարապետների կամ մեկ ճարտարապետի երկու եսերի միջև եղած մեծ անհամաձայնությունն է նոր քաղաքի տեսլականի շուրջ: Թեև նրանց մրցակցությունը ներկայացվում է զուտ որպես աշխարհայացքային բախում, այն է՝ Արևելքն ընդդեմ Արևմուտքի, այն արտացոլում է նաև կոնստրուկտիվիստների և ստալինյան նեոկլասիցիզմի պաշտպանների մրցակցության դիսկուրսը: «Երևանն» արձագանքում է նաև իր ստեղծման ժամանակաշրջանում գրական դաշտում ծավալվող բուռն բանավեճերին, որոնք վերաբերում էին հեղափոխված իրակա-

նությունն արտահայտելու համապատասխան գեղարվեստական ձևեր ու էսթետիկա գտնելուն: Վեպը գրելիս Մկրտիչ Արմենը դեռևս այս քննարկումների հոսքի մեջ էր և անկեղծորեն փորձում էր առավելագույն կերպով նպաստել պրոլետարական գրականության ստեղծմանը: Բայց ինչո՞վ էր պայմանավորված վեպն արգելելու որոշումը հրապարակումից անմիջապես հետո՝ 1932թ.-ին:

Այս զեկույցում վերլուծելու եմ «Երևան» վեպը՝ հղում կատարելով գործորդ-ցանց [Actor-Network] տեսությանը: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս մի կողմից քննարկել վեպի «ոճային սայթաքումները», որոնք չէին կարող համապատասխանել սոցիալիստական ռեալիզմի չափանիշներին, մյուս կողմից՝ թույլ է տալիս հարցադրել մարդկային հաղթանակի գաղափարը բնության կամ առարկայական աշխարհի հանդեպ, որն ակտիվորեն քարոզվում էր սովետական իրականությունում:

A Challenge to the Aesthetics of Socialist Realism: The Imagery of Non-Human Actors in Mkrtich Armen’s Novel Yerevan

Mkrtich Armen was an example of a Soviet Armenian author whose work and activity earned him the criticism of Soviet censorship and subsequently led him to exile in Siberia. His most provocative work, inviting the attention of critics and interrogators was Yerevan, a novel published in 1931. Yerevan was written in the context of a series of construction novels, which were supposed to reflect on building a socialist new world and the transformation of the old one through the labor of Soviet workers and intelligentsia. The novel tells the story of the construction of the city of Yerevan and its transformation from a premodern to a modern Soviet city. The novel’s plot revolves mainly around the disputes of two architects, which in addition to being professional, are also disputes of fundamentally different worldviews, that is East vs. West or Constructivism vs. Stalinist neoclassicism. Yerevan also echoes the heated debates of its time over finding corresponding ways of expressing revolutionized reality in Soviet art. Armen was still engaging in these discussions and was genuinely trying his best to contribute to the creation of Proletarian art. So what was the reason for banning the novel in 1932, shortly after its publication? My paper will discuss Armen’s novel through the lens of actor-network theory. This approach will enable me to demonstrate the “stylistic lapses” of Yerevan not fitting into the criteria of Socialist realism, and moreover questioning the ideology of human victory over nature and the objective world.

Քնար Աբրահամյան

Քնար Աբրահամյանը (Եյլի համալսարանի Երաժշտության տեսության դոկտոր) երաժշտագետ է, ով ուսումնասիրում է մշակութային արտադրանքի պատմական ու քաղաքական բարդ հարաբերությունը։ Նրա առաջիկա գիրքը՝ «Օպերան Խորհրդային Հայաստանում և Ղազախստանում որպես պետությունը կառավարող միջոց», վերամտածում է խորհրդային երաժշտության պատմությունը՝ վերլուծելով պետության և նրա էթնիկ և ռասայական «ուրիշների» միջև ուժային դինամիկան։ Այն ուսումնասիրում է օպերան՝ որպես մի վիճելի կայսերական տարածք, որի միջոցով խորհրդային պետությունը մշակութային արդիականացման քողի տակ գաղութային հպատակություն էր հետապնդում։ Աբրահամյանը հանդես է եկել մի շարք հայտնի ազգային և միջազգային գիտաժողովներում, իսկ խորհրդային երաժշտության և քաղաքականության վերաբերյալ նրա աշխատանքները տպագրվել են DSCH ամսագրում և «Վերլուծական մոտեցումներ 20-րդ դարի ռուսական երաժշտությանը» ժողովածուում։ Նա ստացել է Ֆուլբրայթի գիտահետազոտական կրթաթոշակ Մոսկվայում, ինչպես նաև Մետրոպոլիտեն օպերայի կրթության բաժնի կրթաթոշակ (հովանավորվում է Եյլի շրջանավարտների կրթաթոշակակային ծրագրի կողմից) և Հարավային Կովկասի ամերիկյան հետազոտական ինստիտուտի գիտահետազոտական կրթաթոշակ (ֆինանսավորվում է ԱՄՆ Պետդեպարտամենտի կրթական և մշակութային հարցերի բյուրոյի կողմից)։

Knar Abrahamyan

Knar Abrahamyan (Ph.D., Music Theory, Yale University) is a music scholar whose work examines the historical and political entanglements of cultural production. Her forthcoming book, Opera as Statecraft in Soviet Armenia and Kazakhstan, re-envisions Soviet music history by analyzing the power dynamics between the state and its ethnic and racial Others. It explores opera as a contested imperial space through which the Soviet state pursued colonial subjugation under the guise of cultural modernization. Abrahamyan has presented at major national and international conferences, and her work on Soviet music and politics appeared in the DSCH Journal and a collected volume, Analytical Approaches to 20th-Century Russian Music. She is a recipient of a Fulbright Research Fellowship in Moscow, the Metropolitan Opera Education Department Fellowship (sponsored by the Yale Graduate Impact Fellowship Program), and the American Research Institute of the South Caucasus Research Fellowship (funded by the US Department of State’s Bureau of Educational and Cultural Affairs).

Անդրեյ Բիտովի «Հայաստանի դասերը»՝ որպես պաշտոնական խորհրդային Երևանի կոնտրտեքստ

1967 թվականի սեպտեմբերին Անդրեյ Բիտովը (1937–2018) ճամփորդում է Խորհրդային Երևան՝ այցելելու իր ընկերոջը՝ հայ գրող Հրանտ Մաթևոսյանին (1935–2002) և «Դրուժբա նարոդով» հանդեսի պատվերով ստեղծագործություն գրելու քաղաքի մասին: Բիտովն իր տասնօրյա ճամփորդությունն ամփոփում է «Հայաստանի դասերը» վերնագրով աշխատության մեջ, որը նա կառուցում է «տարրական դպրոցի» դասագրքի դասերի տրամաբանությամբ՝ առանձնացնելով լեզու, պատմություն, աշխարհագրություն և քաղաքաշինություն: Դասերի բաժանելով՝ նա անդրադառնում է ազգային սահմաններին, բնական հուշարձաններին, Հայոց ցեղասպանությանը, քաղաքային ճարտարապետությանը և տեղական մշակույթին: «Դասերը» առաջին անգամ տպագրվել է 1969 թվականին «Դրուժբա նարոդով» հանդեսում, այնուհետև վերատպվել է մի քանի անգամ, մասնավորապես որպես 1976 թվականի «Ճամփորդությունների գրքի» (The Book of Travels) մաս: Երբ Բիտովը նվիրում էր իր ընկերներին այդ գրքի օրինակներից, միշտ վերնագրին ավելացնում էր՝ «ըստ կայսրության» («по империи»). համարձակ մի ժեստ, որը ճանաչում էր Խորհրդային Միությունը որպես Ռուսական կայսրության ժառանգորդ: Բիտովը Ալեքսանդր Պուշկինի «Ճանապարհորդություն դեպի Էրզրում» գրքից արված բնաբանի օգնությամբ «Դասերը» տեղադրում է 19-րդ դարի կովկասյան կայսերական ճանապարհորդական նոթերից սերած գրական գործերի ծիրում: Թեև նրա ստեղծագործությունն ակնհայտորեն չէր պաշտպանում Խորհրդային Հայաստանի անկախության գաղափարը, այն, այնուամենայնիվ, խարխլում էր կայսերական տիրապետության գաղափարները՝ ընդգծելով ռուսական և հայկական մշակույթների տարբերություններն ու անհամատեղելիությունը: Այս հոդվածը պնդում է, որ «Դասերը» կայսերական քննադատություն է և հզոր կոնտրտեքստ Երևանի՝ որպես ժամանակակից, առաջադեմ մայրաքաղաքի մասին պաշտոնական խորհրդային պատումին: Բիտովի տեքստը երկխոսության մեջ դնելով Երևանի մասին տարբեր պատմությունների, օրինակ՝ Աբիգ Ավագյանի (1919–1983) «Մեր քարոտ թաղամասը» պատմվածքի հետ (Nash kamenistyi kvartal, 1961 թ.), ուսումնասիրում եմ երկու հիմնական թեմա՝ քաղաքաշինության (gradostroitel'stvo), պատմության և հիշողություն միջև հարաբերությունները, ինչպես նաև կայսերական նուրբ քննադատությունը, որը բխում է նրա՝ քաղաքը ներսից և դրսից փորձառելուց: Եվ վերջապես, այս հոդվածը նպատակ ունի լույս սփռել խորհրդային հայրենիքի գաղափարի վրա՝ որպես մի առանձնահատուկ տիպի տարածության, որը փոխկապակցված էր բրեժնևյան ժամանակաշրջանի Խորհրդային Միությունում էթնիկության և ազգության մասին եղած հասկացությունների հետ:

Andrei Bitov's Uroki Armenii as a Countertext to the Official Soviet Yerevan

In September 1967, Andrei Bitov (1937–2018) traveled to Soviet Yerevan to visit his friend, the Armenian writer Grant Matevosyan (1935–2002), and to produce a piece about the city commissioned by Druzhba narodov. Bitov documented his ten-day trip in a work titled Uroki Armenii (Lessons of Armenia), which he structured as a textbook with

“elementary school lessons” on topics including language, history, geography, and city building. Subdividing each lesson, he reflected on national borderlands, natural landmarks, the Armenian Genocide, city architecture, and local culture. First published in 1969 in Druzhba narodov, Uroki was reprinted several times, most notably as part of Kniga puteshestvii in 1976 (The book of journeys). When sharing copies of this collected volume with his friends, Bitov would add to the title “po imperii”—a daring gesture that recognized the Soviet Union as an heir to the Russian Empire. With an epigraph from Alexander Pushkin’s Puteshestvie v Arzrum, Bitov positioned Uroki as part of the genealogy of nineteenth-century Caucasian imperial travelogues. Though his work did not explicitly entertain the idea of Soviet Armenia’s independence, it nonetheless unsettled ideas of imperial domination by foregrounding differences and incompatibility of Russian and Armenian cultures. This paper argues that Uroki presents an imperial critique and a potent countertext to the official Soviet narrative about Yerevan as a modern, progressive capital. Placing Bitov’s text in dialogue with various accounts of Yerevan, such as Abig Avagyan’s (1919–1983) short story from “Our Stone Quarter” (Nash kamenistyi kvartal, 1961), I examine two central themes: the relationship between urban planning (gradostroitel’stvo), history, and memory; and the subtle imperial critique that emerges from his experience of the city’s inside and outside. Ultimately, this paper seeks to illuminate the notion of a Soviet homeland as a peculiar space that had a bearing on concepts of ethnicity and nationhood in the Brezhnev-era Soviet Union.

Տիգրան Սիմյան

Ներկայումս Տիգրան Սիմյանը ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի պրոֆեսոր է: Նրա մասնագիտական հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում է գերմանական գրականության պատմություն, մշակույթի, կինոյի նշանագիտություն, քաղաքային հետազոտություններ և հումանիտար մեթոդների պատմություն: Նա «Նշանագիտություն և քննադատություն» հանդեսի գիտական խորհրդի (2016 թվականից), ինչպես նաև PRAXEMA տեսողական նշանագիտության ամսագրի խմբագրական խորհրդի անդամ է: Նա 2015 թվականից նշանագիտության գերմանական գիտական ընկերության անդամ է: Որպես հետազոտող բազմիցս ստացել է DAAD և KAAD կրթաթոշակ: Ավելի քան 120 գիտական հրապարակումների հեղինակ է (Scopus, WoS):

Tigran Simyan

Tigran Simyan is currently a professor at the YSU Faculty of European Languages and Communication, and researcher in History of German Literature, Semiotics of Cultures, Urban Studies (City in Literature and City as Text), and History of Humanitarian Methods. He lectures in History of German Literature, Semiotics and Theory of Communications, and Theory of Literature. He is a member of the Scientific Council of "Semiotics and Critiques" since 2016, and since 2015 "Praxema" Journal of Visual Semiotics and associated member of the German Scientific Society of Semiotics. As a researcher, he is a three-time DAAD and one-time KAAD scholarship recipient. He has over 120 scientific publications, including in international journals. His research has always centered on the analysis of literature and culture as sign systems.

Արտավազդ Փելեշյանի ֆիլմերը որպես խորհրդային, ազգային և վերազգային ինքնության և հիշողության «կոնվերտորներ»

Զեկույցում նախևառաջ ուշադրություն է դարձվելու Ա. Փելեշյանի «հեռավորության (դիստանցիոն) մոնտաժի» վրա, որն իր տեսական հիմնավորումն է գտել խորհրդային կինոյի տեսության (Էյզենշտեյն, Վերտով) դրույթների հիման վրա փելեշյանական «Հեռավորության մոնտաժ կամ հեռավորության տեսություն» (1971) տեսական աշխատության մեջ: Հետազոտության մեջ ցույց կտրվի նաև, թե ինչպես է այս նորարական կինոլեզուն կերտում (խորհրդային) հայ ինքնությունը: Բացի այդ՝ տեսողական շարակարգի հիման վրա առանձին ներկայացվելու է ոչ միայն խորհրդային, այլ նաև ազգային ինքնության կերտման միավորները: Փելեշյանի խորհրդային և ազգային ինքնությունը իր կինոպատումներում վերլուծվելու է վերազգայնության (տրանսնացիոնալիզմի) համատեքստում: Հիշողությունը դառնում է ազգային, երբ գիտակցությունը իրականությունը ռացիոնալ է ընկալում և տեղի է ունենում անցում ցիկլայինից (դիցաբանական) գծային (ռացիոնալ) ժամանակի: Ժամանակի գծային ընկալումը ձևավորում է ազգային և խորհրդային «մենք»-ը, կոնկրետ տարածությունը, իսկ ցիկլայինի դեպքում՝ վերազգայինը, տրանսնացիոնալը (պատերազմ vs խաղաղություն, քաոս vs կառուցում և այլն):

Այսպիսով՝ փելեշյանական վավերագրական ֆիլմերում վերազգային, խորհրդային և ազգային հիշողությունը ներկայացվելու է եռանդամ համադրության մեջ: Առանձին քննության նյութ են դառնալու ազգային, խորհրդային, վերազգային հիշողության միավորները՝ արտահայտության (նշանակիչներ) և բովանդակության (նշանակյալներ) պլանում:

Artavazd Peleshyan’s Films as Converters of Soviet, National (and Transnational) Identity and Memory

The author will focus on Artavazd Peleshyan’s Distance Montage, which found its theoretical grounding in the theoretical work of Distance Montage or Theory of Distance (1971), based on the development of the theory of Soviet cinema (Sergei Eisenstein, Dziga Vertov, etc.). The study will also show how this innovative film language creates (Soviet) Armenian identity. In addition, it will be presented separately on the basis of the visual narrative of not only Soviet but also national identity formation. The Soviet and national identity of Peleshyan will be analyzed in the context of transnationalism. Memory becomes a national trait when consciousness perceives reality rationally; there is a transition from cyclic (mythological) to linear (rational) time. The perception of linear time forms a national and Soviet “we,” a concrete physical space, and in the case of cyclical - supranational, transnational (war vs peace, chaos (destruction) vs space (renewal), etc.). Thus, in Peleshyan’s documentaries, the supranational, the Soviet and the national memory will be presented in ternary opposition. A separate object of analysis will be the units of national, Soviet, and supranational memory in terms of expression (signifier) and content (signified).

Էվիյա Հովհաննիսյան

Էվիյա Հովհաննիսյանը սոցիալական մարդաբան է: Նա սովորել է Երևանի պետական և Սանկտ Պետերբուրգի Եվրոպական համալսարաններում: 2019 թ. սեպտեմբերից Էվիյան համակարգում է Հայնրիխ Բյոլ հիմնադրամի երևանյան գրասենյակը: Նրա հետազոտական շրջանակները ներառում են ինքնությանը, ազգայնականությանն ու էթնոքաղաքական կոնֆլիկտներին, ինչպես նաև փախստականության խնդիրներին առնչվող թեմաներ: Էվիյան մի շարք հայերեն և այլալեզու գիտական հոդվածների հեղինակ է:

Eviya Hovhannisyan

Eviya Hovhannisyan graduated from European University at Saint-Petersburg and holds a master's degree in Social Anthropology. She also completed the master's program in Medieval Studies at Yerevan State University. Currently, she is project coordinator at the Yerevan branch of the Heinrich Böll Foundation South Caucasus regional office. Before joining the Heinrich Boell Foundation, Eviya worked at the Institute of Ancient Manuscripts - Matenadaran and at the Centre for Independent Social Research in Saint-Petersburg. Eviya's research interests lie in the intersection of memory studies, nationalism and conflict studies, migration and refugee studies, as well as gender studies. She is the author of a number of articles on gender, migration, and issues of nationalism, as well as a scientific editor of the book Shushi: Mental Maps.

«Իջևան-Դիլիջան բարեկամության կառույց». ուշխորհրդային շրջանի Հայաստանի երկաթգծային համակարգի մարդաբանական հետազոտություն

Ենթակառուցվածքների անցկացումը պատմականորեն ունեցել է տարածքի կառավարումը համակարգելու և ենթակայեցնելու հիմնային նպատակ: Դրա հետ մեկտեղ այն մեծապես նպաստել է երկաթուղային ցանցի շուրջ գոյություն ունեցող համայնքների և այդ ցանցից օգտվող կամ ցանցը սպասարկող պետությունների սոցիալ-մշակութային կապերի զարգացմանը: Այդպիսով՝ երկաթուղու Իջևան-Դիլիջան ճյուղավորման շինարարությունը առաջնահերթություն չի եղել Խորհրդային Հայաստանի համար: Այն կառուցվել է Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանի այն մտայնության արդյունքում, որ նման մասշտաբային կառույցը Հայաստան կբերի զգալի թվով շինարարական տեխնիկա, շինանյութ, մասնագետներ և, հետևաբար, նաև նոր մասնագիտացումներ տեղի բնակչության համար և վերջիվերջո՝ խոշոր չափի ֆինանսական ներդրումներ: Նա բնավ միամիտ չէր: Երկաթուղու այս գծի կառուցման ընթացքում և հաշվին զգալիորեն կառուցապատվեցին շրջակա գյուղերը և քաղաքները: Իջևան-Դիլիջան երկաթուղու կառուցման մեջ ներգրավված են եղել մի քանի տասնյակ հազար աշխատողներ ԽՍՀՄ-ի բոլոր ծայրերից: Շինարարության վրա ծախսվել է շուրջ 350 մլն. ռուբլի գումար: Ընդհանուր հաշվարկներով նախագծումն ու շինարարությունը տևել են շուրջ 15 տարի՝ 1971-1986 թթ..: Բարդ աշխարհագրական տեղանքի պատճառով երկաթուղու այս

հատվածն ամբողջությամբ բաղկացած է թունելներից, կամուրջներից, հողային ծավալուն լիցքերից, լեռնազանգվածների հարթեցումներից և այլ ինժեներական լուծումներից: Իջևան-Դիլիջան երկաթուղային ճյուղավորման կառուցումն ավելի երկար է տևել, քան դրա շահագործումը: 1986 թվականի օգոստոսի 9-ին Իջևանից Դիլիջան է ուղևորվել առաջին գնացքը. երթի տևողությունը՝ 55 րոպե: 1994 թվականին երկաթուղու Կույբիշևո (ներկայիս՝ Հաղարծին) կայարանի հատվածում հողաշերտի փլուզում է տեղի ունեցել, որի արդյունքում երկաթգծի 1.5 կմ հատվածը դարձել է անօգտագործելի: Այդ պահից սկսած երկաթուղին դադարել է գործել... Ներկա ուսումնասիրության հիմնական հարցադրումը հետևյալն է՝ ինչպե՞ս է Իջևան-Դիլիջան երկաթգծի կառուցումը ուշ խորհրդային շրջանում ազդել դրա երկայնքով մեկ գոյություն ունեցող բնակավայրերի բնակչության առօրյա կյանքի վրա, ի՞նչ սոցիալ-մշակութային և տնտեսական փոփոխություններ է այն ներմուծել, ի՞նչ տեղային ու համապետական քաղաքականություն էր այն հետապնդում: Տվյալ (դեռևս պիլոտային) հետազոտության համար ես օգտվել եմ միջգիտակարգային մեթոդաբանության գործիքակազմից՝ համադրելով մարդաբանական (հարցազրույցներ) և պատմագիտական (արխիվային, գրադարանային) ուսումնասիրության մոտեցումները:

“Ijevan-Dilijan Friendship Construction:” Anthropological Research on the Armenian Railway System in the Late Soviet Period

The construction of the Ijevan-Dilijan railway line was not a priority for Soviet Armenia. It was built as a result of the fact that Anton Kochinyan, First Secretary of the Armenian Communist Party, was convinced that such a large-scale project would bring a significant amount of construction equipment, building materials and specialists to Armenia, which would mean new professions for the local population and, eventually, a large financial investment. He was not naive. Through the construction of the railway line, the surrounding villages and towns experienced significant development. The project involved several tens of thousands of workers from all over the USSR. Some 350 million roubles were spent on the construction. The entire design and construction took about 15 years, from 1971 to 1986. Due to the difficult topographical relief, the railway consists entirely of tunnels, bridges, extensive earth embankments, and other engineering solutions. It has also been in construction for longer than it has been in operation. On August 9, 1986, the first train left Ijevan for Dilijan; the journey time was 55 minutes. In 1994, a soil collapse occurred at the Kuibishevo railway station (now Haghartsin), rendering a one and a half kilometer section of the railway inoperable. Since that incident, the railway has ceased functioning. The main questions of this study are as follows: How did the construction of the Ijevan-Dilijan railway in the late Soviet period affect the everyday life of the population living along it? What socio-cultural and economic changes did it cause and what local and national policies did it pursue? For this (pilot) study I used the tools of an interdisciplinary methodology, combining anthropological (interviews) and historical (archival, bibliographic) research approaches.

Մարիա Գունկո

Մարիա Գունկոն Օքսֆորդի համալսարանի Միգրացիոն հետազոտությունների բաժնի ասպիրանտ է։ Նա «Հիլլ» հիմնադրամի կրթաթոշակառու է. Հայաստանում նրա դոկտորական հետազոտությունն ու դաշտային աշխատանքները ERC-ի կողմից ֆինանսավորվող «ԴԱՏԱՐԿՈՒԹՅՈՒՆ. կենդանի կապիտալիզմ և ժողովրդավարություն հետսոցիալիզմից հետո» ծրագրի մաս են։ Մարիան 2012 թվականին ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի «Մարդկային աշխարհագրություն» բաժնի մագիստրատուրան, իսկ 2015 թվականին՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի աշխարհագրության ինստիտուտի ասպիրանտուրան։ 2015 թվականին որպես այցելու-գիտաշխատող եղել է Լայպցիգում (Գերմանիա) Լայբնիցի անվան տարածաշրջանային աշխարհագրության ինստիտուտում, որտեղ աշխատել է Լայբնից ասոցիացիայի կողմից ֆինանսավորվող ira.urban Քաղաքային վերակազմակերպումները հետխորհրդային տարածքում նախագծի վրա։ Իսկ 2019 թվականին որպես այցելու կրթաթոշաշակիր եղել է Université Paris 1 Pantheon-Sorbonne-ի (Ֆրանսիա) Աշխարհագրության ինստիտուտում. այս այցն իրականացվել է Մոսկվայում Ֆրանսիայի դեսպանատան կազմակերպած «Bourses Metchnikov» ծրագրով, որը տրամադրում է կարճաժամկետ դրամաշնորհներ՝ նպաստելու ակադեմիական շարժունակությունը։

Maria Gunko

Maria Gunko is a DPhil Candidate in Migration Studies at the University of Oxford. She holds a Hill Foundation Scholarship, and her doctoral research and fieldwork in Armenia are a part of the ERC-funded project “EMPTINESS: Living Capitalism and Democracy after Postsocialism.” Maria obtained an MSc in Human Geography from the Moscow Lomonosov State University in 2012 and a Russian postgraduate degree, Candidate of Sciences in Human Geography, from the Institute of Geography Russian Academy of Sciences in 2015. She was a Visiting Fellow at the Leibniz Institute for Regional Geography in Leipzig (Germany) in 2015, working on the ira.urban project Urban Reconfigurations in Post-Soviet Space, funded by the Leibniz Association. Furthermore, her Visiting Fellowship at the Institute of Geography, Université Paris 1 Panthéon-Sorbonne (France) in 2019 was supported by the “Bourses Metchnikov” Embassy of France in Moscow’s short-term academic mobility grant.

Մթությունից ծնված դատարկություն. Հայաստանի «մութ ու ցուրտ տարիների» ենթակառուցվածքային ժառանգությունը

Կապիտալի կողմից արժեզրկված և զարգացող պետության կողմից լքված փոքր քաղաքները տարբեր երկրներում, որոնք կազմում էին երբեմնի Խորհրդային Միությունը, գնալով դատարկվում են՝ կորցնելով մարդկանց, ենթակառուցվածքները և բարեկեցությունը (Զենովսկա, 2020)։ Կենտրոնական Ասիայում և Կովկասում այս դատարկությունը նաև դաժան հակամարտությունների արդյունք է, որը նպաստել է դրանց կործանմանը և «ապաարդիականացմանը» (Rabkin & Minakov, 2018)։ Անկախացումից հետո Հայաստանը մեծ էներգետիկ ճգնաժամ

ապրեց, որն ուղղակիորեն կապված էր հետխորհրդային կարգերի վերադասավորման և Ադրբեջանի հետ պատերազմի հետ։ 1992–1995թթ.. ժամանակաշրջանը ստացել է «Մութ տարիներ» էմիկական ձևակերպումը։ Երկիրը, որի բնակչությունը հպարտանում էր կենսամակարդակով, և որտեղ անկախությունը ողջունվում էր հորդառատ լավատեսությամբ (Suny, 1993), մտավ «նախաարդիական դար»։ Էլեկտրաէներգիայից, ջեռուցումից և հաճախ հոսող ջրից զրկված մարդիկ ապրում էին մոմերի աղոտ լույսի տակ և կերակուր եփում փայտե վառարանների թույլ բոցի վրա։ Հայաստանում խորհրդային կարգերի ձևավորած ենթակառուցվածքների փլուզումն էականորեն արտացոլում էր խորհրդային պետության հզորության, արդիականության և դրանց ձևավորած կյանքերի դինամիկ ոչնչացումը (Humphrey, 2002)։ Այս զեկույցում համառոտ անդրադարձ կկատարեմ առաջացած խնդիրների հաղթահարման մեխանիզմներին և հայկական փոքր քաղաքում «Մութ տարիներին» ձևավորված համերաշխությանը՝ ուշադրության կենտրոնում ունենալով նյութական և ոչ նյութական ժառանգությունները, որոնք շարունակում են դիսկուրսներ ձևավորել (ձախողված) ենթակառուցվածքների մասին։ Զեկույցը հիմնված է բանավոր պատմությունների, արխիվային նյութերի և մասնակիցների դիտարկումների վրա։

Emptiness Conceived in Darkness: Infrastructural Legacies of the "Dark Years" in Armenia

Devalued by capital and abandoned by the developmental state, small towns across countries that used to constitute the Soviet Union are increasingly becoming empty: losing people, infrastructures, and welfare (Dzenovska, 2020). In Central Asia and the Caucasus, this emptiness is also an outcome of violent conflicts that contributed to their ruination and "demodernization" (Rabkin & Minakov, 2018). In the wake of its independence, Armenia experienced a major energy crisis due to the post-Soviet reordering and war with Azerbaijan. The period of 1992–1995 gained an emic name of the "dark years," or mut tariner in Armenian. The country, whose population prided itself on living standards and where independence was greeted with overflowing optimism (Suny, 1993), hurtled into the "pre-modern age." Deprived of electricity, heat, and oftentimes running water, people lived by dim candlelight and cooked food over small flames of wooden stoves. The collapse of Soviet-made infrastructures in Armenia materially reflected the dynamic unmaking of the Soviet state's power, modernity, and the lives that they sustained (Humphrey, 2002). This contribution will briefly discuss the emerged coping mechanisms and solidarities in a small Armenian town during the "dark years," focusing on their tangible and intangible legacies that continue to frame discourses about (failed) infrastructures. It draws on oral histories, archival materials, and participant observation.

Լորի Խաչատուրյան

Լորի Խաչատուրյանը Կոռնելի համալսարանի Մերձավոր Արևելքի ուսումնասիրությունների և մարդաբանության դոցենտ է։ Նա իր հետազոտություններում օգտագործում է հնագիտության և ազգագրության մեթոդները՝ ուսումնասիրելու իմպերիալիզմը, կործանումը, արդիականությունը, ինչպես նաև մարդկանց, նյութական աշխարհի, առարկաների ու լանդշաֆտների հարաբերությունները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով Հայաստանին և Հարավային Կովկասին։ Նա հեղինակել է «Կայսերական բաներ. հնագույն Պարսկաստանն ու կայսրությունների հնագիտությունը» (2016) գիրքը և բազմաթիվ հոդվածներ Կովկասի, Անատոլիայի և Իրանի հնագիտության և մարդաբանության վերաբերյալ, որոնք հայտնվել են այնպիսի ամսագրերում, ինչպիսիք են Cultural Anthropology, American Journal of Archaeology և Antiquity։ Խաչատուրյանը նաև ուսումնասիրում է մշակութային ժառանգությունը և հակամարտությունները. նա նաև Caucasus Heritage Watch-ի համահիմնադիրն ու համատնօրենն է։

Lori Khatchadourian

Lori Khatchadourian is Associate Professor of Near Eastern Studies and Anthropology at Cornell University. Her research uses the methods of archaeology and ethnography to study imperialism, ruination, modernity, and the relations between people and the material world of objects and landscapes, with a particular focus on Armenia and the South Caucasus. She is author of Imperial Matter: Ancient Persia and the Archaeology of Empires (2016) and numerous articles on the archaeology and anthropology of the Caucasus, Anatolia, and Iran which have appeared in such journals as Cultural Anthropology, American Journal of Archaeology, and Antiquity. Dr. Khatchadourian also researches cultural heritage and conflict, and is co-founder and co-director of Caucasus Heritage Watch.

Ապահամայնականության աղետը. անտեր սեփականությունը և չարաշահման իրավունքը

Հայաստանում խորհրդային արդյունաբերական ավերակներն ունեն դրսևորման տարբեր ձևեր՝ արտացոլելով «ավերակների տնտեսության» բազմազան գործառույթները։ Շատ դեպքերում խորհրդային ավերված գործարանները պաշտպանված են մասնավոր սեփականությամբ. սեփականատերերը հաստատում են իրենց սեփականության իրավունքները ահռելի ցանկապատերի, կողպեքների, տեսախցիկների, պահակների և շների միջոցով։ Սակայն այլ դեպքերում սեփականաշնորհված խորհրդային գործարանների պարիսպները թափանցելի են, իսկ շահագործումից հանված խորհրդային գործարանները բաց են և հասանելի բոլորի համար՝ ակտիվներ դուրս բերողներից և քաղաքային հետազոտողներից մինչև հովիվներն և նրանց հոտը։ Նման դեպքերում սեփականատերերը կարծես թե հրաժարվում են սեփականության իրավունքից։ Նրանք հրաժարվում են այն հատուկ սեփականության իրավունքից, որը մեզ հայտնի է հռոմեական քաղաքացիական իրավունքից որպես «չարաշահողի իրավունք». այն է՝ իրավունք ոչնչաց-

նել, ապամոնտաժել, վերացնել։ Երբ Հայաստանում խորհրդային գործարանների սեփականատերերը հրաժարվում են սեփականությունից արժեք ստեղծելու պարտականությունից, հրաժարվում են նաև չարաշահումների իրավունքից։ Ըստ օրենքի՝ մասնավոր, բայց գործնականում լքված նման գույքը ինձ տեղեկություններ տրամադրողները բնութագրում են որպես «անտեր»։ Սեփականությունը, որը մասնավոր է, բայց «անտեր», իրենից ներկայացնում է ոչ միանշանակ գույքային պայման, որը չի տեղավորվում սեփականության մասին գերակշռող պատկերացումների մեջ, ինչպես պահանջում է պետությունը, շուկան կամ այսպես կոչված համայնքը։ Ես պայմանականորեն սեփականության նման կարգավիճակն անվանում եմ «ապահամայնականություն»։ «Ապահամայնականության» դեպքում բոլորի կողմից ենթադրվում է չարաշահման իրավունքը, քանի որ սեփականությունը անտեր է կամ իրականում (նույնիսկ եթե ոչ իրավականորեն) սեփականատեր չունի։ «Ապահամայնականության» ողբերգությունը վերաբերում է նման իրավիճակների հետևանքով առաջացած վնասներին։ Այս հոդվածը զարգացնում է չարաշահումների և «ապահամայնականության» իրավունքի հայեցակարգը՝ հիմնվելով Հայաստանի խորհրդային արդյունաբերական ավերակներում իմ հնագիտական և ազգագրական դաշտային աշխատանքների վրա՝ օգտագործելով Գյումրու մսի կոմբինատի օրինակը։ Հենց ապահամայնականության ողբերգությունն է ստեղծում Հայաստանում 20-րդ դարի հնագիտական պատմությունը։

The Tragedy of the Uncommons: Ownerless Property and the Right of Abusus

Soviet industrial ruins in Armenia take many forms, reflecting the diverse workings of the ‘ruins economy.’ In many cases, ruinous Soviet factories are protected private property; owners assert their property rights through a formidable assemblage of fences, locks, cameras, guards and dogs. But in other instances, the enclosure of privatized Soviet factories is permeable, and decommissioned Soviet factories are open and accessible to all – from asset strippers and urban explorers to shepherds and their flock. In such cases, owners appear to relinquish their property rights. They give up a specific property right known to us from Roman civil law as the ‘right of abusus’ – the right to destroy, to dismantle, to dispose. When owners of Soviet factories in Armenia abdicate the duty to create value from property, they also renounce the right of abusus. My informants describe such property, which is private by law but practically abandoned, as ‘anter’ (անտեր). Property that is private but ‘anter’ introduces an ambiguous property condition that does not fit within prevailing conceptions of property as either claimed by the state, or by the market, or by the ‘commons.’ I tentatively call such a property condition an ‘uncommons.’ In an uncommons, the right of abusus is assumed by all because property is ‘anter,’ or effectively (even if not legally) ownerless. The tragedy of the uncommons refers to the harms that result in such situations. This paper develops the concept of the right of abusus and the uncommons based on my archaeological and ethnographic fieldwork in Armenia’s Soviet industrial ruins, using the example of the Gyumri Meat Kombinat. It is the tragedy of the uncommons that is producing the archaeological record of the 20th century in Armenia.

Լիլիթ Տեր-Մինասյան

Լիլիթ Տեր-Մինասյանը 1989-ին ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետաշինարարական ֆակուլտետը՝ ստանալով ճարտարապետի մասնագիտություն։ Որպես ճարտարապետ աշխատել է «Հայպետնախագիծ» և «Հայգյուղշիննախագիծ» ինստիտուտներում։ 2007-ից մինչ օրս աշխատում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտում։ Որպես ճարտարապետ մասնակցել է «ArAGATS», Ակնաշեն, Կառնուտ, Լոռի բերդ, Թեղուտ և այլ հնագիտական արշավախմբերի աշխատանքներին։

Lilit Ter-Minasyan

Lilit Ter-Minasyan graduated from the Yerevan Polytechnic Institute, Department of Architecture in 1989. She has worked as an architect in the ”ArmStateDesign” and ”Armenian Agro-Project” design institutes, and participated in archaeological expeditions in Aragats, Aknashen, Karnut, Lori, Teghut, and other regions. Since 2007, she has worked at the National Academy of Sciences of the Republic of Armenia Institute of Archeology and Ethnography.

Կոմմունա-տների կառուցման հայկական փորձը. սոցիալական էքսպերիմենտների և ճարտարապետության խաչմերուկում

Կոմմունա-տները նոր կազմավորված ԽՍՀՄ-ում իրականացվող «սոցիալիստական վերաբնակեցման» լայնամասշտաբ ծրագրի բաղադրիչներից էր։ Նոր հասարակարգի ձևավորման համար անհրաժեշտ էին ընդհանուրի գիտակցություն ունեցող մարդիկ։ Հենվելով մարքսիստական «կեցությունն է որոշում գիտակցությունը» թեզի վրա, առաջարկվում էր էապես փոխել կեցության պայմանները։ Կոմմունա-տներում մարդը անհատական տարածքից բերվում էր հանրային տարածք։ Բնակելի համալիրները ներառում էին ճաշարան, բաղնիք, ակումբ և այլն։ Անձնական տարածքը հիմնականում նախատեսվում էր գիշերային հանգստի համար։ Կենցաղի կազմակերպման առումով կոմմունա-տները մոտ են որևէ գաղափարի շուրջ համախմբված կոլեկտիվ կենցաղով ապրող համայնքների բնակատեղիներին (հավատացյալների խմբեր, կիբուցներ, քոհաուզինգ, էկոգյուղեր)։ Կոմմունա-տներ են կառուցվել ԽՍՀՄ-ի բազմաթիվ քաղաքներում. նրանց հեղինակների թվում են խորհրդային ավանգարդ ճարտարապետության վառ ներկայացուցիչներ։ Հայաստանում կոմմունա-տներ են նախագծել ճարտարապետներ Միքայել Մազմանյանը և Կարո Հալաբյանը։ 1929 թվականին նրանք նախագծել են կոմունա-տուն Մեխանիկական գործարանի բանվորների համար, որը չի իրականացվել։ 1930-ին նախագծել են կոմմունա-տուն Երգէս-ի աշխատակիցների համար։ Համալիրից իրականացվել է միայն մի բնակելի շենք, որը ներկայիս Պարոնյան 7 հասցեում գտնվող «շախմատաձև» տունն է։ Երկու նախագծերում էլ ճարտարապետները օգտագործել են Արարատյան դաշտավայրի ժողովրդական տներին բնորոշ էլեմենտներ՝ պատշգամբ, հարթ տանիք։ Երգէս-ի աշխատողների համար կոմմունա-տան կառուցումը դադարեցվել է, քանի որ

1930-ի մայիսի 16-ին ԽՍՀՄ Կոմկուսի կենտկոմը ուտոպիստական և վնասակար է համարել կոմմունա-տների կառուցումը։ Սոցիալական էքսպերիմենտն ընդհատվել է, ինչպես և ընդհատվել են ավանգարդ ճարտարապետության որոնումները, որոնք, սակայն, որոշակի ազդեցություն են թողել ճարտարապետության հետագա զարգացման վրա։

The Armenian Experience of Building House-Communes: At the Intersection of Social Experiments and Architecture

House-communes were one of the components of the large-scale program of “socialist resettlement” in the newly formed USSR. For the formation of a new social system, people with collective consciousness were needed. Based on the Marxist theory of “social being determines consciousness,” it was proposed to significantly change the conditions of being. In house-communes, a person was taken out of the private space and placed into the public space. Residential complexes included dining rooms, bathhouses, clubhouses, etc. Private spaces were primarily intended for nighttime recreation. In terms of the organization of everyday life, communes are similar to the residences of communities living collectively around a common idea (groups of believers, kibbutzim, cohousing, ecovillages). House-communes were built in many cities of the USSR, with many of their designers among the eminent representatives of Soviet avant-garde architecture. In Armenia, house-communes were designed by the architects Mikael Mazmanyan and Karo Halabyan. In 1929, they designed a house-commune for the workers of the Mechanical Factory, which was not implemented. In 1930, they designed a house-commune for the employees of the Yerevan Hydroelectric Power Plant. Only one residential building was completed.

Էջեմ Սարըչայըր

Էջեմ Սարըչայըրը Կոռնելի համալսարանում ճարտարապետության պատմության և քաղաքային զարգացման ծրագրի ասպիրանտ է։ Նրա ատենախոսությունը նվիրված է 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի սկզբի Հարավային Կովկասի արվեստին, ճարտարապետությանն ու քաղաքաշինությանը։ Նա ուսումնասիրում է Օսմանյան և Ռուսական կայսրությունների կայսերական նախագծերը, Թուրքիայի և Խորհրդային Միության ազգաստեղծ ծրագրերն ու տարածաշրջանի բնակիչների նյութական և մտավոր տարբեր արձագանքները կառուցված միջավայրի փոփոխություններին։ Նրա հետազոտությանն աջակցում են Էնդրյու Մելլոն հիմնադրամը, Կանադայի ճարտարապետության կենտրոնը և Սոցիալական գիտությունների հետազոտական խորհուրդը։

Ecem Saricayir

Ecem Sarıçayır is a Ph.D. Candidate in the History of Architecture and Urban Development program at Cornell University. Her dissertation focuses on art, architecture, and urbanism in the South Caucasus from the late 19th to early 20th century. She investigates the imperial projects by the Ottoman and Russian Empires; the nation-building projects of Turkey and the Soviet Union; and the diverse material and intellectual responses by the region's inhabitants to changes in the built environment. Her research is supported by the Andrew Mellon Foundation, the Canadian Center of Architecture, and the Social Science Research Council.

Անցումային ճարտարապետները. նոր հայկական ճարտարապետությունը վաղխորհրդային ժամանակաշրջանում

Ավելի քան մեկ դար անց խորհրդահայ ճարտարապետների առաջին սերնդի թողած ժառանգությունը դեռևս որոշիչ դեր ունի հայկական քաղաքային ճարտարապետության իդեալականացված կերպարի ընկալման գործում։ Հայկական ճարտարապետության վերաբերյալ գիտական աշխատություններն ավանդաբար կենտրոնացած են միջնադարի վրա։ Այնուամենայնիվ, հազվադեպ է ուսումնասիրվում, թե ինչպես են ճարտարապետության մեջ միջնադարյան այս ձևերն ընդունվել խորհրդահայ ճարտարապետների առաջին սերնդի կողմից։ Օրինակ՝ այդ ժամանակաշրջանում քաղաք-պարտեզի մասին տարածված գաղափարից ազդված, Ալեքսանդր Թամանյանի և Նիկոլա Բունիաթովի՝ 1924 թվականի Երևանի քաղաքաշինական հատակագիծը ներառում էր միջնադարյան ճարտարապետության հնագիտական վայրերին բազմաթիվ հղումներ։ Այսպիսով, միջնադարի վրա այս ավանդական կենտրոնացումը կարծես ստվերում է հայոց պատմության ավելի կարևոր կողմը. խորհրդահայ ճարտարապետների առաջին սերնդի ճարտարապետական արտադրության ձևավորման վրա խորապես ազդել է նաև ժամանակակից քաղաքականությունը։ Սույն աշխատությունն անդրադառնում է այս բացին՝ ուսումնասիրելով կայսերական Ռուսաստանի վերջին շրջանի ու Խորհրդային Միության սկզբնական տարիների ճարտարապետների ստեղծած՝ այսպես կոչված նեո-հայկական ճարտարապետությունը։ Տարիքային, կրթական

և դասակարգային առումով բավականին տարասեռ լինելով, նրանք կոսմոպոլիտ ճարտարապետների այն անցումային սերունդ էին, ովքեր կողմնորոշվեցին և արձագանքեցին փոփոխվող քաղաքական հիպոթեզերին և սոցիալ-տնտեսական նոր պայմաններին։ Համադրելով հնագիտական զեկույցները, հայ ճարտարապետության պատմության և տեսության տեքստերը և 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի գծանկարները՝ ես նրանց դիտում եմ նույն համատեքստում նոր բացահայտված միջնադարյան Անի քաղաքի, հարավկովկասյան ճարտարապետության ու Երևանի ճարտարապետական կառույցների վերաբերյա նրանց ընհանուր տեսակետների ու այդ ժամանակաշրջանում փոփոխվող քաղաքական և տնտեսական պայմանների հետ։ Այս աշխատությունը նպաստում է Հայաստանում խորհրդային ժառանգության մասին քննարկմանը՝ ուսումնասիրելով ուշ կայսերական ժամանակաշրջանում ձևավորված վաղ խորհրդային ճարտարապետությունը։

Architectures of Transition: The New Armenian Architecture in the Early Soviet Union

More than a century later, the legacy of the first generation of Soviet Armenian architects still determines the idealized image of Armenian urban architecture. The scholarship on Armenian architecture traditionally focused on the medieval period. However, it is rarely studied how these medieval forms were taken up in architecture by the first generation of Soviet Armenian architects. For example, influenced by the popular idea of the garden city during the period, Aleksandr Tamanyan and Nikolaĭ Buniatov's 1924 urban plan of Yerevan included many references to the archeological sites of medieval architecture. Thus, this traditional focus on medievalism obscures an even more important facet of Armenian history: the architectural production of the first generation of Soviet Armenians was deeply shaped by contemporary politics as well. This paper addresses this gap by investigating the so-called neo-Armenian architecture practiced by the last imperial Russian and first Soviet generation of Armenian architects in the early years of the Soviet Union. Rather heterogeneous in terms of age, education, and class, they were a transitional generation of cosmopolitan architects who navigated and responded to a changing political conjecture and new socioeconomic conditions. Bringing together archeological reports, texts of history and theory of Armenian architecture, and drawings from the late 19th and the early 20th century, I contextualize their encounter with the medieval city Ani, views of the wider South Caucasus architecture, and architectural works in Yerevan with the changing political and economic conditions during their practices. As such this paper contributes to the discussion about the Soviet legacy in Armenia through a study of the early Soviet architecture that emerged during the late imperial period.

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

CONFERENCE ORGANISING COMMITTEE

Հրանուշ Խառատյան, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի առաջատար գիտաշխատող, Կիրառական ազգագրության գիտահետազոտական խմբի ղեկավար

Hranush Kharatyan, PhD in History, Senior Researcher at the Department of Cultural Anthropology at the Institute of Archaeology and Ethnography NAS RA, Director of the Applied Anthropology program

/

Գայանե Շագոյան, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի առաջատար գիտաշխատող

Gayane Shagoyan, PhD in History, Senior Researcher at the Department of Cultural Anthropology at the Institute of Archaeology and Ethnography NAS RA

Գոհար Ստեփանյան, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող

Gohar Stepanyan, PhD in History, Senior Researcher at the Department of Cultural Anthropology at the Institute of Archaeology and Ethnography NAS RA

/

Հասմիկ Կնյազյան, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի կրտսեր գիտաշխատող

Hasmik Knyazyan, Junior Researcher at the Department of Cultural Anthropology at the Institute of Archaeology and Ethnography NAS RA

/

Լիլիթ Ղազարյան, Լոս Անջելեսի Կալիֆորնիայի Համալսարանի (UCLA) Մարդաբանության ֆակուլտետի ասպիրանտ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի կրտսեր գիտաշխատող

Lilit Ghazaryan, PhD Candidate in Anthropology at UCLA, Junior Researcher at Department of Cultural Anthropology at the Institute of Archaeology and Ethnography NAS RA, Adjunct Faculty at American University of Armenia

/

Արա Սանջյան, Միջին Արևելքի արդի պատմության դոկտոր, Միչիգանի համալսարանի Դիրբորնի մասնաճյուղի պատմության դասախոս և Հայագիտական հետազոտությունների կենտրոնի վարիչ

Ara Sanjian, PhD in Modern History of the Middle East, Associate Professor of History, Director of the Armenian Research Center at the University of Michigan-Dearborn

/

Վահե Սահակյան, ս.գ.թ., Մերձավոր Արևելքի ուսումնասիրությունների դոկտոր, Միչիգանի համալսարանի Դիրբորնի մասնաճյուղի Հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող-հետազոտող

Vahe Sahakyan, Ph.D. in Near Eastern Studies, Senior Research and Information Resources Specialist at the University of Michigan-Dearborn Armenian Research Center